

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>


Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԳՈՂԱՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՐԵՒԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ
ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԺԸ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ



*Նվիրվում է անվանի հայագետ, կովկասագետ
Պավել Չորանյանի (1947-2017 թթ.) հիշատակին*



NATIONAL ACADEMY OF SCIENCES REPUBLIC OF THE RA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

GOHAR MKHITARYAN

**TNE ADMINISTRATIVE POLITICAL
FORMATIONS IN TRANSCAUCASIA IN THE
SECOND HALF OF THE 18TH CENTURY**

YEREVAN
“GITUTYUN” PUBLISHING OF NAS RA
2018

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՈՂԱՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՐԵՒԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ
ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԺԸ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

ԵՐԵՒԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

Մ 793

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ՝ պատ. գիտ. դոկտորներ

Ա. Հակոբյան, Զ. Կոստիկյան

Գրախոսներ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. **Գ. Ստեփանյան,**

պատմ. գիտ. թեկն. դոց. **Է. Զոհրաբյան**

Գոհար Մխիթարյան

Մ 793 Արևելյան Այսրկովկասի վարչաքաղաքական կազմավորումները ԺԸ դարի երկրորդ կեսին – Եր.: «Գիտություն» հրատ., 2018, 150 էջ:

Մենագրության մեջ հանգամանորեն քննվում են ԺԸ դարի երկրորդ կեսի Արևելյան Այսրկովկասի խանությունների ձևավորման գործընթացը եւ էթնո-դավանական պատկերը: Տարաբնույթ աղբյուրների հիման վրա բացահայտվում եւ նորովի են լուսաբանվում խաների խուսանավելու քաղաքականությունը Իրանական տերության, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների նկատմամբ: Վերլուծվել է Այսրկովկասում Ռուսաստանին հակազդելու խնդրում Իրանական եւ Օսմանյան տերությունների քաղաքականությունը խանությունների նկատմամբ: Նորովի են մեկնաբանվել Ռուսական կայսրության կովկասյան քաղաքականությունը ռուս-իրանական և ռուս-թուրքական ռազմաքաղաքական, առևտրա-տնտեսական շահերի համատեքստում: Աշխատության մեջ առանձնակի տեղ է հատկացված ռուս-իրանական հակամարտության խնդրում խանությունների քաղաքական դիրքորոշմանը:

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8080-1358-2

© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2018

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գոհար Ժորայի Մխիթարյանի «Արևելյան Այսրկովկասի վարչաքաղաքական կազմավորումները ԺԸ դարի երկրորդ կեսին» խորագիրը կրող աշխատությունը բոլորովին թարմ և նոր խոսք է երկրամասի պատմության խորագնա հետազոտության տեսանկյունից: Այն թեմատիկ առումով հայրենական պատմագիտության մեջ սպասված գործերից է, որի նշանակությունը դուրս է գալիս զուտ պատմաճանաչողական շրջանակներից, ընդգրկելով գործնական-քաղաքական խնդիրների մի շարք հրատապ, նորովի հարցադրումներ: Վերջիններիս կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Արևելյան Այսրկովկասում ուղիղ հարյուր տարի առաջ 1918 թ. գոյացավ արհեստածին «Ադրբեջան» անունով մի պետություն, որն այսօր պատմության կեղծարարության ճանապարհով ճգնում է «հիմնավորել» թե՛ նախկինում, թե՛ այսօր հարևան երկրների տարածքների ու մշակույթների նկատմամբ իր անթաքույց զավթողական գործողությունների արդարացիությունը և ագրեսիվ հավակնությունների իրավագորությունը: Սույն աշխատասիրությունն, իրավամբ, ոչ միայն ծանրակշիռ վերլուծական հետազոտություն է հայրենական պատմագիտության մեջ, այլև գիտականորեն հիմնավորված պատասխան ադրբեջանական ստահող այն քարոզչության, որ Արևելյան Այսրկովկասում, իբր թե 1918 թ. Վերականգնվել են Ադրբեջանական պետականության ավանդույթները:

Աշխատության պատմագիտական արժեքն ամենից առաջ նրանում է, որ հեղինակը պատմական անհերքելի փաստերի հիման վրա, համազիչ կերպով ցույց է տալիս, թե ինչպես Ասիան Եւրոպային կապող Այսրկովկասյան պարանոցը քաղաքակրթական տարաբնույթ արժեհամակարգերի բախման և տևական փոխազդեցությունների պայմաններում վերածվել է մի տարածագոտու, որտեղ խայտաբղետ էթնիկ նկարագիրը, դավանամշակութային առանձնահատկությունները, քաղաքական անընդ-

մեջ վայրիվերումները իրենց խոր հետքն են թողել տեղական ժողովուրդների քաղաքական կողմնորոշումների, նրանց պատմական զարգացման գործընթացների վրա:

Հեղինակը միաժամանակ կատարել է նուրբ դիտարկում, որ Այսրկովկասի պատմական բնականոն զարգացման ընթացքը խաթարվեց այստեղ քոչվոր անասնապահական թուրքական ցեղերի ներթափանցման և ստվարացման հետևանքով, ովքեր հետագայում, 18-րդ դարի վերջերին և ողջ 19-րդ դարում ապրում էին էթնիկ խճապատկերի պարզեցման ժամանակաշրջան փոփոխության ենթարկելով երկրամասի ժողովրդագրական, դավանական, սոցիոմշակութային պատկերը:

Գ. Մխիթարյանը հարուստ աղբյուրագիտական հենքի վրա, փաստարկված ցույց է տալիս Իրանում, մասնավորապես, Նադիր շահից հետո ծավալված ներքաղաքական կյանքի փոթորկահույզ խմորումներն ու գահի համար անզիջում պայքարը, որոնք նպաստավոր եղան Արևելյան Այսկովկասում, շահական Իրանի ենթակայության ներքո մի քանի վարչաքաղաքական կազմավորումների հանդես գալու համար: Իրանին ենթակա այս խանություններն, իբրև վարչաքաղաքական նոր միավորներ, պատմական քաղաքական պատեհության շնորհիվ ինքնուրույն գործելու որոշ հնարավորություններ ստացան:

18-րդ դարի երկրորդ կեսին բուռն իրադարձություններով, մրցակից տերությունների³ Ռուսական կայսրության, Օսմանյան Թուրքիայի, Շահական Իրանի և տեղական տիրակալների անընդմեջ ռազմական բախումներով, երկրամասի ժողովուրդների հակասական, իրարամերժ կողմնորոշումներով ու գործողություններով հագեցած այս պատմափուլը շրջադարձային եղավ Արևելյան Այսրկովկասում իրանական ազդեցության թուլացման և թուրքական ազդեցության ուժեղացման ճանապարհին, որում էական դերակատարում ունեցավ ցարական Ռուսաստանը:

Հեղինակը հիմնախնդիրը մատուցել է համապարփակ, ամբողջության, լայն ընդգրկման մեջ ներառելով թեմային առնչվող հարցերի լայն շրջանակ, որոնց վերաբերյալ կատարել է ինքնատիպ դատողություններ: Նմանօրինակ մոտեցումը հեղինակին պարտադրել է կատարել, դրվատանքի արժանի, մեծ ծավալի

հետազոտական աշխատանք, որն ակնհայտորեն նկատելի է թե աշխատանքի շարադրանքի բովանդակությունից, թե օգտագործված աղբյուրների ու գրականության ընդարձակ, ծավալուն ցանկից, որի մեջ զգալի տեղ է զբաղեցնում օտարալեզու գրականությունը:

Մենագրությունը գերազանցապես շարադրված է վավերագրական նյութերի հետազոտության ու վերլուծության հիման վրա:

Հեղինակին հաջողվել է վեր հանել թեման և ներկայացնել պահանջվող գիտական մակարդակի չափանիշներով: Աշխատանքի կառուցվածքը կարելի է համարել հղկված:

Աշխատանքի կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ ատենախոսը փորձել է նորովի ներկայացնել պատմագիտական և քաղաքական նշանակություն ունեցող խնդրո առարկան:

Պատմ. գիտ. թեկ. դոցենտ

*Էդուարդ
Զոհրաբյան*

ԱՌԱՋԱԲԱՆ

Արեւելյան Այսրկովկասի¹ վարչաքաղաքական միավորների՝ խանությունների ԺՇ դ. երկրորդ կեսի պատմության ուսումնասիրությունը կարելուք գիտական նշանակություն ունի տարածաշրջանում պատմական, ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, էթնո-դավանական պատկերն առավել խոր եւ համակողմանի ընկալման ու ժամանակակից խեղաթյուրումների բացահայտման տեսանկյունից:

Մենագրության մեջ արխիվային նյութերի եւ ԺՇ դարի սկզբնաղբյուրների քննության միջոցով նորովի են մեկնաբանվել Արեւելյան Այսրկովկասի խանությունների ձեւավորման գործընթացը: Թեմայի ուսումնասիրությունը փաստում է, որ ադրբեջանական պատմագիտության հայեցակարգը, համաձայն որի ԺՇ դ. երկրորդ կեսին այդ խանությունների միջեւ ավատատիրական պայքարը դիտարկվում էր որպէս «Հյուսիս-արեւելյան Ադրբեջանի» հողերի իբրեւ թե քաղաքական մեկ կենտրոնի շուրջը միավորման գործընթաց², իսկ «Ղուբայի խանություն» եզրույթը փոխարինվում էր «Հյուսիս-արեւելյան Ադրբեջանի պետություն»-ով³, ամենեւին չի համապատասխանում պատմական իրականությանը: Մինչդեռ ԺՇ դ. երկրորդ կեսին ռուսական կառավարության պաշտոնական գրագրության մեջ Արեւելյան Այսրկովկասը «Ադրբեջան» եզրույթով, իսկ նրա կառավարիչներին «ադրբեի-

¹ Արեւելյան Այսրկովկաս եզրույթը ԺՇ դ. երկրորդ կեսին ներառում էր Բուն Աղվանքի (Կուրից հյուսիս) տարածքների Դերբենդի, Ղուբայի, Շաքիի, Շամախիի, Բաքվի խանությունների պատմա-աշխարհագրական սահմանները: «Այսրկովկաս», «Անդրկովկաս», «Հարավային Կովկաս», եզրույթների մասին տե՛ս N. Gvosdev, *Imperial policies and perspectives towards Georgia, 1760–1819*, New York, 2000, p. XI.

² Տե՛ս, օր.՝ Գ. Абдуллаев, *Азербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией*, Баку, 1965, с. 4.

³ Նույն տեղում, էջ 5:

ջանական խաներ»⁴ կոչելը «գուտ տուրք էր պարսից հիշողությանը»⁵: Խոսքը Սեֆյան պետության չորս (Իրաք, Ֆարս, Ազարբայջան եւ Խորասան) վարչական ու ֆինանսական միավորներից մեկի՝ Ազարբայջանի (կենտրոնը՝ Թավրիզ) մասին է՝ որն իր մեջ էր միավորում Չուխուր-Սաադի, Ղարաբադի եւ Շիրվանի բեկլարբեկությունները⁷: Ասվածի համատեքստում է նաեւ ԺԸ դ. երկրորդ կեսի վավերագրերում խանությունները եւ նրանց քաղաքները «պարսկական» կոչելը⁸: Օսմանյան Աբդուլ Համիդ Ա սուլթանը (1774-1789 թթ.) նույնպես Այսրկովկասը շարունակում էր կոչել «Ադրբեջան», իսկ նրա խաներին՝ «ադրբեջանական խաներ» եզրույթով⁹: Ավելին, 1796 թ. կոմս Վ. Ջուբովի գլխավորած Կասպիական արշավանքի մասնակից ռուսական բարձրաստիճան զինվորականները նախկին Շիրվանի բեկլարբեկության տարածքը կոչում էին «Հարավային Դաղստան» (Ղուբայի եւ Դերբենդի ներառմամբ)¹⁰ կամ «Դաղստանյան Պարսկաստանի Հյուսիսային եւ Հարավային մասեր» (Դերբենդի, Ղուբայի,

⁴ С. Бурнашев, Описание областей Адребиджанских в Персии и их политического состояния, Курск, 1793, с. 4-5.

⁵ Հմմ. Պ. Չոբանյան, Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006, էջ 34:

⁶ Tadhkirat al-muluk: A Manual of Safavid Administrati-ագալոն. (circa 1137/1725). Persian text in faqsimile (B. M. Or. 9496). Translated and explained by V. Minorsky, London, 1943, p. 162.

⁷ Նույն տեղում, էջ 164-168:

⁸ РГВИА ф. 52, оп 1/194, д. 270, л. 41 об.

⁹ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի եւ Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին (Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Կովկասում եւ մասնավորապես պատմական Հայաստանում XVI դ. երկրորդ կեսից), թուրքական պատմագիտությունը սկզբից մինչեւ XVIII դարի վերջերը, հտ. Ա, Կազմեց՝ Ա. Խ. Սաֆրաստյան, Եր., 1961, էջ 229:

¹⁰ Ф. Симонович, Описание Южного Дагестана. 1796 г., – История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. М. О. Косвена и Х. М. Хашаева, Москва, 1958 (հետալսյալի՝ ИГЭД), с. 138.

Շաքիի, Շամախիի, Բաքվի եւ Սալխանի ներառմամբ)¹¹ եզրույթներով:

Մեր աշխատության շրջանակներում բազմաբնույթ աղբյուրների համադրությամբ վեր է հանվել եւ ամբողջացվել տարածաշրջանի էթնո-քաղաքական պատկերը: ԺԸ դարի ընթացքում Արեւելյան Այսրկովկասի խանությունների բնիկ ժողովուրդները՝ հայերը, հրեաները, պարսիկները (հետագայում կոչված թաթեր) եւ Բուն Ադուանք – Ալբանիա տարածքի ժողովուրդներից լեզգիներն ու լեզգիախոս փոքր ազգությունները շարունակում էին այստեղ դերակատարում ունենալ:

ԺԸ դարի երկրորդ կեսին տպագիր սկզբնաղբյուրներում եւ պաշտոնական գրագրություններում հանդիպող «թաթարներ» եւ «պարսիկներ» էթնիկական անվանումների նույնացումն այսօրվա ընկալմամբ «ադրբեջանցիների» հետ չի համապատասխանում պատմական իրականությանը: Դիտարկվող ժամանակահատվածում ադրբեջանական ժողովրդի էթնոհամախմբումը (էթնոկոնսոլիդացիան) դեռ չէր սկսվել եւ գտնվում էր իր սուբստրատային ձեւավորումների փուլում: Հետեւաբար ԺԸ դարի երկրորդ կեսին Արեւելյան Այսրկովկասի տարածքում «ադրբեջանական» էթնոս Ի դարի քաղաքական ընկալմամբ գոյություն ունենալ չէր կարող:

Մեր ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ թեեւ Սեֆյան շահերի վարած վերաբնակեցման քաղաքականության հետեւանքով Այսրկովկասի էթնո-դավանական պատկերը փոփոխվում էր հոգուտ մահմեդականների, այդուհանդերձ Արեւելյան Այսրկովկասի խանությունների պատմա-մշակութային անցյալը հնուց ի վեր բնիկ քրիստոնյա տարրի գերակայության մասին էր վկայում: Ուստի, այն դրույթը, թե ԺԸ դարի երկրորդ կեսին «Հյուսիս-արեւելյան Ադրբեջանի միավորումը» տեղի էր ունենում էթնիկապես միատարր բնակչության (իմա՝ «ադրբեջանցիներ») ներսում, որն ուներ միասնական տարածք, լեզու եւ մշակույթ, իսկ «ադրբեջանական հողերի» միավորումը Ղուբայի

¹¹ А. Серебров, Историко-этнографическое описание Дагестана. 1796 г., – ИГЭД, с. 173.

խանության շուրջ նպաստելու էր «ազգային պետության» ստեղծմանը, չի համապատասխանում տարածաշրջանի պատմական եւ էթնո-քաղաքական իրական պատկերին:

Մենագրությունում տարատեսակ աղբյուրների օգտագործմամբ հանգամանորեն ներկայացվում է Իրանական պետության, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների միջեւ ընթացող ռազմաքաղաքական մրցակցությունը Արեւելյան Այսրկովկասի խանություններում տիրապետող դիրք ձեռք բերելու համար: Այդ մրցապայքարում առանձնահատուկ տեղ ունեւ Ռուսական պետությունը, որի կառավարող շրջանակները շրջադարձ էին կատարել դեպի Պյոտր Ա-ի արեւելյան քաղաքականությունը: ԺԸ դարի երկրորդ կեսը մի ժամանակաշրջան էր, երբ Ռուսաստանը հետեւողականորեն իրականացնում էր նվաճողական քաղաքականություն դեպի Կովկասյան լեռնապարը: Ռուսական իշխող շրջանակների մշակած ռազմավարության համաձայն՝ այդ նվաճողական շարժման վերջնանպատակն էր լինելու ողջ Հարավային Կովկասի նվաճումը եւ պետական սահմանի հաստատումը Կուր-Արաքս-Ախուրյան ջրբաժան գծի վրա:

Աշխատանքում լուսաբանվել է Արեւելյան Այսրկովկասում Ռուսաստանին հակազդելու խնդրում Իրանի տերության եւ Օսմանյան կայսրության քաղաքականությունը խանությունների նկատմամբ:

Մենագրության շրջանակներում բազմաբնույթ աղբյուրների եւ գրականության օգտագործմամբ քննության է ենթարկվել խանությունների քաղաքական ռազմավարությունը Իրանի տերության, Օսմանյան եւ Ռուսական կայսրությունների նկատմամբ: Օգտվելով Իրանում ծայր առած միջավատական երկպառակություններից, բախումներից, այսրկովկասյան խանությունները ձգտում էին ինքնազլխության եւ կարողացել էին ձեռք բերել գրեթե կիսանկախ կարգավիճակ: Քաղաքական այդ վիճակի պահպանումը եւ անվտանգության ապահովումը ստիպում էր խանություններին դիմել Իրանի տերության, Օսմանյան եւ Ռուսական կայսրությունների միջև խուսանավելու քաղաքականությանը: Ավելին, Արեւելյան Այսրկովկասի խանություններում իրանական դրամահատության քաղաքականությանը հետեւելը

դիվանագիտական քայլ էր տարածաշրջանում ռազմաքաղաքական նկրտումներ ունեցող Օսմանյան եւ Ռուսական կայսրությունների նկատմամբ:

Խորհրդային տարիներին Արեւելյան Այսրկովկասի եւ Ռուսաստանի հարաբերությունների պատմությամբ, թեպետեւ կողմնակալ գնահատականներով, հիմնականում զբաղվել են ռուս եւ ադրբեջանցի պատմաբանները: Արեւելյան Այսրկովկասի խանությունների եւ Ռուսաստանի հարաբերությունների ԺԸ դարի պատմության առանձին հարցերի լուսաբանմանն անդրադարձել են խորհրդային պատմաբաններ Վ. Լեւիատովը¹², Օ. Մարկովան¹³, Գ. Աբդուլլաեւը¹⁴, Ջ. Մուստաֆաեւը¹⁵: Արեւելյան Այսրկովկասի ԺԸ դարի երկրորդ կեսի քաղաքական պատմությունը որոշ կողմնակալ մեկնաբանություններով է ներկայացված «Ադրբեջանի միացումը Ռուսաստանին» ծավալուն աշխատության մեջ: Ըստ նրա՝ Արեւելյան Այսրկովկասի համար օրհասական 1790-ական թվականներին խանությունների միակ էլքը՝ «փրկությունը», Ռուսաստանին միացումն էր¹⁶:

Արեւելյան Այսրկովկասի խանությունների ԺԸ դարի 80-ական թթ. քաղաքական իրադարձություններին է անդրադառնում նաեւ Աբգար Հովհաննիսյանը «Ռուսաստանը եւ հայ ազատագրական շարժումը ԺԸ դարի 80-ական թվականներին» աշխատության մեջ: Հեղինակն արխիվային եւ անտիպ այլ սկզբնաղբյուրների հիման վրա լուսաբանել է Ռուսաստանի եւ Այսրկովկասի պատմության մի

¹² В. Левиатов, Очерки из истории Азербайджана в XVIII веке, Баку, 1948.

¹³ О. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966.

¹⁴ Г. Абдуллаев, Из истории Северо-Восточного Азербайджана в 60-80-х гг. XVIII в., Баку, 1958; նույնի՝ Азербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией, Баку, 1965.

¹⁵ Дж. Мустафаев, Северные ханства Азербайджана и Россия (конец XVIII – начало XIX в.), Баку, 1989.

¹⁶ Присоединение Азербайджана к России и его прогрессивные последствия в области экономики и культуры (XIX – начало XX вв.), Под ред. А. Гулиева, В. Мочалова, Баку, 1955, с. 19.

շարք հիմնահարցեր՝ շեշտը դնելով հայ ազատագրական շարժման դրվագների վրա¹⁷:

Մենագրությունն իր բովանդակությամբ, հարցադրումներով եւ վերլուծություններով հայրենական պատմագիտության մեջ առաջին հետազոտությունն է, որում փորձ է արվում արխիվային նյութերի, սկզբնաղբյուրների եւ տարալեզու գիտական գրականության օգտագործմամբ համալիր եւ անկողմնակալ հետազոտել նաեւ Արեւելյան Այսրկովկասի վարչաքաղաքական միավորների ԺԸ դարի երկրորդ կեսի պատմությունը: Հետազոտության սկզբնաղբյուրներ են ծառայել արխիվային նյութերը՝ անտիպ փաստաթղթեր, վավերագրեր եւ ձեռագրեր, ինչպես նաեւ տպագիր սկզբնաղբյուրները: Արխիվային սկզբնաղբյուրները վեր են հանվել Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) ձեռագրական եւ արխիվային հավաքածուներից, Կաթողիկոսական դիվանի հայերեն եւ ռուսերեն վավերագրերից: Օգտագործվել են Ռուսաստանի պետական ռազմապատմական (РГВИА) եւ հին ձեռագրերի (РГАДА) արխիվներում պահվող փաստաթղթերը, որոնք պարունակում են ռուս բարձրաստիճան պաշտոնյաների, զինվորականների գրագրությունները այսրկովկասյան խաների եւ տիրակալների հետ, հյուպատոսների զեկուցագրերը խանությունների քաղաքական վիճակի մասին:

Թեմայի ուսումնասիրության առումով ուշագրավ վավերագրեր են պարունակում նաեւ Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության արխիվի (АВПРИ) «Ռուսաստանի հարաբերությունները Պարսկաստանի հետ» եւ «Ռուսաստանի հարաբերությունները Վրաստանի հետ» հավաքածուների նվիրված Ռուսաստանյան դիվանագիտական առաքելության եւ ռուսական արտաքին գերատեսչության միջեւ նամակագրությանը, հաղորդագրություններ եւ զեկուցագրեր:

¹⁷ А. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1947; վերահրատարակություն՝ Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1990. Տե՛ս նաեւ Թեմայի վերաբերյալ հեղինակի մյուս հիմնարար մենագրությունը՝ Иосиф Эмин, Ер., 1989.

Արխիվային նյութերի շարքում առանձնակի ուշադրության է արժանի Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղի արխիվի (СПФ АРАН) Պ. Բուսկովի անձնական անտիպ ձեռագրական աշխատանքների ֆոնդում պահվող Ալ. Սուվորովի ձեռագիրը (№ 99), որը հաղորդում է խանությունների քաղաքական պատմության կարեւոր մանրամասներ, ինչպես նաև նկարագրություններ եւ տեղեկություններ¹⁸:

Վավերագրերի տպագիր ժողովածոներից օգտագործվել են Ռուսական կայսրության օրենքների լիակատար ժողովածոն¹⁹, Հնագրական հանձնաժողովի կողմից 12 հատորով վավերագրերի հրատարակությունը (Ա. Բերժեի խմբագրությամբ)²⁰, Պետական խորհրդի արխիվի Ա եւ Բ հատորները²¹ եւ Ա. Ցագարելիի ջանքերով հրատարակված «Հրովարտակներ»-ի ժողովածոն²², Ռուսական կայսերական պատմական ընկերության ժողովածոյի²³ եւ «Դիւան Հայոց պատմութեան» շարքի որոշ հատորներ²⁴:

¹⁸ «Бумаги героя Суворова 1780 и 1783 года, в бытность его в Астрахани и на Кубани, о Персии и Кавказе», – СПФ АРАН, ф. 99, оп. 2, № 13.

¹⁹ Полное Собрание Законов Российской Империи (հետաշյունի՝ ПСЗРИ). Собрание I, 1649-1825 гг., Под ред. М. М. Сперанского, СПб., 1830, т. VII, XXI, XXIII, XXIV, XXV, т. XVI, т. XXXII.

²⁰ Акты, собранные Кавказскою археографическою комиссиею, Под ред. Ад. Берже, Тифлис, 1866-1904 (հետաշյունի՝ АКАК).

²¹ Архив Государственного совета, Под ред. Н. В. Калачова, П. М. фон Кауфмана, И. А. Чистовича, Г. Ф. Штендмана и др., в 5-и тт., 12-и чч., СПб., 1869-1904 (հետաշյունի՝ АГС), т. I, Совет в царствование императрицы Екатерины II, 1768-1896 гг., СПб., 1869; т. II, Совет в царствование императора Павла I, 1796-1801 гг., СПб., 1888.

²² Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, Под ред. А. А. Цагарели, т. I, СПб., 1891; т. II, СПб., 1902.

²³ Сборник Императорского русского исторического общества (հետաշյունի՝ СИРИО), т. 27, СПб., 1880; т. 42, СПб., 1885; т. 47, СПб., 1885; т. 135, СПб., 1911.

²⁴ Դիւան Հայոց պատմութեան, Հրատարակեց՝ Գիւտ քահ. Աղանեանց, Գիրք Ա-Բ (1780-1834), Թիֆլիս, 1893; Գիրք Գ, մասն Բ, Միմեռն կաթո-

Թեմայի ուսումնասիրության ընթացքում փաստաթղթային հարուստ նյութեր են օգտագործվել Ս. Ներսիսյանի, Վ. Գամրեկելու, Վ. Հաջիեի, Վ. Մաճարաձեի խմբագրություններով²⁵, 1950-1990-ական թթ. հրատարակված տպագիր սկզբնաղբյուրների ժողովածուներից:

Արեւելյան Այսրկովկասի ԺԸ դարի 50-70-ական թթ. քաղաքական պատմության եւ էթնո-դավանական պատկերի մի շարք հիմնահարցերի լուսաբանմամբ աչքի են ընկնում Գիտությունների կայսերական ակադեմիայի (Մանկտ Պետերբուրգ) գիտական արշավախմբերի ղեկավարներ Ս. Գմելինի եւ Յ. Գյուլդենշտեդտի աշխատությունները²⁶:

ԺԸ դարի 80-ական թվականներին Այսրկովկասի եւ նրան հարակից իրանական տարածքների խանությունների քաղաքական պատմության առումով առանձնակի արժեք են ներկայացնում

դիկոսի յիշատակարանը (1763-1767), Թիֆլիս, 1894; Գիրք Դ, **Ղուկաս կաթողիկոս** (1780-1800), Թիֆլիս, 1899; Գիրք Ը, **Սիմեոն կաթողիկոսի** յիշատակարանը, մասն Բ (1767-1776), Թիֆլիս, 1908; Գիրք Թ, Հովսեփ կաթողիկոս Արդութեան (1778-1800), Թիֆլիս, 1911; Գիրք Ժ, Մանր մատենագիրք (ԺԵ-ԺԹ դդ.), Թիֆլիս, 1912; Դիվան Հայոց պատմության, Նոր շարք, Գիրք Ա, Ղուկաս Կարնեցի, հտ. Ա (1780-1785), Աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, Եր., 1984:

²⁵ Армяно-русские отношения в XVIII веке. 1760-1800 гг. Сб. документов, Под ред. М. Нерсисяна, Ер., 1990, т. IV; Межкавказские политические и торговые связи Восточной Грузии (конец 60-х – начало 90-х годов XVIII в.). Документы и материалы, вып. I, Материал подобрал и подготовил к печати В. Гамрекелли, Тбилиси, 1980; Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в. Сб. документов, Отв. ред. В. Гаджиев, Москва, 1988 (հետախույ՝ ԲԾՕ); Материалы по истории русско-грузинских отношений второй пол. XVIII века, Подг. В. Мачарадзе, ч. III, вып. II, Тбилиси, 1997.

²⁶ С. Гмелин, Путешествие по России для исследования трех царств естества, ч. III, I половина, СПб., 1785; И. Гюльденштедт, Географическое и статистическое описание Грузии и Кавказа. СПб., 1809; Иоганн Антон Гильденштедт, Путешествие по Кавказу в 1770-1773 гг. СПб., 2004.

Արեւելյան Վրաստանում 1783-1787 թթ. հաստատված ռուսական լիազոր-ներկայացուցիչ գնդապետ Ստ. Բուռնաշելի երկերը²⁷:

Մեր աշխատության մեջ ընդգրկված ժամանակաշրջանի Կովկասի պատմության համակողմանի լուսաբանման համար մեծ նշանակություն ունեն Վ. Զուրովի Կասպիական արշավանքի մասնակից սպաների կատարած ուսումնասիրությունները²⁸, ինչպես նաև Ս. Բրոնեւսկու արխիվային նյութերի եւ անձնական դիտարկումների հենքի վրա գրված երկհատոր աշխատությունը²⁹: Կովկասի ԺԸ դարի քաղաքական պատմության լուսաբանման է նվիրված ակադեմիկոս Պ. Բուսկովի եռահատոր աշխատությունը³⁰, որի հիմքում դրված են արխիվային մեծաթիվ փաստաթղթեր, վավերագրեր, դիվանագիտական գրագրություններ եւ արժեքավոր այլ սկզբնաղբյուրներ, որոնց մի մասը մեզ չի հասել: ԺԸ դարի 90-ական թվականների Այսրկովկասի ռազմաքաղաքական պատմությունը, Աղա Մուհամմադ խանի Այսրկովկաս կատարած արշավանքն իր արտացոլումն է գտել Ն. Դուբրովինի³¹ եւ Վ. Պոտտոյի հետազոտություն-

²⁷ С. Бурнашев, Описание областей Адребиджанских в Персии и их политического состояния, Курск, 1793; նույնի՝ Картина Грузии или описание политического состояния царств Карталинского и Кахетинского, сделанное, пребывающим при его высочестве царе Карталинском и Кахетинском Ираклии Темуразовиче полковником и кавалером Бурнашевым в Тифлисе, в 1786 г., Курск, 1793.

²⁸ Ф. Симонович, Описание Южного Дагестана. 1796 г.; Н. Дренякин, Описание Ширвана. 1796 г.; П. Бутков, Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде писем». 1796 г.; նույնի՝ Сведения о кубинском и дербентском владениях. 1798 г.; А. Ахвердов, Описание Дагестан. 1804 г.; А. Серебров, Историко-этнографическое описание Дагестана. 1796 г., – ИГЭД.

²⁹ С. Броневский, Новейшие географические [статистические и этнографические] и исторические известия о Кавказе, собранные и пополненные Семеном Броневским, ч. II, Москва, 1823.

³⁰ П. Бутков, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., ч. II, СПб., 1869.

³¹ Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, ч. III, СПб., 1886; նույնի՝ Закавказье от 1803 по 1806 гг., СПб., 1866; նույնի՝

ներում³² : Այնուամենայնիվ, ԺԹ դարի ռուսական կայսերական պատմագիտական միտքը հաճախ կողմնակալ մոտեցում է ցուցաբերել ռուս-իրանա-օսմանյան քաղաքական հակամարտության մեջ այսրկովկասյան խաների եւ տիրակալների որդեգրած դիրքորոշումների վերաբերյալ:

Ուշադրության արժանի է նաեւ 1990-ական թվականներին լույս տեսած Ռուսաստանի արտաքին քաղաքականության պատմության բազմահատորյակի ԺԸ դարն ընդգրկող պրակը Ժ. Անանյանի աշխատասիրությամբ³³: Այսրկովկասի պատմության ԺԸ դարի պատմության ուսումնասիրության հարցում իր մեծ ավանդն է ներդրել հայագետ-վրացագետ Պ. Չոբանյանը՝ հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունների համակողմանի լուսաբանմամբ³⁴: Բաքվի հայության պատմաժողովրդագրական հիմնահարցերին են նվիրված Գ. Ստեփանյանի արժեքավոր ուսումնասիրությունները³⁵:

Հետազոտության կատարման ընթացքում օգտակար են եղել նաեւ արեւմտյան գիտնականների ուսումնասիրությունները, որոնք

Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, СПб., 1867; նույնի՝ Поход графа Зубова в Персию в 1796 г., – «Военный сборник», 1874, № 2-6.

³² В. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах и легендах, т. I, вып. I, СПб., 1887; նույնի՝ Исторический очерк кавказских войн от их начала до присоединения Грузии, Под ред. В. Потто, Тифлис, 1899.

³³ История внешней политики России. XVIII век (от Северной войны до войн России против Наполеона), – История внешней политики России. Конец XV в. – 1917 г., Отв. ред. А. Н. Сахаров, Москва, 1998, с. 150-167; Անանյան Ժ., Հայ-ռուսական հարաբերությունները, նախադրյալները, փուլերը, պրոբլեմի նկատմամբ մոտեցումները, – ԼՀԳ, 1991, հ^մ 1, էջ 3-19:

³⁴ Պ. Չոբանյան, Հայ-ռուս-պարսկական կապերի պատմությունից (XVIII դարի վերջ), – ՊԲՀ, 1991, հ^մ 2; նույնի՝ Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները XVIII դ. երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006:

³⁵ Գ. Ստեփանյան, Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., 2010; նույնի՝ Բաքու քաղաքի հայության պատմությունը (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., 2011:

եւս նպաստել են Արեւելյան Այսրկովկասի խանությունների քաղաքական, էթնո-դավանական պատմության հետազոտության համար փաստագրական եւ վերլուծական հարուստ հիմք ստեղծելուն³⁶:

³⁶ **G. Hambly**, Agha Muhammad khan and the establishment of the Qajar dynasty, – The Cambridge History of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, Vol. VII, Cambridge, 1991, p. 104-143; **J. Perry**, Karim Khan Zand (1747-1779), London, 2006; նույնի՝ The Zand Dynasty, – The Cambridge History of Iran, Vol. VII, p. 63-103; **F. Kazemzadeh**, Iranian relations with Russia and the Soviet Union to 1921, – The Cambridge History of Iran, Vol. VII, p. 314-349; **S. Shaw**, Iranian relation with the Ottoman Empire in the eighteenth and nineteenth centuries, – The Cambridge History of Iran, Vol. VII, p. 297-313; The Cambridge History of Turkey, Vol. III, The Later Ottoman Empire (1603-1839), Edited by **Suraiya N. Faroqhi**, Cambridge, 2006; **R. Tapper**, Shāhsevan in Şafavid Persia, – BSOAS, Vol. 37, 1974, № 2, p. 321-354; նույնի՝ Frontier Nomads of Iran: A Political and Social History of the Shahsevan (Cambridge Middle East Studies), Cambridge, 1997; **M. Atkin**, Russia and Iran 1780-1828, Minneapolis, 1980.

ԳԼՈՒԽ Ա

ԱՐԵՒԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԺԸ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ

Նադիր շահի (1736-1747 թթ.) մահվանից հետո Իրանական հզոր պետության մեջ ստեղծված քաղաքական անկայուն իրավիճակը վրաց իշխան Օթար Թումանովը Ռուսաստանի Արտաքին գործերի կոլեգիային ուղղված զեկուցագրերում իրավամբ «խռովություն» էր անվանում³⁷: Իրանի պետությունը տրոհվել էր անընդմեջ միմյանց դեմ պայքարող ինքնուրույն վարչաքաղաքական միավորների³⁸: Մասնավորապես Շիրվանի բեկլարբեկության տարածքում ձեւավորվում են Շաքիի, Դերբենդի, Ղուբայի, Շամախիի եւ Բաքվի ինքնիշխան կամ ինչպես իրենք խաներն էին կոչում «ազատ»³⁹ խանությունները, իսկ շահական նախկին կառավարիչներին փոխարինելու են գալիս ինքնակոչ խաները:

Ինքնիշխանության ուղին առաջինը Շաքիի խանությունն էր բռնել՝ դեռեւս Նադիր շահի օրոք, 1743-1744 թթ. Հաջի Չելեբիի գլխավորությամբ ապստամբելով արքունիքի դեմ⁴⁰: Շաքիի ապստամբած բնակիչները սպանում են Նադիր շահի նշանակած կառավարչին, փակվում բերդում եւ համառ դիմադրություն ցույց

³⁷ Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հտ. Գ (ԺԸ-ԺԹ դդ.), Թարգմանեց՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Եր., 1955, էջ 107:

³⁸ Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Ժ, Մանր մատենագիրք (ԺԵ-ԺԹ), Հրատարակեց՝ Գիւտ քահ. Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 157-158:

³⁹ *St u Kolonialnaya politika rossiyskogo tsarizma v Azerbaydzhane v 20-60-x gg. XIX v.,* ч. II, Ленинград, 1937, с. 46.

⁴⁰ Ըստ Շաքիի խանության տարեգրի՝ Հաջի Չելեբին ծագումով քրիստոնյա քահանա Ղարա-քեշիշի տոհմից էր (Абдул-Латиф Эфенди, История шекинских ханов, Баку, 1926, с. 5). Այդ տոհմը Շաքիում իշխում էր 1444-1551 թթ., որից հետո կառավարումն անցնում է Սեֆյան շահերի նշանակած ամիրաներին (И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв., Ленинград, 1949, с. 138).

տալիս կառավարական գորքին⁴¹: Շաքիի խանից կախվածություն էին ձեռք բերել Կուտկաշենի եւ Արեշի սուլթանությունները, Ճարի եւ Բելոկանի ինքնավար համայնքները (ջամաաթները):

ԺՀ դարի երկրորդ կեսին այսրկովկասյան խանություններում իշխանության փոխանցումը որոշ դեպքերում ժառանգական է դառնում: Այդ ճանապարհով էր իշխանության եկել Ղուբայի Ֆաթի Ալի խանը (1758-1789 թթ.)՝ այն ստանալով հորից Ղուբայի Հուսեյն Ալի խանից⁴², իսկ Բաքվի Միրզա Մուհամմադ խանի մահվանից հետո (1768 թ.) իշխանությունը ժառանգաբար անցել էր որդուն Մելիք Մուհամմադ խանին⁴³:

Իշխանության փոխանցման ժառանգական սկզբունքը խախտված էր Դերբենդի եւ Շամախիի խանություններում: Այսպես, 1748 թ. Դերբենդի բնակիչներն իշխանությունից հեռացնում են Նադիր շահի օրոք նշանակված կառավարչին եւ խան հռչակում հարյուրապետ Մուհամմադ Հուսեյնին⁴⁴: Շուտով քաղաքի բնակիչները, դժգոհ լինելով խանի ծանր հարկային քաղաքականությունից, գաղտնի բանակցելով Ֆաթի Ալի խանի հետ, խոստանում են նրան հանձնել Դերբենդը⁴⁵: 1759 թ. Դերբենդը գրավելով՝ Ֆաթի Ալին Մուհամմադ Հուսեյն խանին կուրացնում է, իսկ նրա հնգամյա Ալի բեկ որդուն սկզբում տանում է Ղուբա, ապա Բաքու: Դերբենդի խանը 1768 թ. վախճանվում է, իսկ Ալի բեկը մնում է Բաքվի խանի մոտ⁴⁶:

⁴¹Մահբուբե Սեդիդի, Հարավային Կովկասի տեղական իշխանությունների փոխհարաբերությունները Իրանի կենտրոնական իշխանության հետ XVIII դարի վերջից մինչև 1828 թվականը, Թեկնածուական ատենախոսություն, Եր., 2014, էջ 20-21:

⁴² А. Бакиханов, Гулистан-Ирам, Баку, 1926 («Труды» Общества обследования и изучения Азербайджана, вып. 47), с. 130.

⁴³ И. Березин, Путешествие по Дагестану и Закавказью, Казань, 1849, с. 215.

⁴⁴ С. Гмелин, Путешествие по России для исследования трех царств естества, ч. III, 1-ая половина, СПб, 1785, с. 22-23.

⁴⁵ Նույն տեղում, էջ 23:

⁴⁶ П. Бутков, Материалы для новой истории Кавказа..., ч. II, с. 250.

Շիրվանի բեկլարբեկության նախկին հարկահավաք Հաջի Մուհամմադ Ալի Մուֆի Նաբի Ջարնավային 1748 թ. Նոր Շամախիի⁴⁷ խան է դառնում եւ կառավարում մինչեւ 1761 թ., երբ սպանվում է Խան Չոբանի ցեղի Սարքարների տոհմից Ալի Վերդի բեկի որդիներ Մուհամմադ Սայիդ եւ Ադասի խաների ձեռքով:

ԺՇ դարի 60-80-ական թթ. Արեւելյան Այսրկովկասում առավել հզոր եւ ինքնիշխան տիրակալ է դառնում Ֆաթհ Ալի խանը, որը Դերբենդի նվաճումից հետո պաշտոնապես կրում էր Ղուբայի եւ Դերբենդի խան տիտղոսը: Նա դեռելու 1756 թ. գրավել եւ Ղուբայի խանությանն էր միացրել Ապշերոնի թերակղզու մոտ գտնվող Սալիան բնակավայրը, որը նախկինում պատկանում էր Ղուբայի խաներին⁴⁸: Նրա միացումը Ղուբայի խանության համար ուներ ռազմավարական մեծ նշանակություն: Սալիանի տարածքով Ղուբայի խանը մխրճվում էր Բաքվի եւ Շամախիի խանությունների թիկունքը՝ իր կամքը թելադրելով նրանց: Այսպիսով, Բաքվի եւ Շամախիի հաշվին իր տիրույթների ընդարձակումը Ֆաթհ Ալիի համար ժամանակի հարց էր դառնում՝ մեծացնելով Ղուբայի քաղաքական ազդեցությունն Արեւելյան Այսրկովկասում:

Որոշ դեպքերում հարեւան խաներն իրենք էին փնտրում իրենցից ուժեղի՝ Ղուբայի խանի քաղաքական եւ բարեկամական աջակցությունը: Այսպես, Բաքվի Միրզա Մուհամմադ խանը բարեկամանում է Ֆաթհ Ալիի հետ, «որը միւսներից վտանգաւոր կարող էր լինել նորա համար»⁴⁹, եւ իր որդուն՝ Մելիք Մուհամմադ խանին ամուսնացնում Ղուբայի խանի քրոջ հետ: Ուժեղ կամքի տեր կին լինելով՝ Հադիջա-բիբին իշխանությունից գրեթե

⁴⁷ Նադիր շահը 1734-1735 թթ. Հին Շամախիից արեւմուտք հիմնում է Նոր Շամախի քաղաքը (Աբրահամ կաթողիկոս Կրետացոյ Պատմագրութիւն անցիցն իրոց եւ Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 65-66:

⁴⁸ С. Гмелин, указ. соч., с. 58.

⁴⁹ Մ. Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սադիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախոյ թեմի, Տիփսիս, 1896, էջ 378:

հեռացրեց Բաքվի թուլակամ խանին եւ միանձնյա կառավարելով կյանքի կոչեց Ֆաթի Ալիի քաղաքական ծրագիրը: Այսպես Բաքվի խանությունը դարձավ Ղուբայի խանի ընդարձակ տիրույթներից մեկը:

Եթե Ֆաթի Ալի խանին հաջողվեր իրեն ենթարկել նաև Շամախիի խանությունը, ապա Ղարաբաղի եւ Շաքիի խանությունները նվաճելու հեռանկարներն առավել իրատեսական էին դառնում՝ ապահովելով Ղուբայի խանի միանձնյա գերիշխանությունը ողջ Արեւելյան Այսրկովկասում: Շամախիի խանությունն այդ երկրամասում կենտրոնական դիրք էր գրավում՝ «բաց» եւ անպաշտպան սահմաններով: ԺԸ դարի երկրորդ կեսին այն կովախնձոր էր դարձել հարեւան առավել հզոր խանությունների՝ Շաքիի, Ղարաբաղի, Ղուբայի ու Քարթլիի եւ Կախեթի միացյալ թագավորության միջեւ: Շամախիի տիրակալը հնարավորություն էր ստանալու վերահսկել Ղզլարից Բաքու ընկած տարածքները՝ իր ձեռքում կենտրոնացնել նրա ռազմավարական, տնտեսական եւ առևտրային գործառույթների մենաշնորհը՝ որպես լծակ հարեւանների վրա ճնշում գործադրելու համար:

Շամախիի Մուհամմադ Սայիդ եւ Աղասի խաներն իրենց էին ենթարկել Շիրվանի քոչվոր ցեղերին եւ հաստատվել Հին Շամախիում: Հաջի Մուհամմադ Ալի խանի ծանր հարկային քաղաքականությունից դժգոհ Նոր Շամախիի բնակիչները դիմում են Մուհամմադ Սայիդին: Վերջինս առանց վարանելու կատարում է շամախեցիների խնդրանքը եւ, քաղաքը գրավելով, վերջ դնում երկիշխանությանը: Շուտով Մուհամմադ Սայիդի եւ Ֆաթի Ալի խանի հարաբերությունները լարվում են: Փառասիրությունն ու «արծաթասիրությունը» Մուհամմադ Սայիդին ստիպում են հրաժարվել Ղուբային նախօրոք պայմանավորված հարկը վճարելուց: Ֆաթի Ալի խանը 1767 թ. շարժվում է Շամախի, սակայն Մուհամմադ Սայիդ խանը հաշտություն է խնդրում՝ խոստանալով վճարել անհրաժեշտ հարկը⁵⁰: Ղուբայի խանի՝ Շամախին գրավելու հետագա փորձերը պսակվում են անհաջողությամբ, քանի որ Մուհամմադ Սայիդի օգտին էր գործում Շաքիի Հուսեյն

⁵⁰ РГАДА, Сношения России с Персией, 1767 г., д. 9, л. 27об.-28.

խանը: Վերջինս հասկանում էր, որ Շամախիի գրավումից հետո հզորացած Ֆաթի Ալիի հաջորդ հարվածը լինելու էր Շաքիի խանության ուղղությամբ: Կարճ ժամանակ անց Շամախիի խանը կրկին հրաժարվում է հարկ վճարել Ղուբային: Այս անգամ Ֆաթի Ալի խանը ստանում է Շաքիի խանի աջակցությունը (մեծ ավար ստանալու հեռանկարով⁵¹), դաշինք է կնքում Դադստանի տիրակալների հետ եւ 1768 թ. շարժվում Շամախի ու գրավում այն: Շաքիի Հուսեյն խանը կուրացնում է Աղասի խանին, իսկ Մուհամմադ Սայիդին հանձնում Ֆաթի Ալիին: Շամախիի գրավումից հետո սահմանակից երկու մահալներ բաժին են հասնում Շաքիի խանին⁵²: Սակայն Ֆաթի Ալիի ծրագրերի մեջ չէր մտնում Շաքիի իշխանության հզորացումը, եւ նա շուտով վերադարձնում է այդ մահալները, իսկ Հուսեյն խանը ձեռնունայն հեռանում է: Այսպիսով, Շամախին բոլոր կողմերից շրջապատված լինելով թշնամաբար տրամադրված հարեւաններով եւ պարբերաբար ենթարկվելով լեզգիների հարձակումներին՝ ստիպված էր ճանաչել Ֆաթի Ալի խանին որպես իր քաղաքական ու ռազմական պաշտպանի: Շամախիի գրավումով Ֆաթի Ալի խանի իշխանությունն Արեւելյան Այսրկովկասում անսահմանափակ էր դարձել: Այդ տարածքով անցնող վաճառականները Մեքքա եւ Մեդինա ուխտագնացության համար պարտավոր էին Ֆաթի Ալի խանին գումար վճարել: Ս. Գմելինի խոսքերով՝ ժամանակին Շիրվանում հաջիների հեղինակությունն այնպիսի չափերի էր հասնում, որ առանց նրանց համաձայնության ոչ մի կարեւոր քայլ չէր կատարվում: Սակայն Ղուբայի խանը Շամախիի հաջիներին «գրկում է բոլոր կոչումներից» ու գերի տանում Դերբենդ եւ Ղուբա⁵³: Այդ քայլը միտված էր ընդգծել Ֆաթի Ալի խանի բացարձակ իշխանությունը

⁵¹ J. Reineggs and M. Bieberstein, A General Historical and Topographical Description of the Mount Caucasus. Translated from the works of Dr. Reineggs and Marshal Bieberstein by Charles Wilkinson, Vol. I, London, 1807, p. 192-193.

⁵² А. Бакиханов, указ. соч., с. 132.

⁵³ С. Гмелин, указ. соч., с. 96-97.

շամախեցիների վրա՝ իբրև օրինակ Ղուբային ենթակա մյուս տիրույթների բնակիչներին:

Ֆաթի Ալի խանը կարող էր իր գերիշխանությունը ճանաչած քաղաքներում կառավարիչ նշանակել եւ միջամտել խանությունների ներքին կյանքին: Այսպես, Շամախիի պարետ էր նշանակվել խանի եղբայր Աբդուլլա բեկը, սակայն կրկնակի հարկեր սահմանելու եւ անբարո կյանք վարելու համար նա պաշտոնից հեռացվել էր: Նոր պարետ էր նշանակվել Բաքվի խանը, սակայն շամախեցիների բողոքների հիման վրա նա նույնպես գրկվել էր պաշտոնից⁵⁴:

Վերը նշված փաստերը թեև նվաճված տարածքներում Ֆաթի Ալի խանի բացարձակ իշխանության մասին են վկայում, այդուհանդերձ, նա որոշակի անվստահություն էր տածում տեղի բնակիչների նկատմամբ: Դա էր պատճառը, որ Ֆաթի Ալի խանը որոշում է վերջ դնել երկու Շամախիների գոյությանը եւ շամախեցիներին ավելի վերահսկելի դարձնել: 1769 թ. նա ավերում է Նոր Շամախին՝ քաղաքի բոլոր դարպասները փակելով եւ ջուր հեղեղելով դեպի ներս, իսկ բնակիչներին տեղափոխում է Հին Շամախի⁵⁵:

Ֆաթի Ալի խանի անվստահությունը շամախեցիների նկատմամբ արտահայտվում էր նաեւ նրանով, որ իր հազվադեպ այցելությունների ժամանակ նա գիշերում էր Շամախիից քիչ հեռավորության վրա գտնվող գյուղում, ուր բազեի որսով էր զբաղվում: Այս ամենի ականատեսը լինելով՝ Ս. Գմելինը փաստում է, որ Ֆաթի Ալին Շամախիի խանությունը որպես գենքով նվաճված նահանգ էր դիտում, որը նա կառավարում էր ոչ «ժողովրդի հոր», այլ նվաճողի իրավունքով⁵⁶: Սակայն 1776 թ. Ֆաթի Ալի խանը Շամախիում նորից խան է վերանշանակում յոթ տարի Դերբենդում գերության մեջ գտնվող Մուհամմադ Սայիդին⁵⁷:

⁵⁴ Նույն տեղում, էջ 97:

⁵⁵ АВПРИ, ф. Сношения России с Персией, 1767-1769 гг., д. 16, л. 297.

⁵⁶ С. Гмелин, указ. соч., с. 97.

⁵⁷ А. Серебров, указ. соч., с. 186.

Ղուբայի խանի գերիշխանությունը ճանաչած Բաքվի եւ Շամախիի տիրակալները պարտավոր էին նրան տարեկան հարկ (ղրամական), անհրաժեշտ պարեն եւ զինվորներ տրամադրել, քանի որ վերջինս այդ խանությունների անվտանգության երաշխավորն էր թե՛ կովկասյան լեռնականներից, թե՛ «պարսից մյուս խաներից» պաշտպանելու հարցում: Ղուբայի խանը իրավասու էր անգամ գորք մտցնել Շամախի, եթե վերջինիս խանը հրաժարվեր սահմանված հարկը վճարել: Ֆաթհ Ալիի այդ գործառույթը մյուս խանությունների նկատմամբ Ս. Գմելինը կոչում էր «խնամակալություն» («оберегательство»)՝ Բաքվի խանը՝ Ֆաթհ Ալի խանի փեսան, առժամանակ ազատված էր որոշակի հարկերից (բացի գորք ու պարեն տրամադրելուց) եւ նրա թույլտվությամբ իրեն էր պահում աղից ու նավթից ստացվող 35000-40000 ռուբլի եկամուտը, սակայն նա «Ղուբայի խանի պաշտպանության ներքո գտնվող իշխանիկ էր»⁵⁹: Ավելին, Ս. Գմելինը նկատում է, որ այս հանգամանքը չէր կարող խանգարել, որ Ֆաթհ Ալի խանը ցանկացած պահի Բաքվի խանին քաղաքապետ դարձներ⁶⁰:

Այս ամենից երևում է նաեւ, որ 1760-1780-ական թթ. Կասպից ծովի արեւմտյան ափին՝ Դերբենդի, Ղուբայի, Շամախիի եւ Բաքվի խանություններում Ղուբայի Ֆաթհ Ալի խանի քաղաքական գերիշխանությունը էթնիկական ընդհանրությամբ պայմանավորված չէր:

Արեւելյան Այսրկովկասում խանությունների ներքաղաքական իրավիճակի վերլուծությունը ԺԸ դարի երկրորդ կեսին հաստատված քաղաքական իրողությունների համատեքստում հարց է առաջացնում, թե կարո՞ղ էին արդյոք Դերբենդի, Բաքվի եւ Շամախիի խանությունները պահպանել իրենց ինքնուրույն կարգավիճակը: Պատմական Շիրվանի տարածքն անընդհատ կովկասյան լեռնականների եւ իրանական խաների հարձակումների թիրախ էր: Շիրվանը ԺԶ-ԺԸ դարերում Սեֆյան, ապա Նա-

⁵⁸ С. Гмелин, указ. соч., с. 83.

⁵⁹ Նույն տեղում, էջ 83:

⁶⁰ Նույն տեղում, էջ 83-84:

դիր շահի պետության եւ իրանական պետական համակարգի բաղկացուցիչ մասն էր՝ «զրկված» իրեն հուզող խնդիրների ինքնուրույն կարգավորումից: Խնդրո առարկա ժամանակաշրջանում ինքնիշխան քաղաքական միավորները՝ խանությունները, ստիպված էին ինքնուրույն կազմակերպել իրենց անվտանգությունը կամ էլ առավել կայուն ուժի շուրջ միավորվել: Այսրկովկասում ձեւավորված աշխարհաքաղաքական փոփոխությունների հետեւանքով խաները պարտավոր էին առաջնորդվել «բաժանի՛ր, որ տիրես» սկզբունքով: Առաջին տեղ էր մղվել խանությունների գոյության, նրանց անվտանգության ապահովման հարցը: Այդ իրադրության մեջ չկային մշտական դաշնակիցներ, կային մշտական շահեր, անվտանգության եւ ինքնիշխանության պահպանման հիմնախնդիրներ: Ինչպես, օրինակ՝ «Մելիք Մահմեդ խանը կառավարում էր Բագուայ խանութինը 21 տարի խաղաղութեամբ, առանց արտաքին յարձակումների ենթարկուելու, որովհետեւ նա ապաւինել էր իւր աներոորդու հզորութեանը. Ղուբայի Ֆեաղալի խանին միւս խաները հպատակում էին եւ իբրեւ աւատապետ բոլորն էլ հարկ էին վճարում: Ով չէր հնազանդում՝ ենթարկում էր մահուան պատժի»⁶¹: Ուստի, տարածաշրջանի քաղաքական զարգացումները խաներին այլընտրանք չէին թողել, քան ճանաչել իրենցից առավել ուժեղի՝ Ղուբայի խանի գերիշխանությունը եւ պարտավորվել տարեկան որոշակի հարկ վճարել: Նրա հետ հաշվի էին նստում նաեւ Դաղստանի տիրակալները, ինչպես, օրինակ՝ Թարքիի շամխալը (կառավարիչը): Դեռեւս Մեֆյան շահերի օրոք շամխալը Բաքվի խանությունում սեփականության իրավունքով մեծ քանակությամբ գյուղեր ուներ, որոնք Նադիր շահի մահվանը հաջորդած խառնակ իրավիճակում դուրս էին մնացել նրա իշխանությունից: Երբ Բաքվի նոր խան է դառնում անչափահաս Միրզա Մելիք Մուհամմադը,

⁶¹ Մ. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 378:

Թարքիի տիրակալը փորձում է վերադարձնել այդ գյուղերը, բայց հանդիպում է Ֆաթի Ալի խանի հակազդեցությանը⁶²:

Սակայն դա չէր նշանակում, թե խաները հաշվի չէին նստում Այսրկովկասում գերիշխանության ձգտող Իրանի տերության, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների հետ: Այսպես, երբ Ֆաթի Ալի խանը գրավում է Դերբենդը, շտապում է հայտնել իրանական, օսմանյան եւ ռուսական իշխանություններին, որպեսզի ստանար նրանց քաղաքական համաձայնությունը: Քերիմ խանը Իրանում ծավալվող քաղաքական գործընթացներով զբաղված լինելով՝ ընդունում է Դերբենդի գրավման փաստը, պայմանով, որ Ֆաթի Ալի խանն իրեն պարսից պետության տիրակալ ճանաչի: Դերբենդի նվաճման մասին լուրը Ղուբայի խանը հայտնում է նաեւ օսմանյան սուլթանին: Վերջինս նվերներ եւ բարեմաղթանքներ է ուղարկում՝ հույս ունենալով ստանալ խանի քաղաքական աջակցությունը⁶³: Ղուբայի խանը 1760 թ. Հունվարին կատարվածի մասին տեղեկացնում է նաեւ Աստրախանի նահանգապետին՝ հույս հայտնելով, որ ռուսական առևտրականները կայցելեն քաղաք⁶⁴: Խաները նպատակ չունեին Իրանի տերությունից, Ռուսական եւ Օսմանյան կայսրություններից որեւէ մեկից քաղաքականապես կախվածություն ունենալ եւ դիմում էին խուսանալելու քաղաքականությանը:

Մեկ այլ դեպքում Շամախիի Մուհամմադ Սայիդը Հին Շամախիի խան է ճանաչվում Քերիմ խան Ձենդի ֆերմանի համաձայն⁶⁵: Այդ քայլով Իրանի տերության տիրակալը փորձում էր Արեւելյան Այսրկովկասում՝ ի դեմս Հին Շամախիի խաների իրեն ենթակա կառավարիչներ ունենալ եւ ամրապնդել Իրանի ազդե-

⁶² Г. Цинцадзе, Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), – «Исторический вестник», № 23-24, Тбилиси, 1970, с. 28-29.

⁶³ J. Reineggs and M. Bieberstein, op. cit., p. 151-152.

⁶⁴ Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в. Сб. документов, Отв. ред. В. Гаджиев, Москва, 1988 (հետախույ՝ ԲԾՕ), с. 91-92.

⁶⁵ ԲԾՕ, с. 90-91. Շամախիի խաների մասին տե՛ս Բодословная таблица шемахинских ханов, – АКАК, т. V, 1873, с. 1109-1118.

ցությունը տարածաշրջանում: Այսպիսով, քաղաքականապես ապակայունացած Շիրվանը դառնալու էր կառավարելի եւ առաջին իսկ հնարավորության դեպքում կարող էր վերադարձվել իրանական պետության կազմի մեջ:

Վերջապես, երբ 1760-ական թվականների վերջում լարվում են Ֆաթհ Ալի խանի եւ Մուհամմադ Մայիդ խանի հարաբերությունները, Ղուբայի խանը խնդրանքով դիմում է օսմանյան սուլթանին՝ թույլ տալու գրավել Շամախին⁶⁶:

Վեբիլից կամ սուլթանից ֆերման ստանալը ԺՇ դարի երկրորդ կեսին ամենեւին էլ Այսրկովկասում իրանական կամ թուրքական գերիշխանության մասին չէր փաստում: Խաները ժամանակ առ ժամանակ այդպիսի քայլի էին դիմում ապահովագրական նկատառումներով՝ իրենց գործողությունների համար վերջինների համաձայնությունը ստանալու նպատակով: Խաները փորձում էին պահպանել իրենց հեղինակությունը սեփական տիրույթներում եւ ընդգծել քաղաքական առավելությունն ու հզորությունը հարեւան խաների աչքերում: Հետեւաբար, ֆերման ստանալու ավանդույթը խնդրո առարկա ժամանակամիջոցում կորցրել էր նախկին վասալային իմաստը եւ պահպանում էր նրա ձեռական կողմը միայն:

Ղուբայի խանության ռազմաքաղաքական նշանակությունը «ստիպում էին» թե՛ Ռուսական, թե՛ Օսմանյան կայսրություններին եւ թե՛ Իրանի տիրակալներին հաշվի նստել Ֆաթհ Ալի խանի հետ: Վերջիններիս համար խանի քաղաքական կշիռը պայմանավորված էր նաեւ նրա կովկասյան տիրակալների շրջանում ունեցած քաղաքական ազդեցությամբ:

Ռուսական կայսրության բարձրաստիճան գինվորականությունն, ի դեմս վրաց Հերակլ Բ արքայի (1762-1798 թթ.) մոտ գտնվող ռուսական լիազոր ներկայացուցիչ Ստ. Բուռնաշելի, տարածաշրջանի տիրակալներին դասակարգում էր ըստ իրենց ռազմական հնարավորությունների որպես «հզորների» եւ «նվազ

⁶⁶ Л. Меликсет-Беков, Описание сопредельных с Грузиею стран второй половины XVIII века, – «Труды» ТГУ, т. XVIII, Тбилиси, 1941, с. 130.

հզորների»⁶⁷: Ռուսաստանի համար այդ «բաժանումը» կարելուովում էր ոչ միայն խանությունների նկատմամբ սեփական քաղաքականությունը կառուցելու առումով, այլև որոշելու համար Օսմանյան կայսրության եւ Իրանի տերության համար խանությունների քաղաքական նշանակությունը: Խաների ռազմական հզորությունը ոչ այնքան սեփական զինուժի առկայությամբ, որքան հարեւան լեզգիներին վարձելու հնարավորությամբ էր պայմանավորված: Այդ առումով շահեկան էր Ղուբայի Ֆաթհ Ալի խանի դրությունը, քանի որ նրա իշխանությունն էին ճանաչում Սամուր գետի ավազանում գտնվող այսպես կոչված «անկախ միությունները» (համայնքները)՝ Ալթիփարա, Դոքուզփարա, Միշքենջա, Ախտիփարա եւ Ռուֆուլ լեզգիաբնակ իշխանություններն ու վեց գյուղեր՝ Բուղուղ, Խինալուղ, Ջիք, Կրիզ, Ալիկ եւ Հափութ (Խապուտ)⁶⁸:

Պատմագիտության մեջ այսրկովկասյան խանությունների ԺԸ դարի երկրորդ կեսի պատմությունը բնութագրվում է որպես «կիսանկախ խանությունների ժամանակաշրջան»⁶⁹: Երեւանի, Գանձակի խանությունները մերթընդմերթ ճանաչում էին վրաց շերակլ Բ արքայի, իսկ Նախիջեւանի, Ղարաբաղի խանությունները՝ Իրանի տիրակալների գերիշխանությունը, հարկ վճարում կամ անհրաժեշտության դեպքում զորք տրամադրում: Արեւելյան Այսրկովկասի խաները ընդունել էին իրենցից ուժեղագույնի (իմա՝ Ֆաթհ Ալի խանի) գերիշխանությունը: 1770-ական թվականներին Դերբենդ, Շաքի, Շամախի, Ղուբա եւ Բաքու այցելած ակադ. Ս. Գմելինը գրում էր, որ այդ խանությունների տիրակալներն իրենց կառավարման ընթացքում իրանական շահերին հաշվետու չէին՝ իրենց ենթակայության տակ գտնվող շրջաններում ներկայանալով որպես «անսահմանափակ տիրակալներ» կամ «անհատ շահեր»⁷⁰:

⁶⁷ С. Бурнашев, указ. соч., с. 4.

⁶⁸ С. Гмелин, указ. соч., с. 50.

⁶⁹ И. П. Петрушевский, указ. соч., с. 88.

⁷⁰ С. Гмелин, указ. соч., с. 197.

Ղուբայի Ֆաթի Ալի խանի եւ նրա շուրջ երեք տասնամյակ ձգվող քաղաքական գործունեության համար աղբրեջանական խորհրդային պատմագիտությունը կոչում էր «հայրենի երկրի միավորման մարտիկ», «Աղբրեջանի ազգային միավորման համար պայքարող մարտիկ»⁷¹: Իրականում Ղուբայի խանը խելացի եւ հմուտ դիվանագետ-տիրակալ էր, որի գլխավոր խնդիրն էր քաղաքական գերիշխանություն հաստատել Արեւելյան Այսրկովկասի, ապա ողջ Այսրկովկասի եւ անգամ՝ Իրանի տերության վրա: Պարզ է, որ Ֆաթի Ալի խանը որեւէ կապ չունի այսօրվա ընկալմամբ «աղբրեջանցի» էթնիկ հանրության հետ, քանի որ պատկանում էր դադստանյան ժողովուրդներից մեկին՝ դայթադներին: Այդ մասին են փաստում ԺԸ դարի երկրորդ կեսի աղբյուրները՝ նշելով, որ Դերբենդի խանը (այսինքն՝ Ֆաթի Ալին), ինչպես եւ իր տոհմի մեծ մասը, սերում էր դայթադներից, որոնք դադստանյան ժողովուրդ են, դարգինների էթնիկ մի խումբ եւ պատկանում են Կովկասյան լեզվաընտանիքի նախճա-դադրստանյան լեզվախմբին⁷²:

Ընդհանրացնելով քննարկվող նյութը՝ կարող ենք եզրակացնել, որ ԺԸ դարի 60-80-ական թթ. Արեւելյան Այսրկովկասի խանությունների համար կարող են բնութագրվել որպես ինքնիշխանության ժամանակաշրջան: Իրանական պետության նախկին վարչա-տարածքային միավորները վերածվել էին ինքնիշխան խանությունների, իսկ Նադիր շահի օրոք վարչա-սնտեսական կամ զինվորական պաշտոններ զբաղեցրած անձինք, իշխանությունն իրենց ձեռքերում կենտրոնացնելով, ինքնիշխան տիրակալ-կառավարիչներ՝ խաներ էին դառնում⁷³: Ուստի, ԺԸ դարի երկրորդ կեսի քաղաքական իրավիճակի համատեքստում

⁷¹ П. Валуев, Фатали-хан Кубинский, Баку, 1942, с. 4.

⁷² 1939 թվականից դայթադները գրանցված են որպես դարգիններ (տե՛ս Народы Дагестана, Отв. ред. С. А. Арутюнов, А. И. Османов, Г. А. Сергеева, Москва, 2002, с. 321-322).

⁷³ Описание Шекинской провинции, составленное в 1819 году, генерал-майором Ахвердовым и статским советником Могилевским, Тифлис, 1866, с. 1.

«խան» եզրույթը իմաստային որոշակի փոփոխությունների էր ենթարկվել: Եթե նախկինում (Մեֆյան Իրանում, Նադիր շահի պետության շրջանակներում) խանը Սպահանից նշանակված իրանական պաշտոնյա էր, ով պատասխանատու էր շահի առաջ, ապա ԺԸ դարի երկրորդ կեսին խանն ինքնիշխան, անսահմանափակ իշխանությամբ եւ լայն լիազորություններով օժտված արեւելյան տիրակալ էր: Ավելին, ինքնիշխան խաները հաճախ ժառանգաբար էին փոխանցում իշխանությունը՝ փաստելով, որ նշված ժամանակահատվածում իրանական գերիշխանությունն Արեւելյան Այսրկովկասում ձեւական բնույթ էր կրում: Խաների ինքնիշխան կարգավիճակի մասին է վկայում նաեւ այն, որ 1764թ. նոյեմբերի 23-ին ռուսաստանյան սենատի որոշմամբ աստրախանցի հայազգի ձեռնարկատեր Աբրամովիչ Ֆաթի Ալի խանի «համաձայնությամբ» իրավունք էր տրվել Սալխանում ձկնորսական արդյունաբերություն հիմնել⁷⁴: Հատկանշական է, որ ռուսական իշխանությունները դրա շուրջ բանակցությունները վարում էին ոչ թե Ձենդերի իրանական կառավարության, այլ Ղուբայի խանի հետ: Հետեւաբար, Այսրկովկասի խաներն իրենք էին տնօրինում իրենց տիրույթների ներքին կյանքի բոլոր ոլորտները՝ շրջանցելով Շիրազում գտնվող իրանական շահական կառավարությունը:

Այսրկովկասյան խաներություններից միայն Նախիջեւանի խանությունն էր գտնվում Իրանի տիրակալների ազդեցության տակ: Նախիջեւանի Քենգերլու ցեղի առաջնորդ Քերիմ-սուլթանը՝ խնդրելով վերականգնել իր ժառանգական իրավունքները⁷⁵: Միաժամանակ Քերիմ խան եւ Ալի Մուրադ խան Ձենդերը, Աղա Մուհամմադ Ղաջարը պարբերաբար Նախիջեւանի ցեղային առաջնորդներին պաշտոններ էին տալիս Իրանի տերության տի-

⁷⁴ М. Чулков, История краткая российской торговли, Москва, 1788, с. 262.

⁷⁵ Передняя Азия в документах (Серия памяти Ю. Н. Марра), кн. I, Нахичеванские рукописные документы XVIII-XIX вв., Пер. и коммент. К. Н. Смирнова, Дж. Гаибова, Под ред. Ю. Н. Марра, Тбилиси, 1936, с. 62-63.

րակալի ֆերմանով⁷⁶: Նման տեղեկություններ Արեւելյան Այսրկովկասի խաների մասին հայտնի չեն: Հետեւաբար կարող ենք փաստել, որ Քերիմ խան Ձենդի իշխանությունն Արեւելյան Այսրկովկասում գրեթե բացակայում էր եւ տեղի խաների նկատմամբ չկար նախկին իրանական պետության վերահսկողությունը Ատրպատականի բեկլարբեկության միջոցով:

Այսրկովկասի տիրակալների Իրանի տերության կենտրոնական իշխանություններից քաղաքականապես անկախ լինելու մասին է փաստում այն, որ 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում սուլթանի պատվիրակները մեծամեծ նվերներով այցելում էին Քերիմ խանին եւ խնդրում «խաղաղեցնել» Հերակլ Բ արքային: Իրանի տիրակալը պատասխանում է, որ ինքը չի կարող բավարարել խնդրանքը, քանի որ Հերակլ Բ արքան իրեն «չի լսում»⁷⁷ (այսինքն՝ քաղաքական առումով ինքնուրույն է):

Խաների ինքնիշխանության մասին էր վկայում նաեւ խանություններում դրամահատության փաստը⁷⁸: Սակայն Արեւելյան Այսրկովկասի խանություններում հետեւում էին իրանական դրամահատության քաղաքականությանը, ինչը դիվանագիտական քայլ էր տարածաշրջանում նկրտումներ ունեցող Օսմանյան եւ Ռուսական կայսրությունների նկատմամբ: Հետեւելով իրանական դրամահատության կանոններին՝ խաները հավատարմություն ու հնազանդություն էին հայտնում Իրանի տիրակալներին: Դա փաստում է, որ խաներն ավելի հակված էին դեպի Իրանական պետությունը, ինչը համահունչ էր նրանց խուսանավելու քաղաքականությանը:

⁷⁶ Тбилисская коллекция персидских фирманов, т. II, Сост. М. А. Тодуа, И. К. Шамс, Тбилиси, 1989, док. № 55, 56, 58-62, 64, 66, 68-69, 71-73, 76.

⁷⁷ Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, Подг. В. Мачарадзе, ч. III, вып. II, Тбилиси, 1997, с.499.

⁷⁸ Տե՛ս Գ. Մխիթարյան, XVIII դարի երկրորդ կեսին Հյուսիս-արեւելյան Այսրկովկասի խանություններում դրամահատության հարցի շուրջ, – ՄՄՍԵԺ, հտ. XXX, Եր., 2016, էջ 170-180:

ԳԼՈՒԽ Բ

ԱՐԵՒԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԹՆՈ-ԴԱՎԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Հնուց ի վեր Կովկասը հայտնի է եղել որպես զանազան ցեղերի եւ ժողովուրդների օրրան՝ վառ արտահայտված էթնիկ բազմազանությամբ:

Բացառություն չէր նաեւ Արեւելյան Այսրկովկասը, որը դարերի ընթացքում իր վրա է կրել օտար նվաճողների քաղաքական լուծը եւ ենթարկվել էթնո-մշակութային փոխակերպումների: Երկրամասի ԺԸ դարի երկրորդ կեսի էթնո-դավանական պատմության ուսումնասիրությունը սերտորեն կապված է տարածաշրջանի ժողովուրդների ճակատագրերի հետ: Խորհրդային պատմագիտության մեջ հարցը խիստ քաղաքականացվել է արմատավորելով Արեւելյան Այսրկովկասի էթնիկ իրավիճակի՝ որոշակիորեն գիտակցված խեղաթյուրման գործելաոճը, երբ «ուղղում էին» արխիվային վավերագրերի «թաթարներ» եւ «պարսիկներ»⁷⁹ հավաքական անվանումները՝ դրանք փոխարինելով «ադրբեջանցի» եզրույթով՝ իր ժամանակակից ընկալմամբ, եւ վարում էին այս տարածքներում ադրբեջանցիների գոյությունը «հնացնելու» քաղաքականությունը:

Իրանի տերության պատմության քննվող ժամանակահատվածում «պարսիկ» անվանումը պարտադիր էթնիկ նշանակություն չունի: ԺԸ դարում «պարսիկ» էին կոչում իրանական ծագմամբ ժողովուրդներին, իսկ վաճառականների պարագայում այն կարող էր նշանակել իրանահպատակ (Իրանի տերության քաղաքացի): Ժամանակակցի փոխանցմամբ՝ ԺԸ դարի սկզբին Շամախիում բնակվում էին մեծամասամբ պարսիկներ, ինչպես նաեւ՝ «զգալի թվով» հայեր եւ վրացիներ: Շիրվանում խոսակցական լեզուն պարսկերենն էր, իսկ թուրքերենը համարում էին գոեհիկ

⁷⁹ О. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966, с. 77, прим. 53.

լեզու⁸⁰: 1733-1735 եւ 1745-1747 թթ. Արեւելյան Այսրկովկաս այցելած բժիշկ Յ. Լերիսեն Շիրվանի մահմեդական բնակիչներին պարսիկներ է կոչում, բացառությամբ Դերբենդի շրջանի, որտեղ խոսում է նաեւ թաթարների մասին⁸¹: Հավելենք, նաեւ որ Շամախիի Մուստաֆա խանն ինքն իրեն «այնպիսի պարսիկ» էր համարում, ինչպիսին Իրանի տիրակալ Բաբա խանն էր⁸²:

Ս. Գմելինը ԺԸ դարի 70-ական թվականների առաջին կեսին Դերբենդից մինչեւ Բաքու ընկած տարածքի մահմեդական բնակչության մասին նշում է, որ նրանք թաթարական եւ պարսկական արյուններից առաջացած «խառնուրդ» են⁸³, որը դեռեւս ձեւավորված ժողովուրդ չէ:

Արեւելյան Այսրկովկասի թաթարներին Աստրախանի եւ Կազանի թաթարներից զանազանելու համար ԺԸ դարի երկրորդ կեսի ռուսական ակադեմիական շրջանակները նրանց տալիս են «լեռնային թաթարներ» անվանումը⁸⁴: Նույն ժամանակաշրջանում Կովկաս այցելած ակադ. Յ. Գյուլդենշտեդտն այստեղ բնակվող թաթարական երեք տիպի ժողովուրդներ էր տարբերում, այն է կումիկների, թերեքեմենների եւ նոդայների: Նրանց լեզվական ընդհանրությունը թուրքերենի հետ այնքան մեծ էր⁸⁵, որ գիտնականը դա համեմատում էր իտալերենի, իսպաներենի եւ պոր-

⁸⁰ J. Bell, *Travels from St. Petersburg in Russia, to various parts of Asia. A new edition, in one volume*, Edinburgh, 1806, p. 45-46.

⁸¹ Иоганн Лерхе, Выписка из путешествия Иоанна Лерхе, продолжавшегося от 1733 по 1735 год из Москвы до Астрахани, а оттуда по странам лежащим на западном берегу Каспийского моря, – «Новые ежемесячные сочинения», ч. XLIII, янв., СПб., 1790, с. 11.

⁸² АКАК, т. II, 1868, с. 662.

⁸³ С. Гмелин, указ. соч., с. 19.

⁸⁴ Описание всех в Российском государстве обитающих народов, также их житейских обрядов, вер, обыкновений, жилищ, одежд и прочих достопамятностей, ч. II, СПб., 1776, с. 45.

⁸⁵ Լեզվական ընդհանրությունների մասին է նշում նաեւ Ա. Բաքիխանովը (А. Бакиханов, Происхождение племен, населяющих нынешние закавказские провинции, – Сочинения. Записки. Письма, Баку, 1983, с. 133).

տուգալերենի ընդհանրության հետ⁸⁶: Յ. Գյուլդենշտեդտը նշում էր, որ Շիրվանում օգտագործվող «թուրքական բարբառի թաթարերենը» եւ թուրքերենն այնքանով են իրարից տարբերվում, որքանով լատիներենն իտալերենից: Թաթարական երեք լեզուներից առավել մոտ էր թուրքերենին թերեքեմենների լեզուն: Որպես թերեքեմենների էթնիկ տարածքներ Յ. Գյուլդենշտեդտը նշում էր Հարավային Դաղստանը, Դերբենդը, Շիրվանը՝ Ֆաթի Ալի խանի ողջ տիրույթները մինչեւ Սալիան⁸⁷:

ԺԸ դարի երկրորդ կեսին ընդունված չէր տարածաշրջանի մահմեդական (տվյալ դեպքում՝ թյուրքալեզու) ժողովուրդներին միմյանցից տարանջատել ըստ նրանց այս կամ այն ցեղին պատկանելության: Առավել տարածված էր նրանց «թաթարներ» ընդհանրական անվանումով կոչելը: Օր.՝ Հերակլ Բ արքան Ստ. Բուռնաշեհին ուղղված նամակում գրում էր. «այնտեղի [Երեւանի] թաթարական ժողովուրդներից մեկը՝ այրումլուները⁸⁸, տեղափոխվել են Շորագյալ»⁸⁹: Իսկ Շամախիի խանությունում 700 առվ (գյուղ) քանակով Խան Չոբանի սուննիադավան ցեղ էր քոչում, որն անհրաժեշտության դեպքում Շամախիի խանին տրամադրում էր 500 զինված մարտիկ⁹⁰:

Պատմական բոլոր ժամանակներում փոքրաթիվ էթնուները արհեստականորեն համախմբվում (կոնսոլիդացվում) են մեծաքանակ ժողովուրդների շուրջ որպես ինքնապահպանման յուրօրինակ միջոց: Թերեւս, այդ համատեքստում է պետք դիտարկել Արեւելյան Այսրկովկասի «թաթար» բազմացեղ էթնիկ

⁸⁶ И. Гюльденштедт, Географическое и статистическое описание Грузии и Кавказа, СПб., 1809, с. 101.

⁸⁷ Иоганн Антон Гильденштедт, Путешествие по Кавказу в 1770-1773 гг. СПб., 2002, с. 257.

⁸⁸ Այրումլուների մասին տե՛ս В. Кобычев, Айрумы (К вопросу о происхождении этнонима), – СЭ, 1962, № 3.

⁸⁹ РГВИА, ф. 52, оп. 1/194, д. 331, ч. VII, 1784 г., л. 42.

⁹⁰ С. Броневский, Новейшие географические [статистические и этнографические] и исторические известия о Кавказе, собранные и пополненные Семеном Броневским, ч. II, Москва, 1823, с. 434.

հանրության խնդիրը, որը համախմբվում էր իրանական ժողովուրդների շուրջ փոխառելով նրանց ավանդույթները: Այդպես, ԺԺ դարում Բաքվի նահանգի թաթարները, անգամ՝ սուննի, սովորույթներով ու կենցաղով ավելի նման էին իրանցիներին («պարսիկներին»), քան թուրքերին⁹¹:

Մուղանի հարթավայրում գտնվող թերեքեմենների (թարաքամա) ցեղի մասին Ստ. Բուռնաշեւը հաղորդում է, որ շուրջ 1500 ընտանիք Թալա Հասան խանի գլխավորությամբ ճանաչում էին Ֆաթի Ալի խանի գերիշխանությունը⁹²: Մինչև Ի դարի սկիզբը թերեքեմենները դիտարկվել են որպես առանձին էթնոս, սակայն հետագայում նրանք միաձուլվել-ձուլախառնվել են (էթնոմիքսացիա) ադրբեջանցիների մեջ՝ որոշ չափով պահպանելով էթնիկ ինքնանվանումն ու ինքնընկալումը: Հարեանները կումիկները, դարգինները, նրանց կոչում են թերեքեմեններ, իսկ հյուսիսային կումիկները, ավարները, դարգինների մի մասը եւ ուրիշներ՝ փադար⁹³: Հայկական աղբյուրում «թարաքամա»-ն հիշատակվում է որպես «վրանաբնակաց եւ խաշնարածաց ազգ մի»⁹⁴: Իհարկե, դեռեւս Ի. Պետրուշենսկին է նկատել, որ «թերեքեմե» էին կոչում ընդհանրապես Արեւելյան Այսրկովկասի բոլոր թյուրքալեզու կամ թյուրքական ծագումով քոչվոր ցեղերին («թերեքեմե» եզրույթն էլ թուրքմեն բառի հոգնակի ձեւն է)⁹⁵: Այսինքն՝ դա ոչ թե մի առանձին ցեղախմբի անվանում էր, այլ օտարների տված ընդհանրական էքզոէթնոնիմ, ինչպես, օր. «թաթար»-ը:

Արեւելյան Այսրկովկասի խանությունների ժողովուրդների եւ «իսկական պարսիկների» միջեւ տարբերությունները 1796 թ. Վասպիական արշավանքի մասնակից Մ. Ֆոն Բիբերշտայնը բացատրում էր նրանց՝ Վովկասի այլ ազգերի, մասնավորապես

⁹¹ Н. Зейдлиц, Этнографический очерк Бакинской губернии, – «Кавказский календарь» на 1871 год, Тифлис, 1870, с. 52.

⁹² С. Бурнашев, указ. соч., с. 11.

⁹³ Народы Дагестана, Москва, 2002, с. 507.

⁹⁴ Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառոտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 16:

⁹⁵ И. П. Петрушевский, указ. соч., с. 134, 160.

Կասպից ծովի հյուսիսային շրջանների թաթարական ցեղերի հետ խառնուրդի հանգամանքով: Նա այն կարծիքին էր, որ նրանք ավելի շուտ արժանի են՝ անվանվելու «Կովկասի թաթարներ», քան «պարսիկներ»: Այդ տարբերությունը Մ. ֆոն Բիբերշտայնը հիմնավորում էր թաթարների լեզվական եւ դավանական առանձնահատկություններով: Նա նաեւ գտնում էր, որ թաթարների լեզուն տարբերվում է Տավրիդայի (Ղրիմի) թաթարների լեզվից, եւ փոքր-ինչ նմանություններ էր տեսնում Ուկրաինայի եւ Ռուսաստանի թաթարական խոսվածքների հետ: Պարսկերենն օգտագործվում էր լոկ պետական գրագրության մեջ եւ Շիրվանի խանական միջավայրում: Պարսիկներից թաթարներին տարբերելու մյուս կարեւոր գործոնը, ըստ Մ. ֆոն Բիբերշտայնի, կրոնն էր: Թեպետ խաները, նրանց շրջապատը հետեւում էին շիա դավանանքին, սակայն գրեթե ողջ Դաղստանում եւ Շիրվանում հասարակ բնակչությունը սուննի դավանանք ուներ⁹⁶:

Անշուշտ, իրանալեզու ժողովուրդները Արեւելյան Այսրկովկասի հնաբնակ ժողովուրդներից էին եւ ԺԸ դարի երկրորդ կեսին իրենց գոյությունը շարունակում էին թվային առավելությամբ: Այդ մասին գրավոր վկայություններ են պահպանվել Վ. Զուբովի Կասպիական արշավանքի ընթացքում ռուս սպաների կատարած ազգագրական հետազոտություններում, որտեղ ծխերի վերաբերյալ վիճակագրական տվյալները առնչվում են բացառապես հայերին, հրեաներին եւ պարսիկներին: Դերբենդի շիա-յադական էթնիկ հանրության նկատմամբ որոշ հեղինակների մոտ հանդիպող «թաթեր» եզրույթը⁹⁷ պետք է դիտարկել պատմաքաղաքական եւ էթնոմշակութային զարգացումների ֆոնին. ի սկզբանե թյուրքերն այդպես էին կոչում իրանալեզու ժողովուրդներին, որպես թյուրքերենին վատ տիրապետողների եւ այլն: Ժա-

⁹⁶ **Marschall von Bieberstein**, Tableau des provinces situées sur la cote occidentale de la mer Caspienne entre les fleuves Terek et Kour, St. Pétersbourg, 1798, p. 89.

⁹⁷ Տե՛ս, օր.՝ **А. Серёбров**, указ. соч., с. 177. Հնմ. **П. Бутков**, Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде письма». 1796 г., с. 204.

մանակի ընթացքում «թաթ» եզրույթը վերածվում է էթնոնիմի իրանալեզու գանազան էթնիկ խմբերի համար, որոնք տարբեր էին իրենց ծագումով ու մշակույթի մյուս տարրերով⁹⁸:

ԺԹ դարի առաջին ռուս-պարսկական պատերազմից (1804-1813 թթ.) անմիջապես հետո Արեւելյան Այսրկովկասի էթնո-քաղաքական նկարագրության մեջ նշվում են հայեր, հրեաներ, սուննի եւ շիա դավանանքի մահմեդականներ⁹⁹ (վերջիններիս տակ պետք է հասկանալ եւ թյուրքական ծագումով ցեղերին, եւ տարածաշրջանի էթնիկ հին շերտերից մեկին՝ իրանալեզու ժողովուրդներին): Դրանով Կովկասի ռուսական բարձրաստիճան զինվորական հրամանատարությունը հիմք էր դնում տարածաշրջանից «պարսիկ» էթնոնիմի բնաջնջմանը եւ փոխարենը՝ Արեւելյան Այսրկովկասի արհեստականորեն թյուրքացման քաղաքականությանը: Տեղաբնիկ ժողովուրդների համար վտանգավոր այդ միտումը պիտի ամրապնդեր ռուսական տիրապետությունը Արեւելյան Այսրկովկասում՝ պոկելով այն Իրանի տերությունից, արմատախիլ անելով «պարսկական» գրավոր մշակույթի ավանդույթները: Իրանական տարրերի էթնանուններին որպես այլընտրանք գերադասելի է դարձվում «մահմեդականներ» («մուսուլմաններ») անվանումը՝ շեշտը դնելով «թաթարների» վրա: Ծագելով եւ զարգանալով ռուսական կայսրության ներսում՝ էթնո-քաղաքական այս գործընթացն իր զագաթնակետին հասավ Խորհրդային Միության օրոք, երբ նախկին «կովկասյան, ադրբեջանական թաթարներ», «թյուրք» կամ «թաթար» անվանումները պաշտոնապես փոխարինվեցին «ադրբեջանցի» արհեստական էթնանվամբ¹⁰⁰:

⁹⁸ Г. Асатрян, Этническая композиция Ирана: от «Арийского простора» до азербайджанского мифа, Ер., 2012, с. 81.

⁹⁹ Ф. Ртищев, Сведения о Дагестане. 1813 г., – ИГЭД, с. 250.

¹⁰⁰ В. Худадов, Современный Азербайджан, – «Новый Восток», Москва-Ленинград, 1925, № 3, с. 167; А. Алекперов, Азербайджанцы, – Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, с. 71-77; Գ. Ստեփանյան, Արեւելյան Այսրկովկասում «ադրբեջանցի»

Այնուամենայնիվ, ԺԹ դարի կեսերին ռուս ազգագրագետ Ն. Ջեյդլիցի կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Բաքվի գավառի ողջ բնակչության շուրջ 65,78 տոկոսը կազմել են թաթերը, այսինքն՝ նախկին պարսիկները, իսկ Շամախիի եւ Ղուբայի գավառներում այդ տոկոսը եղել է համապատասխանաբար 10,07 եւ 30,52¹⁰¹:

Իրանալեզու ժողովուրդների մյուս հատվածը ներկայացնում էին թալիշները, որոնք ԺԹ դարի կեսերի տվյալներով կազմում էին Լենքորանի գավառի գրեթե կեսը (43,33 տոկոսը՝ թաթարների 44,20 տոկոսի թվային հարաբերակցության պարագայում)¹⁰²: Ի դեպ, ըստ Յ. Գերբերի՝ Շամախիի, Ջավադի, Ղաբալայի, Սալիանի մահմեդական բնակչության մեծ մասը նախքան 1720-ական թվականների խառնակ ժամանակները շիաներ են եղել: Շամախիում Սուրխայ խանի եւ Դավուդ բեկի քաղաքական իշխանության հաստատման հետեւանքով շիա դավանանքի մահմեդական բնակչությունը վախից թաքցնում էր այդ հանգամանքը, երբեմն էլ՝ ստիպված դառնում սուննի¹⁰³: Խոռվարար խանը եւ բեկը թուրքամետ քաղաքականություն էին վարում, հետեւաբար, շիա լինելը սպառնում էր ֆիզիկական ոչնչացմամբ¹⁰⁴: Այդ քաղաքականության համատեքստում է անհրաժեշտ դիտարկել նաեւ այն երեւույթը, երբ ԺԹ դարի ազգագրական ուսումնասիրությունները փաստում էին, որ Արեւելյան Այսրկովկասում շիա կամ սուննի լինելը ամենեւին չէր վկայում տվյալ ցեղի կամ ժողովրդի իրանական կամ թուրքական ծագման մասին: Ն. Ջեյդլիցի կազմած ազգագրական քարտեզում պատկերված էին իրանական գյուղեր, որտեղ իշխում էր իսլամի սուննի դավանական ուղղությունը, եւ ընդհակառակը՝ «թաթարներ», որոնք շիա դա-

եզրույթի էթնիկական գործառնան հարցի շուրջը, – ՄԱ, պր. V, Եր., 2008, էջ 142:

¹⁰¹ Н. Зейдлиц, указ. соч., с. 53.

¹⁰² Նույն տեղում:

¹⁰³ И. Гербер, Описание стран и народов вдоль западного берега Каспийского моря. 1728, с. 95.

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 94-96, 99-100:

վանանքի էին¹⁰⁵: Իհարկե, նշելի է, որ «թաթարների» մեծ մասը հենց շիա էր (օր.՝ բոլոր ղզլբաշական ցեղերը), ուստի վերջին հանգամանքը չպետք է դիտարկել որպես պարադոքսալ:

Արեւելյան Այսրկովկասի եւ Մուղանի հարթավայրի էթնոքաղաքական քարտեզին իրենց տեղն ունեին իրանալեզու քրդական ցեղերը: Նրանց մասին վկայություններ կան Դերբենդի խանության շրջանում, իսկ շուրջ 2000-3000 ընտանիք ապրում էր Արաքսի աջ ափին¹⁰⁶: Քրդական շաղաղի¹⁰⁷ ցեղախումբը՝ 7000-8000 ընտանիք, անասնապահ եւ ռազմատենչ իսլամադավան ժողովուրդ էին, որոնք մինչ այդ 12000 ընտանիք էին: Չմտանք քոչում էին Մուղանի հարթավայրում, իսկ ամռանն ապրում Արդեբիլի եւ Թավրիզի միջեւ գտնվող Սավալան լեռան լանջերին: Շաղաղիների տիրակալ Սադեդ խանը Թավրիզի խանից կախվածության մեջ էր գտնվում¹⁰⁸: Այդ առումով ուշագրավ տեղեկություն է փոխանցում 1715 թ. տարածաշրջան այցելած շոտլանդացի ճանապարհորդ Ջ. Բելը՝ նշելով, որ Մուղանի դաշտը ռուսներն էին այդպես կոչում, իսկ պարսիկները հարթավայրը Քուրդիստան էին անվանում եւ հավելում, որ քրդերն այստեղ ապրում են ողջ տարին¹⁰⁹:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Արեւելյան Այսրկովկասի էթնիկ նկարագրի մեջ իրենց ուրույն տեղն ունեին շահսեւանները՝ Իրանի հյուսիս-արեւմտյան տարբեր հատված-

¹⁰⁵ Н. Зейдлиц, указ. соч., с. 48.

¹⁰⁶ С. Бурнашев, указ. соч., с. 17. Հմմ. А. Серебров, указ. соч., с. 177.

¹⁰⁷ Շաղաղի կոչվող քրդական ծագմամբ այս ցեղը հիշատակվում է ԺԶ դարի քուրդ հեղինակ Շարաֆ խան Բիթլիսիի կողմից, որպես Ջազիրայի նահանգներից մեկում ապրող քրդական չոքս աշիրեթներից մեկը (Шараф-хан ибн Шамсаддин Бидлиси, Шараф-наме, т. I, Москва, 1967, с. 206).

¹⁰⁸ С. Бурнашев, указ. соч., с. էջ 11.

¹⁰⁹ Дж. Белл, Белевы путешествия чрез Россию в разные Азиатския земли, а именно: в Испаган, в Пекин, в Дербент и Константинополь, ч. I [Путь в Персию и Китай], Перевел с французскаго Михайло Попов, СПб., 1776, с. 62.

ներում գտնվող բազմաթիվ ցեղային խմբերի ամբողջությունը¹¹⁰: Նրանց ձեռավորման պահին (առաջին Մեֆյան շահերի օրոք) նախատեսվում էր, որ շահսեւաններ կարող էին դառնալ նաեւ ոչ թուրքական ժողովուրդների ներկայացուցիչներ, օր.՝ կովկասյան ժողովուրդներ, իրանական էթնիկ խմբեր (թալիշներ, քրդեր), անգամ՝ քրիստոնյաներ¹¹¹:

Շահսեւանները Արեւելյան Այսրկովկաս էին վերաբնակեցվում Իրանի տերության տարբեր նահանգներից¹¹²: Նրանց հիմնական զբաղմունքն անասնապահությունն էր: Ամռան ամիսներին նրանք բարձրանում էին լեռները, իսկ ձմռանը բնակվում Շաբրանի մահալում, որի իրավունքը ստացել էին Ղուբայի Հուսեյն Ալի եւ Ֆաթի Ալի խաներից¹¹³: Վերջինիս թույլտվությամբ շահսեւանները Մուհամմադ խանի գլխավորությամբ Արդեբիլից վերաբնակվել էին Ղուբայի խանության Մուսկուր եւ Շաբրան մահալների Բայանդուրլի, Ուսթաջլի, Չայլաղլի, Ղարադաղլի եւ մի շարք այլ գյուղեր՝ դառնալով Ֆաթի Ալի խանի հարկատուները¹¹⁴:

Ինչ վերաբերում է ԺՀ դարի երկրորդ կեսին Բուն Աղուանք – Ալբանիայի էթնիկ հանրությանը, ապա բացի իսլամ ընդունած ցեղերից քրիստոնյա բնիկ ժողովուրդների ու ցեղերի հետնորդներ էին ուղիները¹¹⁵: Ըստ ԺԹ դարի առաջին կեսի հայկական եւ

¹¹⁰ R. Tapper, *Frontier nomads of Iran. A political and social history of the Shahsevan*, Cambridge University press, 1997, p. 24; նույնի՝ *Shahsevan in Safavid Persia*, – BSOAS, Vol. 37, № 2 (1974), p. 321-354; Б. Балаян, К вопросу об общности этногенеза шахсевен и кашкайцев, – «Արեւելագիտական ժողովածո», I, Եր., 1960:

¹¹¹ Г. Асагрян, указ. соч., с. 54, прим. 23.

¹¹² С. Бурнашев, указ. соч., с. 11-12: Շահսեւանների մասին առավել մանրամասն տե՛ս նաեւ И. Огранович, Сведения о шахсевенах, – «Кавказский календарь» на 1870 год, Тифлис, 1871, с. 68-84; *The Encyclopaedia of Islam*, Vol. IX, Leiden, 1997, p. 221-225.

¹¹³ А. Серебров, указ. соч., с. 177. Հմմ. С. Броневский, указ. соч., с. 388.

¹¹⁴ Ф. Симонович, указ. соч., с. 147.

¹¹⁵ Ուղիների մասին վերջին անգամ տե՛ս Հ. Խառատյան (Առաքելյան), Ուղիներ (Աղվանների առասպելը), – («Իրան-նամե»), 1994, հ^տ 2, էջ 12-

այլ աղբյուրների՝ ուղի-ուտիները բնակվում էին լոկ Շաքիի նահանգի Վարդաշեն եւ Նիժ գյուղերում¹¹⁶:

ԺՀ դարի երկրորդ կեսին Արեւելյան Այսրկովկասի սուննի մահմեդական բնակչության հոծ մեծամասնությունն էին կազմում լեզգիները¹¹⁷: Նրանց զբաղեցրած էթնո-քաղաքական տարածքը դեռեւս ԺԴ-ԺԵ դարերում եւրոպական աղբյուրները կոչում էին «Լեզգիստան» եզրույթով¹¹⁸: Համաձայն ԺՀ դարի գրավոր աղբյուրների՝ այդ ընդարձակ տարածքը վրացիները եւս կոչում էին Լեզգիստան¹¹⁹: Վերջինիս էթնո-քաղաքական սահմանը մի կողմից (ըստ Յ. Գյուլդենշտեդտի) Ալազան գետն էր, մյուս կողմից՝ Սամուրի գետահովտի շրջանները¹²⁰: Հատկանշական է, որ 1720-ական թվականներին (Յ. Գերբերի հաղորդմամբ) Լեզգիստան նահանգի մեջ էին մտնում Ղուբա եւ Շաքի բնակավայրերը¹²¹, ինչը նրանցում ոչ թե թյուրքական ցեղերի, այլ կովկասյան (ավելի ստույգ՝ լեզգիական) ժողովուրդների թվական առավելության մասին է վկայում: Ավելին, եթե Ղուբայում օգտագործվող հիմնական լեզուն նա համարում է «թուրք-թաթարերենը», ապա Շաքիում՝ լեզգիերենը:

ԺՀ դարի երկրորդ կեսին Արեւելյան Այսրկովկասում բուն աղուանական ծագմամբ ցեղերից շարունակում էին իրենց գոյությունը պահպանել նաեւ մահմեդական ոչ մեծաքանակ խի-

16; նույնի՝ Եղիշե Առաքյալի պաշտամունքն ուղիների մեջ եւ Ուտի գավառի հարցի շուրջը, – ԼՀԳ, 1991, հ⁴ 6, էջ 70-86; նույնի (Харатьян Г.) Этноконфессиональные процессы в зоне Шеки-Кабала (XVIII-XX вв.), – «Научная мысль Кавказа», № 3, Ер., 2003, с. 80-89.

¹¹⁶ Ըանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Աշխատասիրութեամբ՝ Սարգսի Սանահնեցոյ Զալալեանց, մասն Բ, Տիփլիս, 1858, էջ 379, 381:

¹¹⁷ Լեզգիների մասին տե՛ս, օր. Народы Дагестана, с. 376-398.

¹¹⁸ Иоганн Шильтбергер, Путешествие Иоганна Шильтбергера по Европе, Азии и Африке с 1394-го по 1427 год, – Кавказ: европейские дневники XIII-XVIII веков, Сост. В. Аталиков, Нальчик, 2010, вып. III, с. 16.

¹¹⁹ Описание всех в Российском государстве обитающих народов, ч. II, СПб., 1776, с. 46.

¹²⁰ И. Гюльденштедт, указ. соч., с. 115.

¹²¹ И. Гербер, указ. соч., с. 107, 110.

նալուղցիները, կրիզները, բուդուղները, ջիբերը եւ այլն, որոնց էթնիկական անվանումները պահպանվել էին միայն իրենց գյուղատուններում՝ Բուդուղ, Խինալուղ, Կրիզ, Ջիբ, Ալիկ եւ Խապուտ (Հափութ): ԺԸ դարի վերջի տվյալներով՝ Ղուբայի խանության Խինալուղի եւ Բուդուղի մահալները ընդունված էր կոչել Դադստան¹²²՝ հավանաբար, հիմք ընդունելով նրանցում լեզգի էթնիկ տարրի թվական գերակշռությունը¹²³:

Ըստ Յ. Գերբերի հիշատակությունների՝ Շահդաղ լեռան շրջակայքում ապրող այդ ժողովուրդները լեզգիերենի կրողներ եւ «ուղղադական իսլամի» (իմա՝ սուննի) հետեւորդներ էին¹²⁴ : «Շահդաղյան իսլամի ժողովուրդների» լեզվի յուրահատկության մասին ԺԹ դարի երկրորդ կեսին հաղորդում էր նաեւ դադստանյան ժողովուրդների լեզուների գիտական դասակարգմամբ զբաղվող կոմս Պ. Ուսլարը: Նա նշում էր, որ Խինալուղում, Բուդուղում եւ Կրիզում գործածվող լեզվի մասին հարեւան լեզգիները հավաստիացնում էին իրեն, թե ոչ մի ընդհանրություն չկա իրենց լեզվի հետ¹²⁵:

ԺԸ դարի երկրորդ կեսի գրավոր աղբյուրները հիշատակություններ են թողել Արեւելյան Այսրկովկասում հրեաների մասին¹²⁶ : Նրանք ապրում էին Դերբենդի խանությունում¹²⁷, իսկ

¹²² Ф. Симонович, указ. соч., с. 144.

¹²³ Sté u M. Пашаева, К этнической истории шахдагских народов, – Albania Caucasicca, Сб. статей, Предисл., подгот. А. Аликберов, М. Гаджиев, вып. I, Москва, 2015, с. 148-153.

¹²⁴ И. Гербер, указ. соч., с. 80-83. Խորհրդային տարիներին ընդունված էր Ադրբեջանական ԽՍՀՄ-ում գտնվող Շահդաղ լեռան անունից նրանց կոչել «շահդաղյան իսլամի ժողովուրդներ» (տե՛ս Народы Кавказа, Под ред. Б. А. Гарданова, А. Н. Гулиева, С. Т. Еремяна, Л. И. Лаврова, Г. А. Нерсесова, Г. С. Читая, Москва, 1962, т. II, с. 199).

¹²⁵ Барон П. Услар, Этнография Кавказа. Языкознание. VI. Кюринский язык, Тифлис, 1896, с. 6.

¹²⁶ Կովկասում հրեաների պատմության դասակարգումը տե՛ս И. Давид, История евреев на Кавказе, В 2-х томах, Тель-Авив, 1991, т. I, с. 26.

¹²⁷ J. Reineggs and M. Bieberstein, указ. соч., с. 158.

Ղուրա քաղաքի դիմաց գտնվում էր հրեական Կուլգաստ գյուղը (200 ծուխ)¹²⁸, որտեղ չորս սինագոգ էր գործում:

Արեւելյան Այսրկովկասի ԺԸ դարի երկրորդ կեսի էթնո-քաղաքական խճանկարում իրենց ուրույն տեղն էին զբաղեցնում հայերը¹²⁹: Ս. Գմելինի տվյալով Դերբենդ քաղաքում 1770-ական թվականներին շուրջ 4000 ընտանիքներ կային, որոնցից 100-ը՝ հայկական¹³⁰: Ժամանակի մեկ այլ աղբյուրի համաձայն՝ 1780-ական թվականներին Թոփրաքկալեից քիչ հեռու, Գուրգենչայ գետի աջ ափին, դեպի լեռները ձգվող շուրջ 30 գյուղից 15-ը հայկական էին¹³¹: Հովսեփ Արղությանը 1796 թ. փետրվարի 24-ին գնեռալ Ի. Սավելեւին գրած նամակում հիշատակում է Դերբենդի շրջակայքի հայկական 9 գյուղերի մասին¹³²: ԺԸ դարի վերջի քաղաքական շրջադարձերի հետեւանքով հայ բնակչությունը կտրուկ անկում է ապրում: 1818 թ. Հովհաննես արքեպիսկոպոսի կազմած Ադուանից կաթողիկոսության Շամախու հայոց թեմի նվիրակության ցուցակում Դերբենդ քաղաքում հիշատակվում է ընդամենը 15-20 հայկական տուն¹³³:

Ղուրայի խանությունում հայերը հիմնականում ապրում էին Մուսկուրի մահալում եւ ունեին շուրջ 180 տուն, 6 եկեղեցի (10 հոգեւոր սպասավոր)¹³⁴: Ղուրա քաղաքի մերձակա տարածքներում մի քանի հայկական տներ կային, որոնցից մեկում իջեւանել էր Ս. Գմելինը: Նիզաբադ կայանից ոչ շատ հեռու գտնվում էր

¹²⁸ А. Серебров, указ. соч., с. 205. Հմմ. С. Броневский, указ. соч., с. 384.

¹²⁹ ԺԸ դ. երկրորդ կեսին հայերի մասին տե՛ս Описание всех в Российском государстве обитающих народов, ч. IV, СПб., 1799, с. 45-54.

¹³⁰ С. Гмелин, указ. соч., с. 19; Жизнь Артемия Араратского, уроженца селения Вагаршапат близ горы Арарат, ч. II, СПб., 1813, с. 115.

¹³¹ СПФ АРАН, ф. 99, оп. 2, № 13, л. 23.

¹³² Армяно-русские отношения в XVIII веке. 1760-1800 гг., Сб. документов, Под ред. М. Нерсисяна, Ер., 1990 (հետախույ՝ ԱՐՕ), т. IV, с. 423.

¹³³ Գ. Ստեփանյան, Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին, էջ 46:

¹³⁴ П. Бутков, Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде письма». 1796 г., с. 205.

հայկական Բարագուն (կամ Վարագուն) կոչվող գյուղը¹³⁵, որը մտնում էր Նիզաբադի շրջանի մեջ¹³⁶: Հայեր էին ապրում նաև Ռուստյումի մահալում, որի Քիլվար գյուղի հայկական եկեղեցին, ըստ ավանդության, կառուցվել էր 1637 թ., սբ. Գրիգոր Լուսավորչի հիմնած եւ օծած մատուռի տեղում¹³⁷: Ավանդության համաձայն՝ Քիլվարի հայկական փայտաշեն եկեղեցու հին սեղանը պահպանվել էր սբ. Գրիգորիսի ժամանակներից (Դ դար). նրա ճակատային մասում նկատվում էին անծանոթ գրությամբ արձանագրություններ¹³⁸:

Դեռևս ԺԶ դարի անգլիացի ճանապարհորդ Ա. Ջենկենսոնի վկայությամբ Շամախին բնակեցված էր գլխավորապես հայերով¹³⁹: Ա. Գմելինի հաղորդմամբ Շամախիում կար 50 հայկական ընտանիք¹⁴⁰, որոնք խաղողի այգիների մշակությամբ եւ գինեգործությամբ էին զբաղվում¹⁴¹: Ստ. Բուռնաշեի վկայությամբ՝ 1780-ական թվականներին Շամախիի խանությունում 2000 քրիստոնյա ծուխ կար¹⁴²: Դարի վերջին Շամախի քաղաքում հիշատակվում էր 70 հայկական տուն, իսկ խանության 15 գյուղերում՝ 470 տուն¹⁴³:

¹³⁵ С. Гмелин, указ. соч., с. 48.

¹³⁶ J. Reineggs and M. Bieberstein, op. cit., p. 162.

¹³⁷ Մ. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 542:

¹³⁸ Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Աշխատասիրութեամբ՝ Սարգսի Սանահնեցոյ Ջալալեանց, էջ 424: Սբ. Գրիգորիսի մատուռի մասին տե՛ս Դ. Геворкьян, Часовня Святого Григориса: памятник от истоков христианства, – 1700-летие принятия христианства в Дербенте как государственной религии Кавказской Албании, Материалы Всероссийской конференции (Дербент, 14-15 ноября 2013 г.), Отв. ред. Г. Н. Сеидова, Махачкала, 2013, с. 77-87.

¹³⁹ Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, արքյուրներ Հայաստանի եւ Անդրկովկասի պատմության, հտ. Ա, ԺԳ-ԺԶ դարեր, Եր., 1932, էջ 372; Английские путешественники в Московском государстве, с. 205.

¹⁴⁰ С. Гмелин, указ. соч., с. 96.

¹⁴¹ Marschall fon Bieberstein, op. cit., p. 24.

¹⁴² С. Бурнашев, указ. соч., с. 10.

¹⁴³ И. Дренякин, указ. соч., с. 164-167.

Հայկական հոծ բնակչությունն իր առանձնահատուկ դերակատարությունն ուներ նաև Շաքիի խանության էթնիկ խճանկարում, որտեղ հայերը հիմնականում կենտրոնացած էին 62 գյուղերում¹⁴⁴:

Ստ. Բուռնաշեի տվյալներով՝ 1780-ական թվականներին Բաքու քաղաքում ապրում էին քրիստոնյա վաճառականների մի քանի ընտանիքներ¹⁴⁵: ԺՀ դարի վերջին Բաքվում պարսկական 500-620 եւ հայկական 40 ծուխ կար, իսկ խանության 34 գյուղերում՝ 580-850 ծուխ¹⁴⁶: 1818 թ. Հովհաննես արքեպիսկոպոսի կազմած՝ Աղուանից կաթողիկոսության Շամախու հայոց թեմի մասին նվիրակության ցուցակը Բաքու քաղաքում հիշատակում է 40 հայկական տուն:

Սալիանում հայկական բնակչության գոյության մասին է փաստում այն հանգամանքը, որ 1765 թ. Էջմիածնի կազմած «նվիրակական վիճակների» սահմանները ճշտող փաստաթղթում, ի թիվս հայկական այլ բնակավայրերի, հիշատակվում է նաև Սալիանը¹⁴⁷: Մ. Գմելինը նշում էր, որ Սալիան գավառում գյուղերը անկանոն կերպով սփռված էին Կուրի երկու ափերով եւ նրանցում ապրում էին պարսիկներ, թաթարներ ու «ոչ մեծ քանակությամբ հայեր»¹⁴⁸:

ԺՀ դարի երկրորդ կեսի գրավոր սկզբնաղբյուրների վերլուծությունը փաստում է, որ հայերը կարողանում էին իրենց գյուղերը որոշ չափով զերծ պահել այլ ժողովուրդների բնակեցումից: Այսպես, Ղուբայի խանության Շաքրանի մահալում կողք-կողքի ապրող հայկական եւ մահմեդական ընտանիքները թեև ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում էին, սակայն խանին ավե-

¹⁴⁴ А. Серебров, указ. соч., с. 180.

¹⁴⁵ С. Бурнашев, указ. соч., с. 11.

¹⁴⁶ С. Броневский, указ. соч., с. 401. Հմմ. И. Дренякин, указ. соч., с. 168; А. Серебров, указ. соч., с. 178.

¹⁴⁷ Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Գ, մասն Բ, Միմէռն կաթողիկոսի յիշատակարանը (1763-1767), Խմբագրեց՝ Գիւտ քահ. Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ 802:

¹⁴⁸ С. Гмелин, указ. соч., с. 112-113.

լին էին վճարում, որպեսզի հրեաներն իրենց մոտ չապրեն¹⁴⁹: Մեկ այլ վկայություն էլ վերաբերում է Մայր Աթոռի ֆինանսական միջոցներից կաթողիկոսի կողմից Երեւանի խանին վճարվող 5000 ռուբլի գումարին՝ որպեսզի հայկական գյուղերում մահմեդականներ չբնակեցվեն¹⁵⁰:

ԺՐ դարի երկրորդ կեսին Արեւելյան Այսրկովկասի խանությունները վառ արտահայտված կրոնական խայտաբղետ պատկեր ունեին: Այսպես, Ղուբայի խանության միայն Ղուբայի մահալի բնակչության մեծամասնությունն էր, որ կազմված էր սուննի թյուրքալեզու թաթարներից¹⁵¹: Մուսկուրի, Բերմեքի եւ Սաադանի մահալները գլխավորապես բնակեցված էին շիայադավան իրանալեզու թաթերով: Իսկ խանության Բուդուղի եւ Խինալուղի մահալներում բնակչությունը խոսում էր լեզգիերենին մոտ լեզուներով ու սուննիադավան էր¹⁵²: Ղուբայի Հուսեյն Ալի եւ Ֆաթի Ալի խաների վերաբնակեցման քաղաքականության արդյունքում Շաքրանի մահալը բնակեցված էր շիա շահսեւաններով, որոնք օգտագործում էին թյուրքերեն լեզուն¹⁵³:

Դավանական պատկերը Բաքվի խանությունում հոգուտ շիաների էր, որոնք խոսում էին աղավաղված պարսկերեն եւ թաթարերեն լեզուներով¹⁵⁴: Պատկերը գրեթե նույնն էր Մալխանում, ուր շիա դավանանքի հետեւորդները թվային առավելություն ունեին մահմեդականների շրջանում¹⁵⁵: Շամախիի խանության մահմեդականների զգալի մասը եւս շիայադավան էր¹⁵⁶, ինչը վկայում է Շիրվանում իրանական էթնիկ տարրի գերիշխող դիրքի մասին (թեպետ շիա էր նաեւ «թաթարների» մեծամասնությունը): Շաքիի խանության մահմեդականները մեծ մա-

¹⁴⁹ J. Reineggs and M. Bieberstein, op. cit., p. 162.

¹⁵⁰ С. Бурнашев, указ. соч., с. 18.

¹⁵¹ Նույն տեղում, էջ 382:

¹⁵² Նույն տեղում, էջ 383:

¹⁵³ Նույն տեղում:

¹⁵⁴ С. Броневский, указ. соч., с. 401.

¹⁵⁵ Նույն տեղում, էջ 423:

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 434:

սամբ սուննի էին, իսկ նրա աշխարհագրական դիրքը՝ մոտ գտնվելը լեզգիաբնակ լեռնային շրջաններին, ապահովում էր նրանց էթնիկ ներկայությունը¹⁵⁷:

Նշենք, որ ԺԸ դարի երկրորդ կեսի քաղաքական անկայուն իրավիճակը նախկին Իրանական տերությունում սրել էր կրոնական խնդիրները գրեթե ողջ Կովկասում՝ բացասական վերաբերմունք ձեռավորվելով այլադավանների նկատմամբ: Ըստ Ստ. Բուռնաշեի՝ կաբարդացիները միաձայն համաժողովրդական որոշմամբ երդվել էին ոչ մի հայի իրենց բնակարաններ չթողնել¹⁵⁸: Ավելին, 1780-ական թվականների կեսերին մի խումբ թիֆլիսցի հայ վաճառականներ ավագակային հարձակման էին ենթարկվել կաբարդացիների կողմից: Հերակլ Բ արքան սպանված յոթ հայ վաճառականների համար արյան գին էր պահանջում՝ յուրաքանչյուրի դիմաց 240 ռուբլի, իսկ կորցրած ապրանքների համար՝ 10 670 ռուբլի¹⁵⁹:

Ս. Գմելինը հիշատակություն է թողել նաև Արեւելյան Այսրկովկասի կրոնական ու դավանական իրավիճակի մասին: Նրա խոսքերով՝ Բաքու քաղաքի «գլխավոր օրենքը» շիա ուղղության մահմեդականությունն էր, սակայն հանդուրժողականություն էր ցուցաբերվում նաև սուննիների նկատմամբ, իսկ հայերն իրենց պատարագը գաղտնի էին կատարում¹⁶⁰: Դա փաստում է, որ խանական իշխանությունները հետապնդում էին հայերին դավանանքի համար: Շամախիում Ս. Գմելինը ականատես է եղել մի տեսարանի, երբ հայկական երկու վանքերը պատրաստվում էին խանին 1000 ռուբլի նվիրատվություն անել եւ վախենում էին, որ Ֆաթի Ալին մոտ ապագայում կարող էր կրկնել պահանջը¹⁶¹: Հին եւ Նոր Շամախիների միջեւ ընկած 5 հայկական

¹⁵⁷ Նույն տեղում, էջ 440:

¹⁵⁸ С. Бурнашев, Описание горских народов, Курск, 1794, с. 7.

¹⁵⁹ РГВИА, ф. 52, оп. 1/194, д. 331, ч. II, 1784 г., л. 21.

¹⁶⁰ С. Гмелин, указ. соч., с. 81. Բաքվի Սր. Սատվածաձին եկեղեցու կառուցման տարեթիվը չի պահպանվել, սակայն հայտնի է, որ այն վերանորոգվել է 1789 թ. (Ս. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 373):

¹⁶¹ С. Гмелин, указ. соч., с. 97-98.

գյուղերը՝ Մերզանի, Մաղրասա, Մաղիան, Քերքենջ եւ Քելուխոնի, խիստ ավերածությունների էին ենթարկվել Ֆաթի Ալիի կողմից Շամախիի գրավման ժամանակ (1769 թ.)¹⁶²: Այս գյուղերի երկու վանքերի սպասավորները վախենում էին բացահայտորեն օգտագործել եկեղեցական անոթներ, սրբապատկերներ եւ այլ պարագաներ, քանի որ խանը կարող էր բռնագրավել դրանք: Ըստ Ս. Գմելինի՝ այդ պատճառով հայկական վանքերում Տիրամոր սրբապատկերից բացի ոչինչ ցուցադրված չէր¹⁶³:

Միմեռն Երեւանցի Հայոց կաթողիկոսը նշում է, որ համաձայն Իրանի կառավարիչ Ազադ խանի ռադամի (հրամանի) էր, «զի Հայքն զօրէնս իւրեանց համարձակ պաշտօցեն, եւ կաթողիկոսն ըստ օրինին իւրեանց կառավարեսցէ զազգն իւր, եւ մի՛ ոք խառնիցի եւ կամ ներհակիցէ»¹⁶⁴: Աղբյուրի վկայությամբ՝ Քերիմ խան Չենդի օրոք Իրանում հայերին թույլատրվում էր քրիստոնեական համայնք եւ եկեղեցիներ ունենալ: Շիրազում գտնվող «Գուրգեն անունով մի հայ հանդիսանում էր իր ազգի առաջնորդն ու սուլթանը», իսկ Քերիմ խանը նրան իր մոտ ընկերն էր համարում¹⁶⁵: Իսկ Էնզելիի նավահանգստում նա հարկահավաք եւ քալանթար էր նշանակել Մարգիս անունով մի հայի¹⁶⁶: Մինչդեռ Ֆաթի Ալի խանի դաժանությունները չէին շրջանցում նաեւ հայ հոգեւորականներին: Այսպես, Մուղանի դաշտում ավազակախմբով թափառող Շամախիի կույր Աղասի խանին այլուր վաճառելու համար Ֆաթի Ալին հրամայում է հայկական վանքերից մեկի քահանային հրապարակային եւ դաժանորեն պատժել:

ԺԸ դարի վերջերին Արեւելյան Այսրկովկասի խանություններում կրոնական եւ հարկային ճնշումները կրկին մեծանում են

¹⁶² Նույն տեղում, էջ 96:

¹⁶³ Նույն տեղում, էջ 107:

¹⁶⁴ Չամբո, Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իւրոյ շրջակայից վանօրէիցն: Համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Միմեռնէ ցաւահար եւ վշտակոծ կաթողիկոսէ Երեւանցոյ, Վաղարշապատ, 1873, էջ 226:

¹⁶⁵ J. Reineggs and M. Bieberstein, op. cit., p. 109.

¹⁶⁶ АВПРИ, 1763 г., ф. Сношения России с Персией, оп. 77/1, д. 1, л. 45.

ոչ մահմեդականների նկատմամբ: Այսպես, Դերբենդի խանության Ուլուսի մահալի Թոփրաքկալե բնակավայրը հիշվում է որպես կռապաշտների՝ կրակապաշտ գաբրերի¹⁶⁷ քաղաք: Ալ. Մուվորովի խոսքերով 1780-ական թվականների սկզբին քաղաքի եւ նրա բնակիչների՝ իրանալեզու գաբրերի մասին լոկ ավերակներն էին հիշեցնում, քանի որ բնակվողներ արդեն չկային¹⁶⁸: Տարածքը պատկանում էր Ֆաթի Ալի խանին, եւ ենթադրելի է, որ քաղաքի ու գաբրերի ճակատագրի հարցում վերջինս բացասական դերակատարում էր ունեցել:

Նման ճակատագրի էին արժանացել նաեւ Արեւելյան Այսրկովկասի մյուս հնաբնակները՝ կրակապաշտ հնդիկները: Քերիմ խանի ժամանակ Բաքվի խանությունում ապրող կրակապաշտ հնդիկները խանին պարբերաբար հարկեր էին վճարում եւ արտակարգ այլ միջադեպերի առիթով դրամական վճարներ կատարում: Սակայն Իրանի տերության վեքիլի մահվանից հետո (1779 թ.) իրավիճակը փոխվում է հոգուտ խանների անսահմանափակ իշխանության, որը սահուն կերպով կամայականության էր վերածում¹⁶⁹:

Ընդհանրացնելով աղբյուրագիտական նյութը՝ կարող ենք փաստել, որ ի տարբերություն իրանական որոշ գահակալների (Ազադ խան, Քերիմ խան Չենդ) Արեւելյան Այսրկովկասի ինքնիշխան խաները այլադավանների՝ հայերի, հրեաների եւ հնդիկների նկատմամբ, կրոնական հանդուրժողականություն գրեթե չէին ցուցաբերում:

Այսպիսով, ԺԸ դարի երկրորդ կեսին Արեւելյան Այսրկովկասի ժողովրդագրությունը վառ արտահայտված բազմէթնիկ պատկեր ուներ: Եկվոր քոչվոր բնակչության կողքին շարունա-

¹⁶⁷ Գաբրերի մասին տե՛ս Ս. Зубов, Картина кавказского края, принадлежащего России и сопредельных оному земель, в историческом, статистическом, этнографическом, финансовом и торговом отношениях, ч. IV, СПб., 1835, с. 80-83. Հմմտ. С. Гмелин, указ. соч., с. 66-67; С. Броневский, указ. соч., с. 407-410.

¹⁶⁸ СПФ АРАН, ф. 99, оп. 2, № 13, л. 23.

¹⁶⁹ А. Серебров, указ. соч., с. 178-179.

կում էին իրենց կեցությունը պահպանել Բուն Աղունքի հին բնակիչները՝ ուղիները, լեզգիները, ինչպես նաև հայերը, հրեաները, իրանական ժողովուրդները եւ այլք: Ավելին, ԺԸ դարի երկրորդ կեսին ռուսական տպագիր սկզբնաղբյուրներում ու պաշտոնական գրագրություններում հանդիպող «թաթարներ» եւ «պարսիկներ» էթնիկական անվանումների նույնացումը ժամանակակից «ադրբեջանցիներ» ընկալման հետ չի համապատասխանում պատմական իրականությանը:

ԺԸ դարի երկրորդ կեսին տարածաշրջանում ծայր առած քառսի հետեւանքով ակտիվանում են բնակչության տեղաշարժերը: Հակոբ Շամախեցի Հայոց կաթողիկոսը նշում է, որ Մեֆյան պետության անկումից հետո շուրջ 40 տարի «թագաւորութիւն կարմրագլխաց» չէր հանդարտվում»¹⁷⁰: Ապակայունացած վիճակը Թավրիզի շրջակա գյուղերից եւ այլ վայրերից 1753 թվականին մի խումբ հայերի ստիպում է ընտանիքներով մեկնել Էնզելի՝ այնուհետեւ Աստրախան տեղափոխվելու եւ այնտեղ հիմնավորվելու նպատակով¹⁷¹:

Այսրկովկասում բնակչության (հատկապես՝ հայերի) տեղաշարժերն այնքան էին սաստկացել, որ տեղերում որոշ հոգեւորականներ չէին կարողանում ճիշտ կազմակերպել հոգեւոր տուրքերի հավաքագրումը: Հարցը կարգավորելու նպատակով միջամտում է Հակոբ Շամախեցի կաթողիկոսը՝ կարգադրելով, որ ժողովուրդը, որ վիճակում որ հաստատված է, այնտեղ էլ վճարի եկեղեցուն հասանելիք տուրքը¹⁷²:

Տարածաշրջանի էթնո-քաղաքական պատկերի փոփոխման գործում չափազանց բացասական էր Աղա Մուհամմադ խանի (1742-1797 թթ.) 1795 թ. արշավանքի ազդեցությունը: Դրան հետեւած սարսափելի սովի մասին Հովսեփ Արղությանը 1796 թ.

¹⁷⁰ Մաշտոցի անվան Մատենադարան (հետայսու՝ ՄՄ), ձեռ. 2911, էջ 102բ: Հմմ. J. Perry, *The Zand Dynasty, – The Cambridge History of Iran: From Nadir Shah to the Islamic Republic*, Cambridge, 1991, Vol. VII, p. 96.

¹⁷¹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան (հետայսու՝ ՄՄ, ԿԴ), թղթ. 1, վավ. 26, էջ 1-2:

¹⁷² ՄՄ, ԿԴ, թղթ. 1, վավ. 52, էջ 1:

ցավով գրում էր. «մինչ զի գորդիս վաճառել եւ զկինս՝ առօրեայ կտորիկ հացի միոյ, եւ որ անտանելին է, սաստկութիւն սովուն եւ զհաւատն սուրբ տայ ուրանալ»¹⁷³: Իսկ Վարդան Օձնեցու վկայութեամբ՝ 1796 թ. սկզբին «եղել սաստիկ սովոյ աշխարհին Ադուանից, Արցախայ, Մինեաց եւ Գանձակայ, քանզի ասպատակ զօրաց Սահմաղ շահի այրեալ էին զարմտիս երկրին»: Դրա հետեւանքը մեծ ծավալներով գաղթն էր¹⁷⁴:

Վ. Զուբովի Կասպիական արշավանքը եւս ողբերգական հետեւանքներ ունեցավ Արեւելյան Այսրկովկասի հայ բնակչության համար: Ռուսական զորքի հանկարծակի նահանջի պատճառով հայերը հայտնվել էին խաների վրեժխնդրության վտանգի առջեւ: Ուստի Դերբենդի, Ղուբայի, Շամախիի, Բաքվի խանությունների հայերը սկսեցին զանգվածաբար լքել իրենց բնակավայրերը՝ գաղթելով Աստրախան եւ Հյուսիսային Կովկաս ¹⁷⁵: Միայն Դերբենդից եւ Մուշկուրից դեպի այնտեղ էր գաղթել 610 ընտանիք՝ 5212 մարդ¹⁷⁶: Մենատի 1799 թ. ապրիլի 15-ի որոշմամբ՝ Դերբենդից գաղթած հայերին մերձակա պետական հողերից հատկացումներ էին կատարվում¹⁷⁷:

Այսրկովկասում ստեղծված խառնակ իրավիճակի պատճառով շուրջ 5000 ընտանիք Ղարաբաղից հեռացել էր Շաքի, Շիրվան եւ շրջակա այլ բնակավայրեր¹⁷⁸: Ղարաբաղից Շամախիի

¹⁷³ ՄՄ, ձեռ. 2951, էջ 121բ:

¹⁷⁴ «Բագումբ ի հայոց եւ սակաւք ի տաճկաց անցին ի Վրաստան, ի Սօմխետք, յԵրեւան, ի Կարս եւ յաշխարհն Սարմատացոյ ի Սօզդոք եւ Ղզլար» (ՄՄ, ձեռ. 4331, էջ 91բ-92ա):

¹⁷⁵ Հր. Աճառյան, Հայ գաղթականության պատմություն, Եր., 2002, էջ 108: Տե՛ս նաեւ Պ. Չոբանյան, Հայերի իրավական ու տնտեսական կարգավիճակը Ռուսաստանում XVIII դարի 80-90-ական թթ., – ՊԲՀ, 1998, հ^տ 1-2, էջ 75-94:

¹⁷⁶ Տե՛ս նաեւ Պ. Չոբանյան, Ռուսահայոց գաղթօջախի բնակչության քանակական կազմը (XVIII դարի վերջին քառորդ), – ՊԲՀ, 1998, հ^տ 3, էջ 64:

¹⁷⁷ ПСЗРП, т. XXV, с. 619.

¹⁷⁸ Russia and the Armenians of Transcaucasia, 1797-1889. A documentary record. Annotated translation and commentary by George A. Bournoutian, Costa Mesa, 1998, p. 19.

խանութիւն գաղթած հայերը զգալիորեն ավելացրել էին բնակչության թվաքանակը՝ հասցնելով 25000-ի, որոնց կեսը հայերն էին¹⁷⁹: Արցախահայերին հաջողվում է Շաքի-Շիրվան պատմական հատվածում հիմնադրել լիարժեք հայկական նոր բնակավայրեր՝ ապահովելով ինքնութան շարունակական գոյությունն այդ տարածքներում:

¹⁷⁹ С. Бронковский, указ. соч., с. 434.

ԳԼՈՒԽ Գ

ԱՐԵՒԵԼՅԱՆ ԱՅՄՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՄ-ԻՐԱՆԱ-ՕՍՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ ԺԸ ԴԱՐԻ 50-80-ԱԿԱՆ ԹԹ.

Այսրկովկասի, մասնավորապես՝ նրա հյուսիս-արեւելյան հատվածի քաղաքական պատմության համար ԺԸ դարի երրորդ քառորդը բախտորոշ նշանակություն է ունեցել: Նաղիր շահի սպանությունից հետո, ըստ ժամանակի մի աղբյուրի, «խռովեալ Պարսկաստան այր ընդ եղբօր ոգորէին իւրաքանչիւրոց աշխարհաց մարգպանք եւ գաւառակալք, ինքնագլուխ միապետէին, որք որջորջէին խան, սուլթան, բէկ, աղայ, ի հայ ազգէ եւս գտանէին մասնաւոր իշխօղք քալանթար, մէլիք եւ իւզբաշի անուամբ»¹⁸⁰:

Իրանի տերության իշխող վերնախավի միջեւ ծայր է առնում պայքարը գերագույն իշխանության համար. «նախարարք նորին սուր ի գործ արկեալ կրճատէին զիրեարս, ապա գտեալ իւրաքանչիւր ոք ի նոցանէ զմասն բաժնի յաշխարհացն Պարսից ի մարտից պարապէին»¹⁸¹: Իրավիճակն այնքան էր ապակայունացել, որ ռուսական գործակալ կապիտան Ասլանովը հաղորդում էր, թե ճանապարհների անապահովության հետեւանքով իրեն չէր հաջողվել անցնել Աստրաբադից Հնդկաստան տանող ճանապարհով¹⁸²:

Այսպես, Իրանում իշխանությունն անցնում է սպանված շահի զարմիկին Ալի Ղուլի խանին (1747-1748 թթ.), որը ստանում է «Աղիլ» (Արդար) անունը: Նրա հրամանով Նաղիր շահի ողջ ընտանիքը սրի է քաշվում. փրկվում է միայն Շահռոխ արքայազնը, որին էլ հրամայում է փակել Մեշհեդի հարեմներից մե-

¹⁸⁰ Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Դ, **Ղուկաս կաթողիկոս** (1780-1800), Հրատարակեց՝ **Գիւտ քահ. Աղանեանց**, Թիֆլիս, 1899, էջ 727; Հմմ. ՄՄ, ձեռ. 4331, էջ 54ա; ՄՄ, ԿԴ, թղթ. 18, վավ. 195, էջ 16:

¹⁸¹ Յիշատակարան ազգային արդեան պատմութեան համար, – «Կռունկ Հայոց աշխարհի», Գ տարի, թիւ Դ, 1862, Թիֆլիս, էջ 283:

¹⁸² ՄՄ, ԿԴ, թղթ. 2, վավ. 20, էջ 1-2:

կում¹⁸³: Շուտով Ալի Ղուլի շահի դեմ պայքար են սկսում Ֆաթհ Ալի խան Ղաջարն ու Նադիր շահի եղբայր Իբրահիմ Միրզան: Հինգ ամիսների ընթացքում շահին հաջողվում է ճնշել Մազանդարանի տիրակալ Ֆաթհ Ալի Ղաջարի դիմադրությունը: Թեհրանի եւ Ղազվինի միջեւ տեղի ունեցած վճռական ճակատամարտում Իբրահիմ Միրզան ջախջախիչ պարտության է մատնում շահին, գերեվարում նրան եւ գրկում տեսողությունից¹⁸⁴, որից հետո Թավրիզում հռչակվում է Իրանի շահ (1748-1749 թթ.): Սակայն Մեշհեդի ազնվականությունը փորձում է իշխանության բերել Թահմասպ Ղուլի խանի թոռ եւ Նադիր շահի որդի Շահռոխին: Իբրահիմ շահի զորքն անցնում է Շահռոխի կողմը եւ նրան մատուցում փախուստի դիմած շահի կտրված գլուխը: Նույն ճակատագրին է արժանանում նաեւ Ադիլ շահը, իսկ Շահռոխը Խորասանում հռչակվում է շահ¹⁸⁵, այնտեղ մնալով մինչեւ 1796 թ.: Սպահանում իր իշխանությունը հաստատած Քերիմ խան Ձենդը ստիպված էր 1750-ական թվականների գրեթե ողջ ընթացքում անողորք պայքար մղել Ազադ խանի աֆղանական հորդանների դեմ: Սակայն 1757 թ. նրան հաջողվում է ջախջախել Ազադ խանի զորքին: Իրանին տիրելու համար մղվող պայքարը շարունակվում է Քերիմ խան Ձենդի եւ Հասան խան Ղաջարի միջեւ: Երկարատեւ պայքարից 1760 թ. հաղթանակած է դուրս գալիս Քերիմ խանը¹⁸⁶: Նա Շիրազում պատանդ է պահում Հասան խանի վեց որդիներից երկրորդին՝ Ադա Մուհամմադ խանին, որին Նադիր շահի հրամանով մանուկ հասակում ներքինի էին դարձրել եւ հինգերորդ որդուն՝ Ռեզա Ղուլի խանին:

¹⁸³ Ch. Picault, Histoire des révolutions de Perse pendant la durée du dix-huitième siècle de l'ère chrétienne, vol. II, Paris, 1810, p. 309.

¹⁸⁴ Նույն տեղում, էջ 335-337:

¹⁸⁵ Նույն տեղում, էջ 340-343:

¹⁸⁶ Նա հրաժարվում է շահի տիտղոսից՝ իրեն կոչելով վեքիլ. «Բայց ո՛չ կամեցաւ անուանիլ թագաւոր, այլ խան միայն եւ փոխանորդ թագաւորի», – գրում է աղբյուրը (Խաչատուր Աբեղայի Ջուղայեցոյ Պատմութիւն Պարսից /ԺԸ դար/, Աշխատասիրությամբ Բաբգէն վարդապետի Աղաւելեանցի, Վաղարշապատ, 1905, էջ 325):

Թեև 1760-1770-ական թթ. ավատատիրական կռիվներն Իրանում ժամանակավորապես դադարել էին եւ որոշակի տնտեսական կայունություն էր արձանագրվել¹⁸⁷, սակայն միավորված պետություն չստեղծվեց: Ինչպես արեւմտյան հետազոտող Ջ. Փերրին է նկատում¹⁸⁸ Իրանի տերության պետական սահմանները 1765-1779 թթ. նախկին Սեֆյան պետության տարածքի ուղիղ կեսն էին կազմում: Արեւելքում հաստատված Կարմելիտների միաբանության եպիսկոպոս Կորնելիուսը 1764 թ. հաղորդում էր, որ Իրանում քառս էր. պարզ չէր, թե որտեղ էր գլուխը, որտեղ պոչը: Նրա խոսքերով՝ սեփական ուժերի փոքրաթվության եւ մեծաթիվ հակառակորդների պատճառով Քերիմ խանին չէր հաջողվում միավորել երկիրը¹⁸⁹:

Քերիմ խան Ջենդի իշխանությունը Կուրից հյուսիս ընկած տարածքներում ձեւական բնույթ էր կրում՝ պարարտ հող նախապատրաստելով թուրքական ագրեսիայի համար: Պատահական չէր, որ Օսմանյան կայսրությունում Նադիր շահի մահվան լուրը մեծ ցնծություն էր առաջացրել¹⁹⁰: Ակնհայտ էր, որ Օսմանյան կայսրությունը՝ տարածաշրջանում Իրանի «մշտական թշնամին»¹⁹¹ ու մրցակիցը, շտապելու էր օգտվել աշխարհաքաղաքական փոփոխություններից: Եթե նրան հաջողվեր տիրել նախկին իրանական պետության տարածքներին, ապա Ռուսական կայսրության հարավային սահմանների անվտանգությունը լուրջ հարցականի տակ կդրվեր: Ռուսական կողմի մտավախություններն անհիմն չէին, քանի որ Իրանը քաղաքական այն ուժն էր, ում հաջողվել էր ԺԶ-ԺԸ դարերի ընթացքում կասեցնել օսմանյան

¹⁸⁷ С. Алиев, Междоусобные войны и борьба за верховную власть в Иране после распада империи Надир-шаха, – Иран. История и культура в средние века и новое время, Москва, 1980, с. 58.

¹⁸⁸ J. Perry, The Zand dynasty, p. 95.

¹⁸⁹ A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII centuries, Vol. 1, London, 1939, p. 663.

¹⁹⁰ Պատմութիւն Օսմանեան պետութեանց, Յօրինեաց Հ. Գաբրիէլ վ. Այվազովսքի Մխիթարեանց, հտ. Բ, Վենետիկ, 1841, էջ 426:

¹⁹¹ J. Perry, Karim khan Zand, London, 2006, p. 107.

ագրեսիայի տարածումը Կովկասի, Կենտրոնական Ասիայի, Աֆղանստանի, Հնդկաստանի ուղղությամբ, ինչպես նաև դեպի հարավ՝ Պարսից ծոց¹⁹²:

Ռուսաստանի կովկասյան քաղաքականության համար Օսմանյան կայսրությունը պատմականորեն առանձնահատուկ խնդիր էր ներկայացնում: Կասպից ծովի արեւմտյան ափերը թե՛ Ռուսական, թե՛ Օսմանյան կայսրությունների համար ունեին ոչ միայն ռազմաքաղաքական, այլև առեստրա-տնտեսական մեծ նշանակություն: Առեստրային այդ ուղին Օսմանյան կայսրությանը թույլ էր տալիս վերահսկել Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ իրականացվող առեստուրը, մասնավորապես՝ մետաքսի հումքի արտահանումը¹⁹³: Շիրվանից ու Գիլանից արտահանվող մետաքսի հումքի առյուծի բաժինն արտահանվում էր Օսմանյան կայսրություն, որտեղ այն վերամշակվում էր եւ վաճառվում Հալեպում, Զմյուռնիայում, ապա տեղափոխվում Լոնդոն, Մարսել եւ Վենետիկ:

Մյուս կողմից, եթե ԺԷ դարի վերջին եւ ԺԸ դարում Իրանի տերությունից Ռուսաստանի տարածքով արտահանվող ապրանքները հիմնականում գնում էին եւրոպական երկրներ, ապա ԺԸ դարի երկրորդ կեսին ռուսական զարգացող արդյունաբերությունն ամբողջությամբ կլանում էր ներմուծումը: Նոր զարգացող ռուսական մանածագործական արդյունաբերությունը մետաքսի հումքի եւ էժան ներկանյութերի մեծ պահանջարկ ուներ¹⁹⁴: Օսմանյան կայսրության կողմից Կասպից ծովափնյա տարածքների նվաճումը կնշանակեր նաև ռուս-իրանական առեստրի կենտրոնացումը թուրքերի ձեռքում եւ «ճանապարհ դեպի ռուսական ներքին սահմաններ»¹⁹⁵:

¹⁹² Վ. Բայրուրդյան, Օսմանյան կայսրության պատմություն, Եր., 2011, էջ 342:

¹⁹³ История внешней политики России. XVIII век, Отв. ред. А. Сахаров, Москва, 1998, с. 151.

¹⁹⁴ Ст'ю П. Любомиров, Очерки по истории русской промышленности. XVII, XVIII и начало XIX века, Москва, 1947.

¹⁹⁵ Архив князя Воронцова, Под ред. П. И. Бартенева, кн. XXV. Бумаги

Ռուս-թուրքական հարաբերությունների լարումը մեծ էր նաև Ղրիմի հարցի շուրջ՝ որպես Մեծուկյան հիմնախնդրի բաղադրիչ մաս: Այդ առնչությամբ կանցլեր Մ. Վորոնցովը 1762 թ. հուլիսի 6-ին Եկատերինա Բ կայսրուհուն (1762-1796 թթ.) ուղղած գրության մեջ նշում էր, որ Ռուսաստանի հարեանությունը Ղրիմի խանության հետ ավելի վտանգավոր է, քան Օսմանյան կայսրությունը: Ռուսաստանի պետական անվտանգության շահերից էր բխում Ղրիմի խանության, որպես անկախ իշխանություն կամ ռուսական կայսրության մաս, «ազատագրումը» թուրքական տիրապետությունից: Այդ դեպքում Մե և Ազովի ծովերը, մերձավորարևելյան և հարավային բոլոր տարածքները կհայտնվեին Ռուսաստանի վերահսկողության տակ և կախվածության մեջ առևտրի ուղղությունը տեղափոխելով դեպի Ռուսական կայսրություն¹⁹⁶:

Այսպիսով, ԺՇ դարի երկրորդ կեսին ռուսական կառավարության կովկասյան քաղաքականության անկյունաքարն էր վերադարձը Պյոտր Ա-ի արելեյան քաղաքականությանը, որը 1750-1770-ական թթ. նոր բովանդակություն էր ստանում. այն է՝ Մերձկասպյան տարածքները մինչև Գիլան գեներով գրավելու ծրագրին զուգահեռ չեզոքացնել թուրքական վտանգը դիվանագիտական ճանապարհով և Օսմանյան կայսրությանը պահել հնարավոր հեռավորության վրա:

Իրենց հերթին այսրկովկասյան տիրույթները ԺՇ դարի երկրորդ կեսին կանգնած էին ինքնիշխանության պահպանման դժվարին խնդրի առջև: Այսպես, 1750-1770-ական թթ. Այսրկովկասը քաղաքականապես միատարր չէր և բաժանված էր ազդեցության գոտիների՝ Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության, Ղարաբաղի, Շաքիի և Ղուբայի խանությունների միջև: Առավել ուժեղ և ազդեցիկ քաղաքական միավոր էր Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորությունը: Դեռևս Նադիր շահը Թեյմուրազին և նրա որդի Հերակլին ճանաչել էր (1744 թ.) համապատասխանաբար Քարթլիի ու Կախեթի կառավարիչներ՝ փաս-

разного содержания, Москва, 1882, с. 300-301.

¹⁹⁶ Լույն տեղում, էջ 309:

տացի վրացական այդ հողերի կառավարումը կենտրոնացնելով մեկ ընտանիքի ձեռքում: 1748-1750 թթ. Արեւելյան Վրաստանից իրենց կախվածությունն ընդունեցին Երեւանի, Նախիջեւանի եւ Գանձակի խաները՝ պարտավորվելով հարկ վճարել¹⁹⁷: 1762 թ. հոր մահվանից հետո Հերակլ Բ-ն միավորել էր երկու թագավորությունները եւ իրեն հռչակել Քարթլիի եւ Կախեթի միացյալ թագավորության արքա: Որոշ տեղեկություններով Հերակլի օրոք վրացական զինված ուժերի ընդհանուր թվաքանակը հասնում էր 12000-ի¹⁹⁸: Իրանի տերության կառավարիչ Քերիմ խան Ձենդը ճանաչելով Հերակլ Բ-ին՝ հաստատել էր նրա իրավունքները Երեւանի եւ Գանձակի խանությունների նկատմամբ¹⁹⁹:

Այսրկովկասում խաների եւ տիրակալների ուժերի այս հարաբերակցության պահպանումը երկարաժամկետ կտրվածքով նախընտրելի էր թե՛ Ռուսական, թե՛ Օսմանյան կայսրությունների եւ թե՛ Իրանի տերության համար, որոնց Այսրկովկասը պետք էր թույլ եւ մասնատված: Հետեւաբար պատմագիտության մեջ առկա այն դրույթը, թե ԺԸ դարի երկրորդ կեսին հաստատված քաղաքական իրավիճակում խանությունների անկախության համար իրական վտանգ կար Իրանից եւ Օսմանյան կայսրությունից²⁰⁰, միակողմանի է: Միանշանակ կարելի է պնդել, որ Այսրկովկասում Ռուսական կայսրության քաղաքականությունը եւս նվաճողական էր: Պարզապես, եթե առաջին երկու տերությունները կարող էին բացահայտ ռազմական միջամտության դիմել, ապա Ռուսաստանը՝ Հյուսիսային Մերձսեւծովյան տարածքների հիմնախնդիր ունենալով եւ չցանկանալով սրել ռուս-թուրք-իրանական հարաբերությունները, դիվանագիտական միջամտության էր դիմում:

¹⁹⁷ История Грузии, т. I, С древнейших времен до 60-х годов XIX века, Под ред. Н. А. Бердзенишвили, Тбилиси, 1962, с. 357-358.

¹⁹⁸ А. Головин, Историческое обозрение Грузии, 1864, с. 175.

¹⁹⁹ История Грузии, с. 363.

²⁰⁰ А. Иоаннисян, Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ер., 1958, с. XII.

Մյուս կողմից, Արեւելյան Այսրկովկասի խանությունները ինքնուրույնություն ստանալուն զուգահեռ, ձեռք էին բերել Իրանի տերության, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների հետ ինքնուրույն հարաբերություններ կառուցելու հնարավորություն: Անհրաժեշտ էին դիվանագիտական այնպիսի հմտություններ, որոնք թույլ կտային պահպանել խանությունների անկախությունը եւ հոգալ սեփական անվտանգության խնդիրները: Նշված ժամանակամիջոցում այդ խնդիրների ինքնուրույն իրագործումը դարձել էր գրեթե անհնար: Պետք էր ուժեղ եւ հուսալի դաշնակից գտնել: Իրանում միասնական պետության բացակայության պայմաններում դաշնակիցների ընտրությունը պետք էր կատարել Օսմանյան եւ Ռուսական կայսրությունների միջեւ:

Խաները մեծ կասկածանքով էին վերաբերվում բարեկամության մասին Ռուսական կայսրության հավաստիացումներին: Այդ տրամաբանության մեջ է պետք դիտարկել նաեւ Ֆաթի Ալի խանի կողմից 1770-ական թվականների սկզբին տարածաշրջան այցելած ռուսական ակադեմիական արշավախմբի (Ս. Գմելինի գլխավորությամբ) ընդունելությունը: Այսպես, երբ Ս. Գմելինը Ֆաթի Ալի խանին է հանձնում Աստրախանի նահանգապետի երաշխավորագիր նամակը, ապա կարդալու ընթացքում կայսերական տիտղոսը հիշատակելիս, խանը ոտքի է կանգնում եւ խոնարհվում²⁰¹: Մյուս կողմից, նա հրաժարվում է արշավախմբին ձիեր տրամադրել, որպեսզի ցամաքով Դերբենդից Բաբու ուղեւորվեն՝ վախենալով, որ այդ կերպ նրանք հնարավորություն կունենան տարածքի մանրակրկիտ ուսումնասիրություն կատարել: Դերբենդի հայերը, որոնք Ս. Գմելինի խոսքերով, մշտապես խանի շրջապատում էին գտնվում, հավաստիացնում էին, թե իրենց լրտես են համարում: Ըստ այդմ, «պարսիկները» գտնում էին, որ ինքը ռուս-թուրքական պատերազմի ընթացքում այցելել է տարածաշրջան ոչ թե գիտական ուսումնասիրություններ կատարելու, այլ տեղանքը գննելու համար: Ավելին, ճանապարհորդության վերջում Ֆաթի Ալի խանը Ս. Գմելինին հայտնում է, որ

²⁰¹ С. Гмелин, указ. соч., с. 11.

նրա բույսերի հավաքումն ամբողջությամբ կեղծիք է²⁰²՝ ակնարկելով նրա քաղաքական նպատակների մասին:

Արշավախումբը բացահայտ թշնամական վերաբերմունքի է արժանանում Բաքվի խանի կողմից²⁰³: Երբ վերջինս տեղեկանում է, որ Ս. Գմելինը նավթահորեր է այցելել, հարցնում է նրան, թե այդո՞րք Ռուսաստանում օտարերկրացուն թույլ կտային տեսնել նման բաներ: Իր այցի իրական նպատակները բացատրելու ակադեմիկոսի բոլոր փորձերն անհաջողության են մատնվում: Ս. Գմելինը Բաքվում գտնվելու ողջ ընթացքում իր կացարանի շուրջ մշտապես պտտվող մարդկանց է նկատում, որոնք հետևում էին, թե ինչ են բերում ռուսական նավ եւ ինչ են տանում նավից²⁰⁴: Նմանատիպ խոչընդոտների Ղադստանում Թարքիի շամխալի կողմից հանդիպել էր նաեւ ակադեմիկոս Յ. Գյուլդենշտեդտի արշավախումբը 1770-ական թվականներին²⁰⁵: Ռուսական բանագնացների նկատմամբ մեծ անվստահություն ուներ Գիլանի Հեդայեթ խանը²⁰⁶:

Այսպիսով, Արեւելյան Այսրկովկասի խաների շրջանում թարմ էր պատմական հիշողությունն այն մասին, երբ ԺԸ դարի սկզբին Պյոտր Ա-ն շտապեց օգտվել Իրանում ծայր առած խռովություններից եւ կազմակերպեց Կասպիական արշավանքը: Հետեւաբար, քաղաքական կարճատեսություն կլինէր բացառել իրավիճակի հնարավոր կրկնությունը: Ավելին, այսրկովկասյան տիրակալների, մասնավորապես Ղուբայի Ֆաթհ Ալի խանի՝ ռուսական իշխանություններին գրած խնդրագրերը, կայսերական բարձր հովանավորությունն ընդունելու եւ ցարին հավատարմություն հայտնելու մասին քայլերը եւս պիտի դիտարկել խաների՝ արտաքին քաղաքականության մեջ խուսանավելու համատեքս-

²⁰² Նույն տեղում, էջ 42-44, 109:

²⁰³ Նույն տեղում, էջ 61-62:

²⁰⁴ С. Гмелин, указ. соч., с. 77.

²⁰⁵ И. Гюльденштедт, указ. соч., с. 116-117.

²⁰⁶ Sté u ՄՄ, ԿԴ, թիթ. 2, վավ. 20, էջ 16:

տում՝ բացառելով դրանցում ռուսական կողմնորոշման փաստի առկայությունը²⁰⁷:

Խաների խուսանավելու քաղաքականության մասին էր վկայում 1805 թ. Շամախիի Մուստաֆա խանի՝ իշխան Պ. Ցիցիանովին ուղղված գրությունը, ուր նա նշում էր, որ թեև ինքը եւ Իրանի տերության շահը պարսիկներ են, սակայն ինքը «ծառայող մարդ է» եւ սեփական տիրությունները պահպանելու համար «պարտավոր է ծառայել որեւէ ուժեղ տիրակալի»²⁰⁸:

Վերջապես, Իրանի տերության, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների միջեւ այսրկովկասյան տիրակալների խուսանավման քաղաքականության փայլուն օրինակ էր Հերակլ Բ արքայի քաղաքականությունը: Այսպես, 1783 թ. հունվարին ռուսական գաղտնի աղբյուրները (իրազեկիչները) հաղորդում էին, որ վրաց Հերակլ Բ արքան մի հայի միջոցով անհայտ բովանդակությամբ նամակ էր ուղարկել օսմանյան սուլթանին: Ըստ իրազեկիչների՝ մեծ վեզիրը տեսնելով հայ բանագնացին, գայրանում է, որ վրաց Հերակլ արքան ռուսական արքունիք իշխանների դեսպանություն է ուղարկում, պարսից տիրակալների մոտ՝ իր պաշտոնյաներին, իսկ Օսմանյան կայսրություն մի հայի է ուղարկել, եւ այն էլ կեղծ հավաստիացումներով, թե Հերակլ Բ արքան հավատարիմ է սուլթանին, իսկ փոխարենը օգնություն եւ հովանավորություն է փնտրում իրենց թշամիների մոտ²⁰⁹: Հետեւաբար, թե՛ Իրանում, թե՛ Ռուսական եւ, թե՛ Օսմանյան կայսրություններում քաջատեղյակ էին խաների ու տիրակալների երկդիմի քաղաքականության մասին: Այսրկովկասում ազդեցության ռազմաքաղաքական լծակներ չունենալով՝ Իրանի տերությունը, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունները ստիպված էին խաների եւ տիրակալների հետ հարաբերություններ կառուցել առավելապես

²⁰⁷ Ֆաթի Ալի խանին կոչելը «Կովկասում ռուսական կողմնորոշման ամենահետեւողական» կողմնակիցներից մեկը՝ չի համապատասխանում պատմական իրականությանը (Н. Магомедов, указ. соч., с. 24).

²⁰⁸ АКАК, т. II, 1868, с. 662.

²⁰⁹ Г. Цинцадзе, Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), с. 23.

դիվանագիտական մակարդակով: Ոչ պակաս հետաքրքրական էին հայ բանագնացի Հերակլ Բ արքայի քաղաքական քայլերի վերաբերյալ հիմնավորումները: Ըստ նրա «քիչ հզոր լինելու» հետեւանքով Հերակլը ստիպված էր հավատարմություն հայտնել ռուսական գահին, քանի որ Արեւելյան Վրաստանը աշխարհագրորեն մոտ էր Ռուսաստանին: Վրացական թագավորությանը սպառնացող հաջորդ վտանգը «նախանձոտ պարսից խաների» հետ հարեւանությունն էր: Վերջապես, լեզգիների եւ դաղստանյան լեռնականների մշտական հարձակումները վրացական բնակավայրերի վրա ու դրանց թալանը Հերակլ Բ արքային ստիպում են հնազանդություն հայտնել Ռուսական կայսրությանը²¹⁰:

Այս համատեքստում է պետք դիտարկել նաեւ Գանձակի խանության դիրքորոշումը Աղա Սուլիամնադ խանի արշավանքի ժամանակ: Ջավադ խանը 1803 թ. Պ. Յիցիանովին գրում էր, որ 1796 թ. Գանձակը հանձնել է ռուսական իշխանություններին, որովհետեւ շահն այդ ժամանակ Խորասանում էր եւ ինքը «հարկ է համարում հնազանդվել նույնպես ուժեղ միապետի՝ ռուսական փառիշահին»²¹¹:

1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում եւ՝ ռուսները, եւ՝ թուրքական կողմը ձգտում էին ստանալ խաների ու տիրակալների էթե ոչ ռազմական, ապա գոնե դիվանագիտական աջակցությունը: Ռուսաստանի իշխանությունները դեռեւս պատերազմի նախաշեմին անհրաժեշտ էին գտնում Արեւելյան Այսրկովկասի ազդեցիկ տիրակալի՝ Ֆաթի Ալի խանի քաղաքական աջակցությունը ստանալ: Դեռեւս 1765 թ. աշնանը խանին անձամբ նամակ է գրում Արտաքին գործերի կոլեգիայի նախագահ կոմս Ն. Պանինը: Նա փորձում էր ռուսական առեւտրականների նկատմամբ Ֆաթի Ալիի բարեհոգության մասին հավաստիքներ ստանալ՝ փոխարենը հայտնելով Եկատերինա Բ կայսրուհու բարեհաճությունը նրա նկատմամբ²¹²: Ռուսական իշխանությունները Ֆաթի Ալի խանի աջակցությունը

²¹⁰ Նույն տեղում, էջ 23:

²¹¹ АКАК, т. II, Тифлис, 1868, с. 459.

²¹² РДО, с. 115.

օգտագործելու էին մյուս խաների, դադստանյան տիրակալների հետ հարաբերությունների կարգավորման ժամանակ, որպեսզի վերահսկեն Օսմանյան կայսրության եւ խաների հարաբերությունները:

Պատերազմի ողջ ընթացքում Այսրկովկասը դուրս չէր մնացել նաեւ Օսմանյան կայսրության ուշադրությունից: 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին սուլթանը փող եւ նվերներ է ուղարկում դադստանյան տիրակալներին, Ֆաթհ Ալի խանին, խնդրում հանուն հավատի աջակցել թուրքերին եւ հավանություն է ստանում²¹³:

Խաների նման քաղաքական կեցվածքն առավել քան կանխատեսելի էր, քանի որ Արեւելյան Այսրկովկասի խաների համար օրակարգային խնդիր էր սեփական անվտանգության ապահովումը: Վերադարձը իրանական պետական համակարգ սպառնում էր առկա կարգավիճակի կորստով: Հետեւաբար, հեռավոր եւ նույն կրոնը դավանող Կոստանդնուպոլսի գերագույն իշխանության ճանաչումն առավել նախընտրելի էր դարձել: Այդ պարագայում խանություններին կհաջողվեր պահպանել փաստացի ինքնուրույնությունը: Ավելին, գեներալ Ի. դը Մեդեմին ներկայացրած զեկուցագրում Ղզլարի պարետ Ի. ֆոն Շտենդերը նշում էր, որ դադստանյան տիրակալները հնարավորության դեպքում կպաշտպանեն թուրքերին՝ բացառությամբ Ֆաթհ Ալի խանի, որը կարող էր հավատարիմ լինել Ռուսաստանին՝ ընդգծելով Ղուբայի խանի մյուս տիրակալներից դավանանքով տարբեր (իմա՝ շիա) լինելու հանգամանքը²¹⁴: Սակայն աստրախանցի վաճառական Մ. Կնյազեւը, հղում անելով տեղացի հայերին եւ պարսիկներին, 1770 թ. նոյեմբերին հյուպատոս Մ. Սուլյակովին հաղորդում էր, որ Ֆաթհ Ալի խանը, լեռնականներին սիրաշահելու նպատակով, դարձել էր սուննիադավան²¹⁵:

Այսպիսով, 1760-1770-ական թթ. Արեւելյան Այսրկովկասի խաների վարած քաղաքականության վերլուծությունը փաստում

²¹³ АРО, т. IV, с. 83.

²¹⁴ РДО, с. 154.

²¹⁵ АВПРИ, ф. Сношение России с Персией, 1771, д. 150, л. 11об.-12.

է, որ խորհրդային պատմագիտության մեջ գոյություն ունեցած այն տեսակետը, թե «մերձկասպյան նահանգներում թուրքերի նկատմամբ համակրանքի բացակայություն» կար²¹⁶ չափազանցված պետք է համարել:

Ռուսական իշխանությունները ռուս-թուրքական պատերազմի ընթացքում կովկասյան խաների ու տիրակալների վարքագիծը սթափ էին գնահատում: 1771 թ. հյուպատոս Գ. Բոգոյուրովը խաների քաղաքական կեցվածքը բացատրում էր ռուսական զենքի փայլուն հաղթանակներով եւ հնարավորության դեպքում կամ ապագայում ռուսական կողմի վրեժխնդրությամբ ու ներքաղաքական դրդապատճառներով: Վերլուծելով քաղաքական իրավիճակը, հյուպատոսը չէր բացառում, որ Արեւելյան Վրաստան արշավելու նախապատրաստությունների մասին լուրերը, մերթ ընդ մերթ հայտնվելով ու անհետանալով, նպատակ ունեին հաճոյանալ թուրքական կողմին եւ կասկած ու վտանգ արթնացնելու ռուսական կողմի մոտ: Մեկ այլ տարբերակով՝ Ֆաթի Ալի խանը եւ Դադստանի տիրակալները ցանկանում էին թանկարժեք նվերներ ու հաճոյախոսություններ ստանալ նաեւ Ռուսական կայսրությունից: Ենթադրվում էր նաեւ, որ պատերազմում Ռուսաստանի հաղթանակի դեպքում խաներն ի ցույց կդնեն այն հանգամանքը, որ իրենք պատերազմի ժամանակ թուրքերին օգնելու առիթ ունեցել են, բայց Ռուսական կայսրության հետ ունեցած «բարեկամության եւ հարեւանության» պատճառով նրան «ոչ մի տխրություն չեն պատճառել»: Գ. Բոգոյուրովը եզրակացնում էր, որ չի կարելի հույս դնել այդ «թեթեւամիտ եւ ուխտադրուժ ժողովուրդների վրա»: Նա անհրաժեշտ էր համարում սահմանամերձ բոլոր անցակետերի անվտանգությանը ուշադրություն դարձնել: Միաժամանակ նախատեսվում էր Դադստան եւ Ֆաթի Ալի խանի տիրույթներ առեւտրականների անվան տակ համապատասխան մարդկանց (այսինքն՝ զործակալներ, իրագեկիչներ, լրտեսներ) ուղարկել, որոնք իրենց հետ կտանեին Աստրախանի նահանգապետի նամակները՝ փորձելով համոզել հրաժարվել հակառու-

²¹⁶ О. Маркова, указ. соч., с. 142.

սական տրամադրություններից: Այդ խնդիրների համար ծախսերը նախատեսվում էր կատարել պետական միջոցներից²¹⁷:

Փաստորեն, 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում թեև Արեւելյան Այսրկովկասի տարածքը գերծ էր ռազմական գործողություններից, այնուհանդերձ, պատերազմի պասիվ մասնակցի վերածվելով, հայտնվել էր տեղեկատվական պատերազմի բովում:

Ռուս-թուրքական պատերազմից հետո միջազգային հարաբերություններում սրվել էր Արեւելյան հարցը, որը օսմանյան պետության տարածքը Ռուսաստանի եւ եւրոպական պետությունների միջեւ կռվախնձորի էր վերածում²¹⁸: Թուրքական պատմագիտության գնահատմամբ՝ Քյուչուկ-Կայնարջիի պայմանագիրը (1774 թ.)²¹⁹ Օսմանյան կայսրության համար 1699 թ. Կարլովիցի հաշտության պայմանագրից հետո ամենածանր էր²²⁰: Այդ համաձայնագրով Բարձր Դուռը կարծես թե ճանաչում էր Ռուսաստանի գերիշխանությունը եւ այդ պարտադրված խաղաղության պահպանումը դատապարտված էր²²¹: Վերջապես, Ղրիմի անկախության ամրագրումը պայմանագրով պարարտ հող էր նախապատրաստում Ռուսաստանի համար հետագայում այն նվաճելու խնդրում²²²: Թեև այդ պայմանագրով Օսմանյան

²¹⁷ Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, с. 613-614.

²¹⁸ The Cambridge History of Turkey, Vol. III, The Later Ottoman Empire, 1603-1839, Edited by Suraiya N. Faroqhi, London, Cambridge University Press, 2006, p. 57.

²¹⁹ Սուլյն պայմանագրի ամբողջական բնագիրը տե՛ս Собрание важнейших трактатов и конвенций, заключенных Россией с иностранными державами (1774-1906). С введением и примечанием проф. В. Н. Александренко, Варшава, 1906, с. 1-10. Տե՛ս նաեւ Ե. Дружинина, указ. соч.

²²⁰ Dr. M. A. Yalçınkaya, İslahat Değişim Ve Diplomasi Dönemi (1703-1789), – Genel Türk Tarihi, cilt 7, Osmanlı, Editörler Hasan Celal Güzel Prof Dr Ali Birinci, Yeni Türkiye yayınları, Ankara, 2002, p. 94.

²²¹ История царствования государыни императрицы Екатерины Второй, Соч. А. Лефорта, ч. IV, Москва, 1838, с. 3.

²²² Նույն տեղում, էջ 4:

կայսրությունը կորցրել էր քաղաքական վերահսկողությունը Ղրիմի խանության նկատմամբ, իսկ պետական սահմանների երկարությունը կտրուկ կրճատվել էր հոգուտ Ռուսաստանի, այնուամենայնիվ, Օսմանյան պետությունը շարունակում էր պահպանել իր քաղաքական ազդեցությունը Այսրկովկասում:

Այսպիսով, Օսմանյան կայսրությունը եւ նրա երոպական գործընկերները, մասնավորապես՝ Ֆրանսիան, չէին կարողանում հաշտվել 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքների հետ, որոնց հետեւանքով Ռուսաստանի դիրքերը Հյուսիսամերձսեւծովյան տարածաշրջանում անհամեմատ ամրապնդվեցին: Ռուս-թուրքական հարաբերությունները 1774-1787 թթ. բնորոշ էին զինադադարի ժամանակաշրջանի, երբ կողմերը նոր պատերազմ էին նախապատրաստում: Դրա անխուսափելիությունը մարզաբեաբար նկատել էր օսմանյան մեծ վեզիր Մուհամմադ փաշան: Քյուչուկ-Կայնարջի պայմանագրի վավերացման նպատակով Կոստանդնուպոլիս ժամանած իշխան Ն. Ռեպինին նա ասել էր, որ եթե Ղրիմն անկախություն ստանա, իսկ Կերչն ու Ենիկալեն մնան ռուսների ձեռքերում, ապա ինքը չի խոստանում, որ պայմանագիրը երկարաժամկետ կլինի²²³:

Խանություններն ակտիվ քաղաքական շփումների մեջ էին նաեւ Իրանի կառավարող շրջանակների հետ: Այսպես, Ռուսական իշխանությունները տեղեկացվել էին (1777 թ.), որ Ֆաթի Ալի խանը օգնական գորք է խնդրել Քերիմ խան Ջենդից՝ խոստանալով իր քրոջը կնության տալ վեքիլի եղբորը: Դերբենդի խանը նշում էր, որ իր տիրույթներում գտնվող ռուսական գորքը ոչ մի օգնություն ցույց չի տալիս իր թշնամիների հետ պայքարում եւ թույլտվություն էր խնդրում Քերիմ խանից վտարել նրանց Դերբենդից²²⁴: Մակայն օսմանյան իշխանություններն անտարբեր չէին տարածաշրջանում ծավալվող իրադարձություններին:

²²³ А. Петров, Вторая русско-турецкая война в царствование Екатерины II. 1787-1791 гг., т. I, 1787-1789 гг., СПб., 1880, с. 7. Зմւմ. История царствования государыни императрицы Екатерины Второй, с. 3, прим. 1.

²²⁴ Վ. Սարտիրոսյան, Նյութեր հայ-վրաց-ռուսական հարաբերությունների մասին, էջ 102-103:

Դեռևս 1776-1779 թթ. թուրք-իրանական կոնֆլիկտի պահին սուլթան Աբդուլ Համիդ Ա-ն Քերիմ խանի հետ այսրկովկասյան խաների մերձեցումը կանխելու նպատակով վերականգնում է հարաբերությունները նրանց հետ²²⁵: Բացի այդ, Ախալցխայի Սուլեյման փաշան սուլթանից հանձնարարական էր ստացել հակառուսական կռախցիա կազմել այսրկովկասյան խաներից եւ դադատանյան տիրակալներից²²⁶: Սուլթանը փորձում էր Իրանի տերության հետ հնարավոր ռազմական բախման ժամանակ թանկարժեք նվերներով ու խոստումներով ստանալ խաների եթե ոչ աջակցությունը, ապա գոնե չեզոքությունը: Իրոք, ինքնիշխան խաները, տարածաշրջանում ռուսական ազդեցության ամրապնդումից վախենալով, հակվում էին դեպի Օսմանյան կայսրությունը²²⁷:

Իրանում Քերիմ խան Ջենդի մահվանից հետո (1779 թ.) գերագույն իշխանության համար վերստին պայքար էր սկսվել: Շուտով Քերիմ խանի եղբորորդի Ալի Սուրադ Ջենդին հաջողվում է առժամանակ (1782-1785 թթ.) միավորել Իրանի տերության տարածքների մեծ մասը: Բացառություն էին կազմում դաջարների²²⁸ տիրապետության տակ գտնվող հյուսիսային նահանգները եւ Կասպից ծովի առափնյա շրջանները:

Իրանում Քերիմ խանի մահով պայմանավորված քաղաքական քառուր նաեւ Այսրկովկասում էր ապակայունացրել իրադրությունը: Ուժեղացել էին տարածաշրջանը ազդեցության գոտիների վերաբաժանելու այսրկովկասյան տիրակալների

²²⁵ S. Shaw, Iranian relation with the Ottoman Empire, – The Cambridge History of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, Vol. VII, Cambridge, 1991, p. 311.

²²⁶ Из истории русско-грузинских взаимоотношений X-XVIII вв., III. А. Месхиа, Я. З. Цинцадзе, Тбилиси, 1958, с. 140.

²²⁷ С. Бурнашев, указ. соч., с. 5.

²²⁸ Ղաջարների մասին տե՛ս Ի. П. Перрушевский, указ. соч., с. 91; Don Juan of Persia, A Shah Catholic 1560-1604. Transl. and ed. by G. Le Strange, London 1926, p. 46; The Encyclopaedia of Islam, Vol. IV, Leiden, 1997, p. 387; J. Perry, The Zand Dynasty, p. 106-108.

ձգտումները: Այստեղ քաղաքական գերիշխանության հասնելու համար հակամարտող երկու խմբավորումներ էին առաջացել, որոնցից մեկը ղեկավարում էր Վրաց Հերակլ Բ արքան (նրա հետ դաշնակցում էր Ղարաբաղի Իբրահիմ խանը²²⁹), մյուսը՝ Ղուբայի Ֆաթի Ալի խանը: Երկուսն էլ զինական մեծ հնարավորություններ ունեին եւ հարկ եղած դեպքում կարող էին վարձու լեզգիների օգնությանը դիմել²³⁰:

Արեւելյան Այսրկովկասում ռազմաքաղաքական միանձնյա գերիշխանության համար Ֆաթի Ալի խանը պիտի հնազանդեցներ Ղարաբաղի Իբրահիմ խանին: Հարցը «խաղաղ ճանապարհով» լուծելու համար նա Ղարաբաղ է ուղարկում իր փեսային՝ Բաքվի Մելիք Սուհամմադ խանին: Սակայն Իբրահիմը ձերբակալում է նրան եւ երկու տարի պատանդ պահում²³¹: Ֆաթի Ալի խանը Թարքիի շամխալի եւ Շամախիի խաների հետ միասին 1780-1781 թթ. երկու անհաջող արշավանք է կատարում դեպի Ղարաբաղ:

Ղուբայի խանին խիստ անհանգստացնում էր Այսրկովկասում Հերակլ Բ-ի եւ Ղարաբաղի խանի քաղաքական դերի մեծացումը: Հաջողության հասնելու համար կողմերին պետք էր ստանալ Ռուսական կայսրության աջակցությունը: Իրանով պայմանավորված՝ նրանք միմյանց սեւացնելու քաղաքականություն էին սկսել: Այսպես, Ֆաթի Ալի խանը ռուսական իշխանություններին գրում էր, թե տեղի խաների համար անընդունելի է, որ Վրացին (իմա Հերակլ Բ-ն) եւ Իբրահիմ խանը տիրանան «աղարբաջանական բոլոր քաղաքներին»²³²: Իր հերթին Հերակլ Բ

²²⁹ Վերջինս պատանդ էր պահվում Ուրմիայի Ֆաթի Ալի խանի մոտ եւ միայն 1760-ին է ազատություն ստանում, իսկ Քերիմ խան Ձենդը ճանաչում է նրան Ղարաբաղի խան (ՄՄ, ձեռ. 4331, էջ 45բ; *The Life and Addventures of Joseph Emin, an Armenian*, Vol. II, London, 1792, p. 315).

²³⁰ СПФ АРАН, ф. 99, оп. 2, № 13, л. 22, 40.

²³¹ Ст' у М. Нерсисян, А. В. Суворов и русско-армянские отношения в 1770-1780-х годах, Ер., 1981, с. 130.

²³² Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, Под ред. А. А. Цагарели, т. II, вып. II, СПб., 1902, с. 21.

արքան 1782 թ. Պ. Պոտյոմկինին ուղղված նամակում Ֆաթի Ալի խանին անհավատ եւ կեղծավոր էր անվանում, ապա մեղադրում էր թուրքերի հետ նամակագրական կապ հաստատելու համար²³³:

1783 թ. հունվարի 24-ին Պ. Պոտյոմկինին ուղղված գրության մեջ Ֆաթի Ալի խանը դատապարտում էր Հերակլ Բ արքայի դաշնակցային սերտ կապն Իբրահիմ խանի հետ՝ նշելով, որ վերջինս իր մոտ պատանդ է պահում Գանձակի խանին եւ Ղարադաղի խանի որդուն՝ ստիպելով հարկ վճարել: Ֆաթի Ալի խանը պատրաստակամություն էր հայտնում հրաժարվել Վրաց թագավորի հետ ունեցած թշնամանքից, եթե նա օգնություն չտրամադրեր Իբրահիմ խանին: Իր հերթին Հերակլը գրում էր, որ ինքը դաշինք ունի Իբրահիմ խանի հետ՝ անհրաժեշտության դեպքում վերջինիս ռազմական օգնություն տրամադրելու մասին²³⁴:

Նշենք, որ ինչպես նախորդ տասնամյակներում, այնպես էլ 1780-ական թվականներին ռուսական կողմին չէր հաջողվում Արեւելյան Այսրկովկասում եւ Դաղստանում հակաթուրքական կռաւիցիա կազմել տեղի կառավարիչներից: Խաներից Ղարաբաղին էր ամենից ընդգծված թուրքական դիրքորոշում ունեցողը: ԺԸ դարի 80-ական թվականներին ռուսական դիվանագիտությունն Այսրկովկասի քաղաքական քարտեզը վերաձեւելու տարբերակ է մշակում, որով նախատեսվում էր նաեւ ստեղծել հայկական թագավորություն: Դեռեւս 1783 թ. ապրիլի 6-ին Գ. Պոտյոմկինը Պ. Պոտյոմկինին տված հրամանագրում նշում էր, որ Իբրահիմ խանին տապալելուց հետո Ղարաբաղը հայկական մարզի մաս էր կազմելու²³⁵: Այդ հանգամանքը գաղտնիք չէր խանի համար, քանի որ Հայոց պետականության վերականգնումը վտանգում էր խանության գոյությունը: Ռուսական բարձրաստիճան պաշտոնյաների 1780-ական թվականների առաջին կեսի գրազրության քննությունը փաստում է, որ Հայոց պետականու-

²³³ Межкавказские политические и торговые связи Восточной Грузии, с. 56.

²³⁴ Տե՛ս ԲԾՕ, с. 175.

²³⁵ Տե՛ս ԱՓՕ, т. IV, с. 239.

թյան վերածննդի հարցը նպատակ ունի ռուսական ազդեցության տակ պահել վրաց թագավորին եւ Ղարաբաղի խանին: «Շատ պարզ էր այս բոլորից, որ Եկատերինան Հայոց հարցն այնքան եռանդուն կերպով առաջ էր քաշել սուկ իր շահերի համար, այն է՝ Ղարաբաղի խանության վրա իր քաղաքական տիրապետությունը տարածելու համար», – գրում է Լեոն²³⁶: Ռուսաստանի համար Ղարաբաղի խանությունը մեծ քաղաքական եւ առեւտրա-տնտեսական կարեւորություն ուներ: Այն դարպաս էր համարվում՝ ուղի դեպի Իրան, որն Արեւելյան Վրաստանն աշխարհագրորեն մոտեցնում էր Բաքվին, իսկ Կուր-Արաքս գետկիցի մոտ գտնվող Ջավադ բնակավայրը ղարաբաղյան տարածքներին միացնելու պարագայում՝ Աստրախանից Ջավադ եւ Սալխան «ոչինչ չարժեցող» ապրանքները հնարավոր կլինէր փոխանակել մետաքսի եւ այլ ապրանքների հետ²³⁷: Ավելին, համաձայն ռուսական քաղաքական ծրագրերի՝ Գանձակի խանությունը, որին հավակնում էր Իբրահիմ խանը, պետք է ընդգրկվէր Քարթլիի եւ Կախեթի միացյալ թագավորության կազմում²³⁸:

Ղարաբաղի խանը հասկանում էր, որ Իրանում կենտրոնական իշխանության բացակայությունը, արտաքին ազդեցիկային դիմակայելու առանձին խաների անկարողությունը ռուսական զորքերի համար տարածաշրջան ներխուժելու նպաստավոր պայմաններ էին ստեղծում: Այս ամենը հաշվի առնելով՝ Իբրահիմ խանը գնում է քաղաքական քայլի եւ խնդրում ընդունել իրեն Նորին կայսերական իշխանության հովանու ներքո: Ի պատասխան գեներալ-ֆելդմարշալ Գ. Պոտյոմկինն արձանագրում էր, որ կայսրուհին իր հպատակներից ակնկալում է միայն հավատարմություն²³⁹:

²³⁶ Լեոն, Հայոց պատմություն, – Երկերի ժողովածո, հտ. Գ, Եր., 1973, էջ 346:

²³⁷ АКАК, т. II, 1868, с. 703.

²³⁸ РГВИА, ф. 52, оп. 1/194, д. 331, ч. III, л. 15-16.

²³⁹ П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 144.

1783 թ. կնքված Գեորգիեւսկի դաշնագրով²⁴⁰ Արեւելյան Վրաստանը հրաժարվում էր ինքնուրույն քաղաքականությունից եւ ամբողջությամբ հայտնվում ռուսական ազդեցության ոլորտում²⁴¹: Դաշնագրի ստորագրումը Ռուսաստանի կովկասյան քաղաքականության համար շրջադարձային էր, քանի որ աննախադեպ չափով ամրապնդում էր նրա ռազմաքաղաքական դիրքերը տարածաշրջանում: Արեւելյան Այսրկովկասի եւ Դաղստանի տիրակալների մոտ առաջացած խուճապային տրամադրությունները ստիպում էին նրանց դիմել Ռուսաստանին եւ քաղաքական հովանավորություն խնդրել²⁴²: Սակայն ռուսական զորքի (թեեւ փոքրաթիվ) տեղակայումն Արեւելյան Վրաստանում նաեւ խախտում էր ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում՝ թե՛ այսրկովկասյան տիրակալների շրջանում, թե՛ Իրանի տերության, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների ռազմաքաղաքական շահերի համատեքստում:

Խորհրդային պատմագիտության մեջ կարծիք է արտահայտվել, թե Գեորգիեւսկի դաշնագրից հետո Ֆաթի Ալի խանի մոտ «անկասկած ուժեղանում է ռուսամետ կողմնորոշումը»²⁴³: Իրականում ուղիղ հակառակն էր տեղի ունենում. Այսրկովկաս ռուսական զորքի հնարավոր ներխուժման լուրերը, որոնք պտտվում էին նախքան Գեորգիեւսկի դաշնագրի կնքումը, Ֆաթի Ալի խանի բացասական արձագանքին էին արժանացել²⁴⁴:

Ռուսաստանի դիրքերն Այսրկովկասում ավելի են ամրապնդվում, երբ տեղի է ունենում կայսրության շահերի համար իրականացված «մեծ գործը»²⁴⁵՝ Ղրիմի միացումը (համաձայն

²⁴⁰ Դաշնագրի ամբողջական տեքստը տե՛ս ПСЗРИ, т. XXI, с. 1013-1017.

²⁴¹ St' u Н. Киняпина, Кавказ и Средняя Азия во внешней политике России, Москва, 1984, с. 49-51.

²⁴² П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 134-135.

²⁴³ О. Маркова, указ. соч., с. 179.

²⁴⁴ Г. Цинцадзе, Материалы к истории русско-грузинских отношений, с. 20.

²⁴⁵ St' u Новые материалы для жизнеописания и деятельности С. Д. Бурнашева, бывшего в Грузии с 1783 по 1787 г., Под ред. А. А. Цагарели,

1784 թ. հունվարի 8-ի կոնվենցիայի): Դրանով ռուսական ռազմա-նավերի համար ուղիղ ճանապարհ էր բացվում դեպի Օսմանյան կայսրության մայրաքաղաքի մատույցներ²⁴⁶:

Շուտով ռուսական ռազմաքաղաքական ծրագրերում ավելանում է Այսրկովկասում եւս մեկ բուֆերային պետություն ստեղծելու տեսլականը: Այսպես, Դերբենդից մինչեւ Գիլան ընկած տարածքներում ստեղծվելու էր «Ադուանք» (Ալբանիա) անվանումով պետությունը: Արեւմտավրացական իշխանություններն ու Իմերեթն անցնելու էին Ռուսաստանի հովանավորության տակ, իսկ Ախալցխայի շրջանն ու Գանձակի խանությունը՝ Արեւելյան Վրաստանին²⁴⁷: Վերջինիս համար մեծ էր Գանձակի խանության նշանակությունը, քանի որ նրա տարածքով էին անցնում Թիֆլիսից դեպի Իրան եւ Հնդկաստան գնացող առևտրական ճանապարհները: Գանձակում ծայր առած ցանկացած խառնակություն պարենային պակասորդ էր առաջացնում Թիֆլիսում²⁴⁸: Ավելին, 1780-ական թվականների կեսերին Ստ. Բուռնաշեւը կազմել էր Այսրկովկասի քարտեզը, որտեղ Գանձակի խանությունը ներառված էր Արեւելյան Վրաստանի սահմանների մեջ: Այդ մասին հայտնի է դառնում Հերակլ Բ արքայի՝ Պ. Պոտոմկինին 1784 թթ. փետրվարի 15-ին գրած նամակից²⁴⁹:

Ռուսական ծրագրերում Ադուանքի սահմանների մասին հստակ պատկերացում չկար: Մի դեպքում դրանք հասնում էին Դերբենդից մինչեւ Գիլան, մյուս դեպքում՝ Դերբենդից Բաբու ընկած տարածքերն անցնելու էին ռուսական տիրապետության տակ՝ Ադուանքի քաղաքական սահմանը թողնելով հարավիրա-

СПб., 1901, с. 6.

²⁴⁶ С. Жигарев, Русская политика в Восточном вопросе (ее история в XVI-XIX веках, критическая оценка и будущие задачи), Москва, 1896, с. 225.

²⁴⁷ Տե՛ս Ա. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1990, с. 136-139.

²⁴⁸ С. Бурнашев, указ. соч., с. 16.

²⁴⁹ Տե՛ս Межкавказские политические и торговые связи Восточной Грузии, с. 140.

նական շրջանների տարածքում²⁵⁰: 1783-1784 թթ. ռուսական այդ նախագիծը տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակի փոփոխության պատճառով չի իրականանում: Հյուսիսային Կովկասում շեյխ Մանսուրի ապստամբության հետեւանքով ստեղծված անկայուն իրավիճակը, ինչպես նաեւ Օմար (Ումմա) խանի արշավանքը Վրաստան եւ հարակից շրջաններ, 1785-1786 թթ. Հայկական նախագիծը հեռացնում են ռուսական դիվանագիտության օրակարգից: Արտահայտվել է անգամ, թերեւս չափազանցված մի տեսակետ, թե ԺԸ դարի վերջին հայ ազգային մտավորականության ազատ Հայրենիք ստեղծելու ջանքերը դարձան Հայաստանի քաղաքական ու սոցիալ-մշակութային ձգտումների «կարապի երգը»²⁵¹:

Ռուսական այսրկովկասյան քաղաքականության քննությունը փաստում է, որ Հայկական պետության վերածնման գաղափարը քաղաքական խայծ էր եւ միջոց Իբրահիմ խանին թուրքական ազդեցությունից հեռացնելու համար: Այդ նախագիծը միտված էր Ղարաբաղի խանին եւ Վրաց Հերակլ արքային ռուսական ազդեցության ոլորտում պահելուն եւ առավել վերահսկելի դարձնելուն: Իսկ այսպես կոչված Աղուանից թագավորության հիմնումը նպատակ ուներ ապահովել Կուրի աջափնյակում ռուսական գերիշխանության հաստատման օրինականությունը²⁵²: Ռուսական այսրկովկասյան քաղաքականության համատեքստում Հայկական եւ Աղուանական պետությունների ստեղծման գաղափարը միտված էր տարածաշրջանում ուժերի հավասարակշռության համակարգի ստեղծմանը եւ իրավիճակը կարգավորելուն՝ ինչպես տարածաշրջանի ներսում (խաների ու կառավարիչների միջեւ), այնպես էլ նրանից դուրս (չեզոքաց-

²⁵⁰ А. Иоаннисян, Россия и армянское освободительное движение, с. 137-138.

²⁵¹ St' u A. Ferrari, Nobility and Monarchy in Eighteen Century Armenia; Preliminary Remarks to a New Study, – «Iran & the Caucasus», Vol. VIII, № 1, Yerevan, 2004, p. 62.

²⁵² St' u B. Тунян, Историческое пристрастие Азербайджана к истории Армении: мифы и реалии, Ер., 2013, с. 157.

նելով իրանա-օսմանյան քաղաքական ազդեցության ուժեղացումը Կովկասում):

Քաղաքական իրավիճակն Իրանում կրկին սրվում է 1785թ.՝ սկիզբ դնելով գահակալական նոր կռիվներին: Շուտով Ալի Մուրադ խանի եղբայր Ջաֆար խան Ջենդին հաջողվում է հաղթող դուրս գալ այդ կռիվներում (1785-1789 թթ.): «Բայց բազումք ի նախարարաց գլուխ ամբարձեալ՝ ոչ կամեցան հնազանդիլ նմա. եւ առաւել եւս Մահմադ խան Մազանդարանայ՝ որդի Հասան խանին», – գրում է Միքայել Չամչանցը²⁵³: Այս Աղա Մուհամմադ խանն Ալի Մուրադ Ջենդի մահվան լուրն առնելով փախուստի էր դիմել Շիրազից ու մտել գահակալական պայքարի մեջ: Իշխանությունը Շիրազում անցնում է Ջաֆար խանի անչափահաս որդուն Լույֆ Ալի խանին²⁵⁴: Սակայն նա չի կարողանում երկար դիմանալ Շիրազում եւ ստիպված անցնում է Քերման²⁵⁵: ԺԸ դարի 80-ական թվականների երկրորդ կեսին Իրանը շարունակում էր գոյություն ունենալ իբրեւ Պարսից թագավորություն՝ «առանց թագաւորի. եւ իւրաքանչիւր նախարար իշխել իւրում գաւառի, գրեթէ ամենեքին լեալ ինքնագլուխ»²⁵⁶, – ինչպէս Չամչանցն է գրում:

Անկայուն էր քաղաքական իրավիճակը նաեւ Արեւելյան Այսրկովկասում եւ Դաղստանում: Չկարողանալով լուծարել վրաց-ղարաբաղյան դաշինքը՝ Ղուբայի Ֆաթհ Ալի խանը հայացքն ուղղել էր դեպի Իրան՝ փորձելով գահ բարձրացնել ոմն Աբբաս Միրզայի (իբրեւ Սեֆյան արքայատոհմի ներկայացուցիչ եւ շահ Հուսեյնի ժառանգներից մեկը), բայց հաջողության չի հասնում: 1784 թ. նա մեծաթիվ գորքով շարժվում է Արդեբիլ, Մեշքին եւ այնտեղ կառավարիչներ նշանակում:

²⁵³ Միքայել Չամչանց, Հայոց պատմութիւն (սկզբից մինչեւ 1784 թուականը), հտ. Գ, Եր., 1984, էջ 861:

²⁵⁴ E. Pakravan, Agha Mohammad Ghadjar. Essai biographique, Téhéran, 1953, p. 117.

²⁵⁵ Նույն տեղում, էջ 144:

²⁵⁶ Միքայել Չամչանց, նշվ. աշխ., էջ 861:

Սակայն վրաց-դարաբաղյան զինակցությունը քանդելու մտադրությունից Ղուբայի խանը չէր հրաժարվել: Երբ 1785 թ. Հերակլ Բ-ն Իբրահիմ խանի հետ արշավում էր դեպի Գանձակ, Ֆաթի Ալի խանը Վրաց արքային առաջարկում է միասնաբար դուրս գալ Իբրահիմ խանի դեմ: Հաղթանակի դեպքում արցա-խահայությունն անցնելու էր վրացական գերիշխանության տակ, իսկ մահմեդականները՝ Ղուբայի խանի²⁵⁷: Սակայն Հերակլը մերժում է այդ առաջարկությունը, հանում իր գործը պաշարումից եւ օգնության ուղարկում Ղարաբաղ:

Ֆաթի Ալի խանի իշխանության ընդարձակումը դժգոհություն էր առաջացրել նաեւ Դաղստանի տիրակալների մոտ: Ղարաղայթաղի ուցմին եւ ավարների խանը՝ ռուսական իշխանությունների աջակցությունը ստանալով, արշավանք էին նախապատրաստում դեպի Ղուբայի խանի տիրույթները: Նշենք, որ Ղարաղայթաղի ուցմին 1786 թ. Պ. Պոտյոմկինին Արեւելյան Այսրկովկասի քաղաքական քարտեզի վերաձեւման հետաքրքիր տարբերակ էր առաջարկում. տարածաշրջանում խաղաղության հաստատման համար առաջարկվում էր Դերբենդում իշխանությունն «անհապաղ» հանձնել Իմամ Ղուլի խանի թոռանը, Ղուբայում՝ Ֆաթի Ալիին, իսկ Բաքվում՝ Բաքվի խաներին: Ծրագրի իրականացման համար ուցմին խնդրում էր 2000-անոց ռուսական զորախումբ ուղարկել²⁵⁸: Փաստորեն, Ղարաղայթաղի տիրակալը ձգտում էր Ռուսաստանի միջամտությամբ Արեւելյան Այսրկովկասում թուլացնել Ֆաթի Ալի խանի քաղաքական ազդեցությունը: Նաեւ առաջարկվում էր արմատախիլ անել Օսմանյան կայսրության հրահրած շեյխ Մանսուրի շարժումը²⁵⁹: Պ. Պոտյոմկինը Ղարաղայթաղի տիրակալի առաջարկությունն անպատասխան է թողնում՝ Այսրկովկասում պահպանելով Ֆաթի Ալի խանի

²⁵⁷ Ст' у В. Мартиросян, Новые документы о политическом положении Закавказья (80-е гг. XVIII в.), – ՊԲՀ, 1979, հ^մր 3, էջ 92:

²⁵⁸ РГВИА, ф. 52, оп. 194, д. 366, ч. II, л. 69-70.

²⁵⁹ Ի դեպ, որոշ տեղեկությունների համաձայն՝ շեյխ Մանսուրի 6000-անոց զորաջոկատում կային հայեր, չերքեզներ, թաթարներ, թուրքեր եւ այլն (СИРИО, т. 47, СПб., 1885, с. 180).

Ռուսաստանի կովկասյան քաղաքականության համար շուրջ երեք տասնամյակ կանխատեսելի գերիշխանությունը: Գ. Պոտյոմկինի կոշտ արձագանքը Ֆաթի Ալի խանին ստիպում է գործը ցրել եւ վերադառնալ: Սակայն Կովկասի գեներալ-նահանգապետ Պ. Պոտյոմկինը չցանկանալով ռուսական ազդեցության ոլորտից դուրս թողնել Ֆաթի Ալիին, 1786 թ. աշնանը նրան նամակում «պատվական խան» եզրույթով էր դիմում²⁶⁰:

Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպան Յ. Բուլգակովը 1785 թ. փետրվարին հաղորդում էր, որ Ղրիմի կորուստը թուրքերից ավելի դժվար էին տանում ֆրանսիացիները, որոնք սուլթանին ստիպում էին բարձրացնել այդ հարցը²⁶¹: Դեսպանի փոխանցմամբ (1786 թ. մայիսի 1/12) Բարձր Դուռն Ախալցխայի Մուլեյման փաշային գաղտնի հանձնարարել էր 10000 թուրք զինվոր ուղարկել Կովկաս լեզգիներին ոտքի հանելու համար²⁶²: Վերսալի պայմանագրի կնքումից (1768 թ.) մինչև 1787 թ. ռուս-ֆրանսիական հարաբերությունների լարվածություն էր նկատվում: Ֆրանսիայի արեւելյան դիվանագիտությունը 1780-ական թվականներին պայմանավորված էր Լեւանտի առետրի զարգացմամբ, որին «խոչընդոտում էր» ռուսական առաջխաղացումն Արեւելքում²⁶³: 1787 թ. ֆրանս-ռուսական առետրային պայմանագրի կնքման եւ Ֆրանսիայում հեղափոխական իրադրության առաջացման հետեւանքով ֆրանսիական դիվանագիտությունը կորցնում է հետաքրքրությունն արեւելյան հարցերի նկատմամբ: Սակայն դա չէր խանգարում, որ ֆրանսիական ոսկին շարունակեր իր ազդեցիկ դերակատարությունն ունենալ Օսմանյան կայսրության կովկասյան ինդիքների լուծման գործում: Այսպես, շեյխ Մանսուրը շուրջ 2000 ֆրանսիական ոսկի էր բաժանել կովկասյան ժողովուրդներին, որոնք Ղուրանի վրա երդ-

²⁶⁰ РГВИА, ф. 52, оп. 194, д. 366, ч. IV, л. 112.

²⁶¹ СИРИО, т. 47, СПб., 1885, с. 139.

²⁶² СИРИО, т. 27, СПб., 1880, с. 392.

²⁶³ А. Иоаннисян, Россия и армянское освободительное движение, с. 139.

վել էին՝ խոստանալով արշավել դեպի ռուսական Ղզլար²⁶⁴:

Ռուսական առաջխաղացման դեմ մենակ մնալով՝ Օսմանյան կայսրությունը վերադառնում է կովկասյան տիրակալներին սիրաշահելու քաղաքականությանը: Մելիմ Գ սուլթանի (1789-1807 թթ.) եւ մեծ վեզիրի անունից Շաքիի, Շամախիի, Ղարաբաղի, Ղաղստանի տիրակալներին մեծամեծ նվերներ ուղարկելով՝ առաջարկվում էր Անապայի գրավման ժամանակ միանալ դեպի Ղզլար կազմակերպվող արշավանքին²⁶⁵: Երկրորդ ռուս-թուրքական պատերազմի ընթացքում (1787-1791 թթ.) Այսրկովկասի խաների համար նախատեսված թանկարժեք նվերներով եւ մեծ գումարով Ֆաթի Ալի խանի մոտ էր ժամանել Ախալցխայի Սուլեյման փաշայի ներկայացուցիչը: Սուլթանի ֆերմանում նշվում էր, որ ռուսները պատրաստվում են գրավել ողջ «Պարսից թագավորությունը»: Ուստի առաջարկվում էր միասին հարձակվել Արեւելյան Վրաստանի վրա եւ «ռուսներին վտարել կամ կոտորել»²⁶⁶. Եւ այդպես՝ «ընդդիմանան վրաց եւ կործանեն եւ Երեսնու տիրեն»²⁶⁷: Մինչդեռ պատերազմի նախաշեմին Վրաց արքան Սուլեյման փաշայի հետ չհարձակման մասին պայմանագիր էր կնքել եւ ռուսական զորքի հետ արշավել Գանձակ: Ճիշտ է, ռուսական զորքը գնդապետ Ստ. Բուռնաշեւի զլխավորությամբ Գանձակից վերադարձել էր, իսկ արշավանքը ձախողվել²⁶⁸:

Հասկանալով, որ Իրանում քաղաքականապես ուժեղացած Աղա Մուհամմադ խանը կփորձի բորբոքել թշնամանքը Ֆաթի Ալի

²⁶⁴ Неизданные документы академика Буткова, – «Кавказский сборник», т. XX, Тифлис, 1899, с. 407.

²⁶⁵ Неизданные документы академика Буткова, с. 391. Հմմ. Բ. Магомедов, Общественно-экономический строй Дагестана в XVIII – начале XIX вв., Махачкала, 1957, с. 360; Н. Смирнов, Политика России на Кавказе в XVI-XIX вв., Москва, 1958, с. 166.

²⁶⁶ В. Маргиросян, Новые документы о политическом положении Закавказья (80-е гг. XVIII в.), с. 95.

²⁶⁷ ՄՄ, ձեռ. 4496, էջ 136բ-137ա:

²⁶⁸ Давид Багратиони, История Грузии, Текст издал и снабдил вступительной статьей и указателями А. Рогава, Тбилиси, 1971, с. 167.

եւ Իբրահիմ խաների միջեւ, Ռուսաստանը աջակցում է, որ Հերակլ Բ-ն եւ Ֆաթի Ալի խանը քաղաքական դաշինք կնքեն (1787 թ.): Այն իր բնույթով հարձակողական էր՝ ուղղված տարածաշրջանը ազդեցության գոտիների վերաբաժանելուն, տիրակալների միջեւ հնարավոր ռազմական բախումները բացառելուն, ինչպես նաեւ թուրք-իրանական ազդեցության չեզոքացնելուն: Դրանով Ռուսական կայսրությունը վերահաստատում էր ուժերի հավասարակշռությունը թե՛ Իրանի տերության, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների, թե՛ այսրկովկասյան տիրակալների միջեւ: Ռուսաստանն այդ դաշինքը որպես իր ազդեցության ոլորտում պահելու լծակ էր օգտագործելու դեպի Օսմանյան կայսրությունը քաղաքականապես կողմնորոշված Իբրահիմ խանի դեմ²⁶⁹:

Մինչդեռ 1780-ական թվականների կեսերին Աղա Մուհամմադ խան Ղաջարին հաջողվում է իրեն ենթարկել Մպահանը եւ հայացքն ուղղել դեպի Այսրկովկաս: Այդ հանգամանքը Ֆաթի Ալի խանին ստիպում է կայսերական հովանավորություն ստանալու խնդրանքով ռուսական իշխանություններին դիմել²⁷⁰: Ի պատասխան՝ Կովկասի գեներալ-նահանգապետ Պ. Պոտյոմկինը 1786 թ. նշում է, որ Ֆաթի Ալի խանի՝ Ռուսաստանի առջեւ ունեցած ծառայությունները չեն կարող առանց փոխհատուցման մնալ, եւ խոսքն ավարտում է հռետորական նոտայով. «Դուք, պատվական խան, փառք փնտրելով, *ուրիշ որտե՞ղ* (ընդգծումը մերն է – Գ. Մ.) կարող էք այն գտնել, եթե ոչ Մեծի հովանու ներքո»²⁷¹: Որպես տեսանելի ապացույց նա մատնացույց էր անում վրացական օրինակը²⁷²: Հասկանալի էր, որ Ֆաթի Ալի խանի քաղաքական դերակատարումը ռուսական կովկասյան քաղաքականության համար չէր նվազել, քանի որ նրա իշխանությունն էին ճանաչում Դաղստանի, Շիրվանի տիրակալները եւ Ատրպատականի որոշ խաներ²⁷³:

²⁶⁹ Հմմ. В. Дегоев, указ. соч., с. 31.

²⁷⁰ СИРИО, т. 47, СПб., 1885, с. 193.

²⁷¹ РДО, с. 201.

²⁷² Նույն տեղում:

²⁷³ А. Бакиханов, указ. соч., с. 138.

Բայց շուտով լարվում են Ղուբայի խանի եւ Ռուսական կայսրության հարաբերությունները: Կասպից ծովի ավամերձ տարածքներում 1787 թ. ռուսական երկու առեւտրային նավերի նավաբեկության հետեւանքով ողջ ապրանքը թալանվել էր, իսկ փրկված նավաստիների նկատմամբ բռնություն էր գործադրվել: Պ. Պոտյոմկինը վերջնագրի ձեռով պահանջեց Ֆաթի Ալի խանից «այսուհետեւ արգելել Բաքվի Միրզա Մուհամմադ խանին նման հանդգնություն գործել», վերադարձնել ավի նետված ապրանքները եւ ձերբակալված նավաստիներին: «Իսկ եթե դուք այս ամենը չկատարեք, – գրում էր իշխանը, – ապա չէք կարող մեղադրել, որ ես այս քայլերի մասին կհայտնեմ նորին պայծառափայլություն Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինին, իսկ թե դրանից ինչպիսի հետեւանքներ կարող են լինել՝ դժվար չէ պատկերացնել»²⁷⁴:

Ռուսական հովանավորությունը ստանալու Ֆաթի Ալի խանի «ջանքերը» խաթարվում են 1787 թ. ռուս-թուրքական պատերազմի սկսվելու պատճառով: Իսկ 1789 թ. հունվարին Ֆաթի Ալին ու Հերակլ Բ-ն դաշնակցում են Իբրահիմ խանի դեմ: Կողմերը ծրագրում էին, որ գարնանը Ղուբայի խանն անցնելու էր, Արաքսը եւ շարժվելու Իրանի տերության խորքը, իսկ Հերակլը՝ վերահսկելու էր իրավիճակն Այսրկովկասում ու Դաղստանում: Սակայն Ֆաթի Ալի խանի վերահաս մահը խառնում է պլանները. «որով կրկին զորացեալ Իբրահիմ անդրէն արծարծէ զԻւրն չարութիւն յայլ եւ այլ սահմանակից տեղիս իշխանութեան իւրոյ»²⁷⁵:

Ամփոփելով Ֆաթի Ալի խանի շուրջ երեք տասնամյակ ձգված քաղաքական գործունեությունը՝ փաստենք, որ ինքն-իշխան տիրակալը Իրանի տերության, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների նկատմամբ խուսանավելու քաղաքականության միջոցով ջանում էր պահպանել իր գերիշխանությունը տարածաշրջանում: 1780-ական թվականներին նրա քաղաքականության «ռուսական» ուղղությունը միտված էր աստիճանաբար

²⁷⁴ Г. Цинцадзе, указ. соч., с. 125.

²⁷⁵ Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Ա-Բ (1780-1834), Հրատ.՝ Գիւտ քահ. Աղանեանց, Թիֆլիս, 1893, էջ 14:

աճող «ղաջարական վտանգին» դիմակայելուն:

Այսպիսով, 1780-ական թվականների առաջին կեսին հաջողությամբ լուծելով Մերձսեւծովյան, մասնավորապես՝ Արիմի հիմնախնդիրը՝ Ռուսական կայսրությունը Այսրկովկասի առավել ազդեցիկ տիրակալների՝ Հերակլ Բ արքայի եւ Ղուբայի Ֆաթհ Ալի խանի նկատմամբ հմտորեն կիրառում էր քաղաքական հավասարակշռության սկզբունքը՝ թույլ չտալով միաբեւեռ ուժի ի հայտ գալը: Հասնելով Ֆաթհ Ալի խանի եւ Հերակլ Բ-ի միջեւ դաշինքի կնքմանը՝ Ռուսաստանը հասկանում էր, որ նրանց ծավալապաշտական նկրտումները վաղ թե ուշ բախվելու էին միմյանց: Հետեւաբար, Ռուսական կայսրությունը ձգձգում էր իր հովանավորությունը ճանաչելուն ուղղված՝ Ֆաթհ Ալի խանի հետ վարվող բանակցությունները:

Ինչ վերաբերում է Արեւելյան Այսրկովկասի մյուս խաների եւ Ռուսական կայսրության փոխհարաբերություններին, ապա դրանք եւս չի կարելի բարեկամական, առավել եւս՝ «ռուսամետ» անվանել: Այսպես, 1780-ական թվականների երկրորդ կեսին Բաքվի խանի կամայականությունները ռուսական առետրականների նկատմամբ այնպիսի չափերի էին հասել, որ Միրզա Մուհամմադ խանը բարձր մաքսատուրք էր սահմանել անգամ Բաքվի մոտով անցնող նավերի նկատմամբ²⁷⁶:

Այսպիսով, Իրանի տերության, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների ռազմաքաղաքական եւ առետրա-տնտեսական շահերի համատեքստում Արեւելյան Այսրկովկասի ԺԸ դարի երկրորդ կեսի քաղաքական պատմության վերլուծությունը ցույց տվեց, որ խանությունների ինքնիշխանությանը նրանք սպառնում էին հավասարապես: Ի տարբերություն ԺԸ դարի առաջին կեսի, երբ ռուս-թուրք-իրանական հարաբերությունները կարգավորվել էին մի շարք միջպետական պայմանագրերով, 1750-1780-ական թթ. Իրանը, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունները «գործում էին» դիվանագիտական չեզոքության քողի տակ՝ բացառելով ռազմական ներխուժումը տարածաշրջան: Այսպես, Իրանը չէր համակերպվում «պատմականորեն իրեն պատկանող» երկ-

²⁷⁶ Г. Цинцадзе, указ. соч., с. 125.

րամասի կորստի եւ այնտեղ հակառակորդ տերությունների (Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների) ազդեցության ուժեղացման փաստի հետ: Թեեւ Քերիմ խան Ձենդը ձգտում էր վերահաստատել Իրանի տերության «պատմական իրավունքներն» Այսրկովկասի նկատմամբ, սակայն բավարար չափով ռազմաքաղաքական ու դիվանագիտական ներուժ չունենալով՝ փաստացի ճանաչում էր նրանց կիսանկախ կարգավիճակը: Օսմանյան կայսրությունը եւս, ի գորու չլինելով միայնակ լուծել այսրկովկասյան հիմնախնդիրը եւ նկատի առնելով ռուս-իրանական հնարավոր համագործակցությունը (1720-1730-ական թթ. օրինակով)՝ դիմում է այսրկովկասյան խաներին եւ տիրակալներին սիրաշահելու քաղաքականությանը:

Ռուսական կայսրության այսրկովկասյան քաղաքականության համար անհրաժեշտ էին լուծումներ, որոնք թույլ կտային կարգավորել հարաբերությունները թե՛ Օսմանյան կայսրության եւ Իրանի տերության, թե՛ այսրկովկասյան տիրակալների հետ: Ըստ այդմ, ԺԸ դարի երկրորդ կեսի ռուսական այսրկովկասյան քաղաքականությունը կառուցվում էր երկու հարթություններում՝ քաղաքական հարաբերություններ Իրանի տերության ու Օսմանյան կայսրության հետ Արեւելյան Այսրկովկասի շուրջ եւ նրաներսում խանությունների ու տիրակալների հետ: Առաջին հարթությունում ռուսական դիվանագիտությունն Իրանի տերությանը սիրաշահելու նպատակով այսրկովկասյան տարածքները կոչում էր «ադրբեջանական», իսկ «օսմանյան վտանգը» հաշվի առնելով՝ չեզոք վերաբերմունք էր ցուցաբերում խանությունների եւ Արեւելյան Վրաստանի նկատմամբ: Երկրորդ հարթությունը Ռուսաստանի եւ խանությունների հարաբերությունների պատմությունն է ներկայացնում: 1750-ից մինչեւ 1780-ական թվականների առաջին կեսը Ռուսաստանի ռազմաքաղաքական շահերին անհրաժեշտ էր հավասարակշռված եւ կայուն Այսրկովկաս, բայց միմյանց նկատմամբ թշնամաբար տրամադրված խաներով ու տիրակալներով: Ավելին, որոշ դեպքերում նախատեսվում էր թշնամանք սերմանել խաների միջեւ՝ նրանց քաղաքականապես թուլացնելու նպատակով: Օրինակ խոսքը վերաբերում է 1780-ական թվականների առաջին կեսում Ղուբա-Ղարաբաղյան հակա-

մարտության ընթացքում ռուսական իշխանությունների որդեգրած քաղաքականությունը²⁷⁷: 1780-ական թվականներին հաջողությամբ լուծելով Ղրիմի հիմնախնդիրը՝ Ռուսական կայսրությունը Այսրկովկասի ուժեղագույն տիրակալների՝ Հերակլ Բ արքայի եւ Ղուբայի Ֆաթի Ալի խանի նկատմամբ հմտորեն կիրառում էր քաղաքական հավասարակշռության սկզբունքը: Մյուս կողմից, 1750-1780-ական թթ. Արեւելյան Այսրկովկասի խանությունների եւ Ռուսական կայսրության քաղաքական հարաբերությունների վերլուծությունը ժխտում է խորհրդային պատմագիտության այն դրույթը, թե խաները հակաթուրքական տրամադրություններ ունեին եւ քաղաքականապես կողմնորոշված էին դեպի Ռուսաստանը:

Արեւելյան Այսրկովկասի խանությունները ինքնուրույնություն ստանալուն զուգահեռ, Իրանի տերության, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների հետ ինքնուրույն դիվանագիտական հարաբերություններ կառուցելու հնարավորություն էին ձեռք բերել: 1750-1780-ական թթ. նրանք ստիպված էին իրենց անվտանգությունն ու անկախությունը պահպանել՝ դիմելով Իրանի տերության, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների միջեւ խուսանավելու քաղաքականությանը: Ավելին, խաներն իրական վախ ունեին, օրինակ՝ Ռուսական կայսրությունից. «իբրեւ շուն ղօղան ի յահէն մեր ամենաողորմած կայսրուհոյն», – գրում էր Հովսեփ Արղությանը 1785 թ.²⁷⁸:

Այսպիսով, Արեւելյան Այսրկովկասի խաների եւ տիրակալների՝ Իրանի տերության, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների նկատմամբ վարվող քաղաքականությունն անհրաժեշտ է դիտարկել ԺԸ դարի երկրորդ կեսի քաղաքական պատմության համատեքստում, որից ակնհայտ է դառնում, որ այն սեփական անվտանգության եւ ինքնիշխանության պահպանմանը միտված խուսանավելու ռազմավարություն էր:

²⁷⁷ Ст' у РГВИА, ф. 52, оп. 1/194, д. 350, ч. I, л. 4-5.

²⁷⁸ ՄՄ, ձեռ. 4496, էջ 137ա:

ԳԼՈՒԽ Դ

ԱՐԵՒԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԸ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՄԱՍՅԱԿՈՒՄ

ԺԸ դարի 90-ական թվականներին Ղարաբաղի, Գանձակի, Դերբենդի, Ղուբայի եւ Շաքիի խանությունները, Քարթլիի եւ Կախեթի միացյալ թագավորությունը շարունակում էին մնալ Այսրկովկասի ամենաազդեցիկ քաղաքական միավորները: Բայց Արեւելյան Այսրկովկասում Ֆաթի Ալի խանի մահվանից հետո քաղաքական նոր իրավիճակ էր առաջացել: Ղուբայի խանությունը կարող էր «ագահ հարեւանների» քաղաքական զոհը դառնալ, այդ պատճառով խանի մահվան լուրը շուրջ մեկ ամիս գաղտնի պահվեց²⁷⁹: Այսպես, Ղուբայի խանությունից «անկախացել էր» Շամախին: Շաքիի Մուհամմադ Հասան խանը Ֆաթի Ալիի մահվան լուրն առնելով՝ հարձակվում է Շամախիի վրա եւ այնտեղից վտարում Ֆաթի Ալի խանի որդի Ահմադին: Շամախիի խան է դառնում Ղարաբաղի Իբրահիմ խանի մոտ ապաստանած Մուհամմադ Սայիդ խանի որդին՝ Ասկեր բեկը²⁸⁰, ապա նրա եղբայր Ղասիմ բեկը: Շուտով Շամախիի Աղասի խանի որդի Մուստաֆան վարձու լեզգիների օգնությամբ գրավում է Շամախին, իսկ Ղասիմ խանը փախչում է Շաքիի խանություն²⁸¹: Նա խնդրում է Ղուբայի Շեյխ Ալի խանին վերականգնել իրեն Շամախիի խանի պաշտոնում: Ղուբայի եւ Շաքիի խաները 1794 թ. պաշարում են Նոր Շամախին, բայց հաջողության հասնել չեն կարողանում²⁸²: Օգտվելով առիթից՝ Շաքիի Մուհամմադ Հասան խանի եղբայր Սելիմ բեկը 1795 թ. գրավում է Շաքիի խանությունը: Մուհամմադ Հասանն Աղա Մուհամմադ խանից ստացած օժանդակ զորքով շտապում է Շաքի, բայց ծանր պարտություն է կրում: Աղա Մուհամմադ խանը, զայրացած այդ պարտությունից, հրամայում է կուրացնել Շաքիի Մուհամմադ Հասան խանին եւ աք-

²⁷⁹ РГВИА, ф. 52, оп. 194, д. 516, л. 103.

²⁸⁰ А. Серебров, указ. соч., с. 188.

²⁸¹ Նույն տեղում, էջ 190-191:

²⁸² А. Бакиханов, указ. соч., с. 141.

սորել Թավրիզ²⁸³: Շամախիի խանի օգնությամբ Մուհամմադ Հասանին հաջողվում է Շաքիից վտարել եւ վերականգնել իշխանությունը: Շաքիի եւ Շամախիի խանությունների միջեւ քաղաքական դաշինքն ամրապնդվում է ամուսնությամբ, բայց քանի որ Մուհամմադ Հասանը կույր էր, Շաքիի խանությունում փաստացի իշխանությունը գտնվում էր նրա փեսա Մուստաֆա խանի ձեռքում²⁸⁴:

Ֆարսի Ալի խանի մահվանից հետո Բաքվի խանը դեռեւս որոշ հարկային պարտավորություններ էր կատարում՝ հօգուտ Ղուբայի խանության: Բաքվում Մելիք Մուհամմադից հետո իշխանությունը ժառանգում է որդին՝ Միրզա Մուհամմադը: Որոշ ժամանակ անց վերջինս հրաժարվում է հարկ վճարել Դերբենդի եւ Ղուբայի Ահմադ խանին, որն էլ Բաքվի խան է ճանաչում Մելիք Մուհամմադի հորեղբորը՝ Մուհամմադ Ղուլիին: Միրզա Մուհամմադ խանն ու նրա մայրը աքսորվում են Ղուբա: Որոշ ժամանակ անց Բաքվի խանի մորը հաջողվում է համոզել իր եղբոր որդուն՝ վերականգնելու Միրզա Մուհամմադի իշխանությունը: Ահմադ խանի վաղաժամ մահվան հետեւանքով գործը շարունակում է նրա եղբայր Շեյխ Ալի խանը: Նա Միրզա Մուհամմադ խանի հետ գորքով մոտենում է Բաքվի մատույցներին եւ օգնության հասած ռուսական զորքի միջամտությամբ ստիպում Մուհամմադ Ղուլի խանին եկամուտների կեսը տալ Միրզա Մուհամմադին: Մուհամմադ Ղուլի խանի մահվանից հետո իշխանությունը ժառանգաբար անցնում է նրա որդուն՝ Հուսեյն Ղուլի խանին: Վերջինս հրաժարվում է վճարել հասանելիք եկամուտը, իսկ Միրզա Մուհամմադ խանն ընտանիքով ապաստանում է Շեյխ Ալի խանի մոտ: Վերջինս կրկին գորքով շարժվում է Բաքու եւ քաղաքի մոտ ճամբար դնում: Այդ ժամանակ Շաքիի Մուհամմադ Հասան խանը Շեյխ Ալի խանից օգնություն է խնդրում Ղազիդումուլիի խանի հարձակմանը դիմակայելու համար: Շեյխ Ալի խանը Միրզա Մուհամմադին 1000 զինվոր թողնելով՝ վերադառ-

²⁸³ Աղա Մուհամմադ խանի սպանությունից հետո Մուհամմադ Հասան խանը փախչում է Շամախիի Մուստաֆա խանի մոտ:

²⁸⁴ А. Сербров, указ. соч., с. 192, 195.

նում է: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ Հուսեյն Ղուլի խանը հանկարծակի հարձակվում է Միրզա Մուհամմադի վրա, գերեվարում նրան եւ ընտանիքով տանում Բաքու²⁸⁵: Այսպիսով, Արեւելյան Այսրկովկասում Ֆաթի Ալի խանի մահվանը հաջորդած անկայուն իրավիճակը փաստում էր, թե որքան թույլ էր Ղուրայի խանության շուրջ ձեւավորված քաղաքական միավորումը:

Նշված ժամանակաշրջանում Ձենդերի արքայատոհմի իշխանությունն Իրանում թուլացել էր, եւ այդ իրավիճակում Դերբենդի ու Ղուրայի նորընծա խան Ահմադը շտապում էր «բարեկամական նամակագրություն» հաստատել Կուրանի եւ Կովկասի կորպուսների գլխավոր հրամանատար Պ. Թեքլիի հետ: Ռուսական գահին հավատարմություն հայտնելով՝ նա խոստանում էր հովանավորել ռուս վաճառականությանը²⁸⁶: Ավելին, Ահմադ խանը ռուսական հրամանատարությանն է փոխանցում կովկասյան տիրակալներին հասցեագրված Մելիմ Գ սուլթանի 1790 թ. Նամակները թուրքական հովանավորությունը ճանաչելու առաջարկով²⁸⁷: Ղուրայի խանի այս «ռուսամետությունը» պայմանավորված էր նախ եւ առաջ արտաքին վտանգով՝ Այսրկովկասում եւ նրա շուրջ ձեւավորված անկայուն ռազմաքաղաքական իրավիճակով: Ղուրայի խանությունը Արեւելյան Այսրկովկասը երեք տասնամյակ գրեթե միանձնյա քաղաքական ազդեցության տակ պահելով՝ այժմ նոր իրավիճակում էր հայտնվել, եւ Ահմադ խանը, որպէս իր հեռատես հոր քաղաքական ուղեգծի շարունակող, փորձում էր ռուսական իշխանությունների աջակցությամբ վերականգնել խանության հզորությունը: Նորընծա այդ խանին իր

²⁸⁵ А. Сербров, указ. соч., с. 189-190. Հմմ. Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սալխանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից՝ որք ի Շամախույ թեմի, Գրեց Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց, Տփլիս, 1896, էջ 472-482:

²⁸⁶ РДО, с. 212-213.

²⁸⁷ Е. Козубский, указ. соч., с. 106. Թե՛ շամխալը, թե՛ Դերբենդի խանը քանազնացների միջոցով ռուսական իշխանություններին գրավոր «բացատրություններ են տալիս» կատարվածի մասին (տե՛ս Неизданные документы академика Буткова, с. 390-392).

շնորհավորանքներն ու բարեմաղթանքներն էր ուղարկում նաև Ախալցխայի Մուլեյման փաշան: Առաջարկելով մասնակցել Բատալ փաշայի դեպի Ղզլար կատարվող արշավանքին՝ վերջինս հույս էր հայտնում, որ խանը հավատարիմ կմնա իր հոր քաղաքականությանը: Ֆաթի Ալի խանն իրոք բարեկամական հարաբերություններ էր պահպանում օսմանյան իշխանությունների հետ և «ջանասիրաբար *նման* [ընդգծումը մերն է – Գ. Մ.] ծառայություններ մատուցում թուրքական արքունիքին»²⁸⁸:

Ռուսական կայսրությունը՝ չցանկանալով իր ազդեցությունից դուրս թողնել Ղուբայի խանությունը, «առանձնահատուկ» զգուշավորություն էր ցուցաբերում նրա նկատմամբ: Այսպես, վերահսկողություն էր սահմանված Ղզլարի մաքսակետով Այսրկովկաս կամ Դաղստան տեղափոխվող ապրանքների, մասնավորապես երկաթի նկատմամբ: Սակայն ստեղծված քաղաքական իրադրությունը հաշվի առնելով Աստրախանի նահանգապետը 1790 թ. հոկտեմբերի 28-ին հանձնարարում է Ահմադ խանի նկատմամբ «առանձնահատուկ հարգանք» ցուցաբերել և թույլատրել Ղզլարի մաքսակետով 500 փուֆ երկաթի տեղափոխումը²⁸⁹:

Ինչպես վերը նշվեց, 1791 թ. մարտին Ահմադ խանը մահանում է, իսկ իշխանությունն անցնում է նրա 13-ամյա եղբորը՝ Շեյխ Ալի խանին: Վերջինս իր բանագնացին Գեորգիեսկ է ուղարկում և հավատարմություն հայտնում ռուսական գահին՝ բացասական վերաբերմունք ցուցաբերելով Աղա Մուհամմադ խանի նկատմամբ: Շեյխ Ալի խանը հաղորդում էր, որ թուրքերն իր օգնությունն են «խնդրել» և շարունակում են «խնդրել», սակայն ինքը չի պատրաստվում Ռուսական կայսրությունից բացի որեւէ մեկին ծառայել²⁹⁰: Բանակցությունները դադարում են բանագնացի վերահաս մահվան պատճառով, իսկ Շեյխ Ալի խանը չէր շտապում նոր պատվիրակություն ուղարկել: Պատճառն այն էր, որ Աղա Մուհամմադ խանը 1791 թ. բանակ էր դրել Մուշ-

²⁸⁸ Неизданные документы академика Буткова, с. 392-393.

²⁸⁹ РДО, с. 218.

²⁹⁰ Լույն տեղում, էջ 223:

կիանբար կոչվող վայրում. «եւ կոչելն առ ինքն զիշխօղան երկրացս. յորոց շատքն գնացին, եւ մերն եւ այլք հեռաւորք զընծայս յղեցին, եւ հպատակութիւն ցուցին, բայց ի Շուշոյ Իբրահիմ խանէն», – գրում է Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը²⁹¹: Հրավերը մերժում են նաեւ Շամախիի, Թալիշի, Շաքիի ու Գանձակի խաները՝ բավարարվելով միայն նվերներ ուղարկելով²⁹²: Ղուկաս Կարնեցու բնորոշմամբ՝ իշխող խաները «ի նոցանէ մօտակայքն գնացին առ նա, ի հիս անորքն մարտ եւ ընծայս յղրկեցին, հպատակութիւն ցուցանիլով»²⁹³:

Հայտնի է, որ Շիրազի քալանթարը դավաճանում է Քերիմ խան Ջենդի ազգական Լուրթ Ալի խանին եւ քաղաքը 1791 թ. հանձնում Աղա Մուհամմադ խանին²⁹⁴: Լուրթ Ալի խանը մեծ զորաբանակով շարժվում է Քերման եւ մի քանի ամիս իշխում այնտեղ²⁹⁵: Լուրն առնելով՝ Աղա Մուհամմադ խանը շտապում է ընդառաջ՝ իր զորահրամանատարներին թողնելով Ատրպատականում²⁹⁶ եւ «ոստիկան» կարգելով «ի Դարեժ ի վերա Հալաստանի գՍուլեյման խան»²⁹⁷: Շահի նկրտումներն Այսրկով-

²⁹¹ Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Թ, Հովսէփ կաթողիկոս Արղութեան (1778-1800), Հրատ. **Գիւտ քահ. Աղանեանց**, Թիֆլիս, 1911, էջ 136: «Նայ, – վկայում էր Վարդան Օձնեցին, – նոյնպէս կոչեաց զի Իբրահիմ խանն Ղարաբաղայ, բայց նա դաշնակից եղեալ ըստ Հերակլ արքային Վրաց ու Մուստաֆայ խանին Թալիշայ, ոչ գնաց» (ՄՄ, ձեռ. 4331, էջ 75բ):

²⁹² ՄՄ, ձեռ. 4501, էջ 368բ:

²⁹³ ՄՄ, ԿԴ, թղթ. 6, վավ. 166: Հմմ. Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Ա-Բ (1780-1834), Հրատ. **Գիւտ քահ. Աղանեանց**, Թիֆլիս, 1893, էջ 25: Տե՛ս նաեւ **Ք. Կոստիկյան**, Իրանի տերութեան պալատական պատմագիր Սարավիին Աղա Մուհամմադ խանի 1795 թվականի դարաբաղյան արշավանքի մասին, – ՄՄԱԵԺ, հտ. XXVII, Եր., 2011, էջ 339:

²⁹⁴ **E. Pakravan**, *op. cit.*, p. 131-132.

²⁹⁵ Նույն տեղում, էջ 144:

²⁹⁶ Նիւթեր ազգային պատմութեան համար, Երեւելի հայկազունք ի Պարսկաստան, Աշխատասիրութեամբ՝ **Գ. Շերմազանեանի**, Ռօստով (Դօնի վերայ), 1890, էջ 14:

²⁹⁷ ՄՄ, ձեռ. 4331, էջ 76ա:

կասի նկատմամբ այսքանով չեն սահմանափակվում, եւ նա «Ժամադիր եղեալ գալ ի գարնան ի վերա Իբրահիմ խանին եւ Հերակլ արքային վերա»²⁹⁸:

Խորհրդային պատմագիտության մեջ առկա էր այն տեսակետը, թէ 1787-1791 թթ. ռուս թուրքական պատերազմի ժամանակ ռուսական կառավարող շրջանակների ուշադրությունից դուրս էր մնացել «ղաջարական վտանգը»²⁹⁹: Դա մասամբ է համապատասխանում իրականությանը, քանի որ Արեւելյան Այսրկովկասի նկատմամբ վարվող քաղաքական ուղեգիծը շարունակում էր մնալ որպէս արտաքին քաղաքականության կարեւորագույն ուղղություններից մեկը: Եկատերինա Բ կայսրուհին 1791 թ. Գ. Պոտյոմկինին գրած նամակում ցավով էր նշում, որ Ամերիկայից ու Սիբիրից լուրերն ավելի շուտ են մայրաքաղաք հասնում, քան Կովկասից³⁰⁰: Ռուսական դիվանագիտության կարկառուն ներկայացուցիչ Գ. Պոտյոմկինի՝ կովկասյան հարցերով ավելի շատ, քան ռուսական արտաքին քաղաքականության եւրոպական ուղղությամբ հետաքրքրված լինելու մասին էր նշում նրա ժամանակակից բրիտանացի դիվանագետ Հարրիսը³⁰¹:

1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի հաղթական ավարտից հետո Կովկասում Ռուսական կայսրության շահերին սպառնացող թուրքական վտանգը գործնականում վերացավ: Նշենք, որ պատերազմի ընթացքում ռուսական հրամանատարությունը տեղեկություններ ուներ կովկասյան ժողովուրդների՝ թուրքերին աջակցելու մասին³⁰²: Ռուսաստանի քաղաքականությունն Այսկովկասի նկատմամբ արտահայտված էր Եկատերինա

²⁹⁸ Նույն տեղում: Հմմ. ՄՄ, ձեռ. 4501, էջ 368բ:

²⁹⁹ О. Маркова, указ. соч., с. 286.

³⁰⁰ Императрица Екатерина II и кн. Потемкин, Подлинная переписка, – «Русская старина», т. XVII, СПб., 1876, декабрь, с. 646.

³⁰¹ Исторический очерк кавказских войн от их начала до присоединения Грузии, Под ред. В. Потто, Тифлис, 1899, с. 155.

³⁰² Журнал кампании по Кавказской линии, покойного генерала от инфантерии и кавалера И. И. Германа, 1790 года от 22 сентября по 30-е число, – «Отечественные записки», ч. XXIV, СПб., 1825, с. 353.

Բ կայսրուհու 1792-1793 թթ. հրամանագրերում, որտեղ հիմնական շեշտը դրվում էր տեղի խաներին և առաջնորդներին ռուսական ազդեցության ոլորտում պահելու վրա՝ նրանց շահագրգռելով առևտրային արտոնություններով ու այլ «օգուտներով»³⁰³: Այսինքն՝ Ռուսական կայսրությունը բացառում էր ուժի կիրառումը խանությունների և իշխանությունների նկատմամբ: Ավելին, գեներալ Ի. Գուրովիչին հասցեագրված 1793 թ. ապրիլի 19-ի կայսերական հրամանագրով նախատեսվում էր օգտվել Իրանի տերության քաղաքական անկայունությունից և Կասպից ծովի ափամերձ ժողովուրդներին հովանավորության տակ առնել («առանց երկմտանքի»): Թուրքական գործոնը հաշվի առնելով՝ հանձնարարվում էր խուսափել ծովից հարավ-արեւմուտք ապրող ժողովուրդներին ռուսական հովանավորության տակ ընդունելուց: Նախատեսվում էր գրավել Կասպից ծովի՝ Բաքվից քիչ հեռու գտնվող և «պարսկական խաներից» ոչ մեկին չպատկանող կղզիներից մեկը և այն ռուսական ռազմական ու առևտրական նավերի կայանատեղի դարձնել³⁰⁴: Այսպիսով, Ռուսաստանը 1790-ական թվականների սկզբին ծրագրում էր Արեւելյան Այսրկովկասի միացումը կայսրությանը խաղաղ ճանապարհով՝ պահպանելով Օսմանյան կայսրության զսպման քաղաքականության դրույթները:

Այսրկովկասի խանությունները կարելուր տեղ էին գրավում նաեւ Ադա Մուհամմադ խանի ռազմաքաղաքական ծրագրերում: Այսպես, Ադա Մուհամմադն իր կովկասյան քաղաքականության մեջ հետեւում էր ինչպես Ռուսական պետության, այնպես էլ Օսմանյան կայսրության քաղաքական ուղենիշին: Նրա մոտ խորհրդակցության ժամանակ (1793 թ.) որոշվում է չիզել «հին կապերը» Ռուսաստանի հետ³⁰⁵: Ի. Գուրովիչը հուսադրող հաղորդագրություն է ուղարկում Եկատերինա Բ-ին այն մասին, որ Ադա Մուհամմադ խանը Էնզելիում գտնվող ռուսական վաճառա-

³⁰³ П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 286-287.

³⁰⁴ РДО, с. 225-226.

³⁰⁵ П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 329.

կանների նկատմամբ դժվարություններ չի ստեղծում³⁰⁶: Իրականում, Աղա Մուհամմադ խանը սպասողական դրության մեջ էր՝ ռուսական աջակցությունը ստանալու եւ իր դիրքերն Իրանում ամրապնդելու համար: Միաժամանակ, նա նամակագրության մեջ էր թուրքական իշխանությունների հետ, որոնք պատրաստ էին իրեն շահ ճանաչել, եթե կարողանար վերադարձնել Արեւելյան Վրաստանը³⁰⁷: Ընդ սմին, 1792 թ. հունվարի 12-ին Ռուսաստանի Պետական խորհուրդը քննության է առնում Գիլանի Մուրթուգա Ղուլի խանի օգնության մասին խնդրանքը՝ ի հակակշիռ Իրանում օրեցօր ուժեղացող Աղա Մուհամմադ խանի³⁰⁸: Գիլանի, Աստրաբադի եւ Մազանդարանի Մուրթուգա Ղուլի խանը պատրաստ էր Ռուսաստանի տրամադրության տակ դնել որոշ նահանգներ եւ Էնզելիի թերակղզին՝ նավահանգստային քաղաքով, ռուսական վաճառականությանը ընդմիջտ ազատել հարկերից եւ այլն: Նա հույս ուներ ստանալ Կասպից ծովի ռուսական նավատորմի ռազմական օգնությունը եւ 300 զինվոր՝ Աղա Մուհամմադ խանի դեմ պայքարելու համար³⁰⁹: Բայց Ռուսաստանը «դանդաղ կոտորյուն» էր դրսևորում, ինչը պայմանավորված էր Մուրթուգա Ղուլի խանի հետ հարաբերությունները չփչացնելու ցանկությամբ եւ քաղաքական մի հաշվարկով՝ անհրաժեշտության դեպքում նրան հակադրել Աղա Մուհամմադ Ղաջարին³¹⁰:

³⁰⁶ Материалы для истории Северного Кавказа 1781-1792 гг. – «Кавказский сборник», т. XVIII, Тифлис, 1897, с. 417.

³⁰⁷ М. И. Кутузов, Документы, Под ред. Л. Бескровного, т. I, Москва, 1950, с. 247.

³⁰⁸ Նրա մասին տե՛ս **Е. Pakravan**, *op. cit.*; Жизнеописание Ага-Магомет-Хана Каджара, основателя ныне царствующей в Персии династии, с кратким обзорением последовавших по его смерти главнейших происшествий, СПб., 1835. Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադին կոչում էին «Աղա-Մամատ-Շահ, Ներքինի-Շահ եւ Չեզոք-Շահ» (**Մ. եպ. Բարխուտարեանց**, Պատմութիւն Աղուանից, հտ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 123):

³⁰⁹ АГС, т. I, ч. II, СПб., 1869, с. 790.

³¹⁰ Տե՛ս **Պ. Չոբանյան**, Հայ-ռուս-պարսկական կապերի պատմությունից, – ՊԲՀ, 1991, հ^մ 2:

1793 թ. ամռանը Սուլեյման խանը մեծ զորաբանակով ժամանում է Թավրիզ՝ ստանալու համար տեղի խաների հնազանդությունը: Նա Ղարաբաղի խանին խալաթ ու սուր է ուղարկում, եւ նրանց միջեւ «ձեւական սիրալիք հարաբերություններ են հաստատվում»³¹¹: Սուլեյման խանի ժամանելուց հետո Սադեղ խան Շաղաղին, Նասիր խան Շահսեւանը, Նախիջեւանի Քյալբալի խանը, Երեւանի Մուհամմադ խանը, Գանձակի Ջավադ խանը, Մարաղայի Ահմադ խանը, Բայազետի կառավարիչը, «գալով Սուլեյման խանի մոտ, ծառայության են անցնում»³¹²:

Այսրկովկասում ստեղծված իրավիճակից անհանգստացած՝ Ռուսաստանի Պետական խորհրդում 1793 թ. քննարկվում էր Բաքվի ու Դերբենդի խանությունների՝ ռուսական հովանավորության տակ անցնելու հարցը³¹³: Դերբենդի եւ Ղուբայի Շեյխ Ալի խանը Այսրկովկասում իրանական ուժերի աշխուժացումից վախենալով՝ շտապում է ճանաչել ռուսական իշխանությունը: Նրա ներկայացուցիչ Միրզա Հասանը խանի անունից Գեորգիեւսկում հավատարմության երդում է տալիս (1793 թ.)³¹⁴: Մակայն երբ Ի. Գուրովիչը պահանջում է (հոկտեմբերի 9-ին), որ Շեյխ Ալի խանն անձամբ ստորագրի հավատարմության մասին փաստաթուղթը՝ խանը հրաժարվում է³¹⁵: Շեյխ Ալի խանի պահվածքը քաղաքական դրդապատճառներ ունեւ, քանի որ Սուլեյման խանն արդեն հեռացել էր Այսրկովկասից, իսկ վտանգը՝ չեզոքացվել: Խանը սահմանափակվում է միայն Ղուբանը համբուրելով ու հավատարմության նամակ ուղարկելով: Այնուամենայնիվ, 1794 թ. փետրվարի 20-ին Պետական խորհրդում որոշվում է բավարարել խանի պահանջը եւ հովանավորության գործ-

³¹¹ Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Թարգմանությունը բնագրից, ներածությունը եւ ծանոթագրությունները Ք. Կոստիկյանի, Եր., 2000, էջ 67:

³¹² Նույն տեղում, էջ 340:

³¹³ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս РДО, с. 225-226.

³¹⁴ АГС, т. 1, ч. II, СПб., 1869, с. 796.

³¹⁵ П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 294.

ընթացը կազմակերպելու նպատակով Սանկտ Պետերբուրգ է մեկնում խանի ներկայացուցիչը³¹⁶:

Հավատարիմ լինելով խուսանավելու հայեցակարգին՝ Շիրվանի Մուստաֆա խանը, Ղարաբաղի Իբրահիմ խանը, Թարքիի շամխալը, Օմար խանը եւ դադստանյան այլ տիրակալներ Շեյխ Ալի խանի պատվիրակի միջոցով 1794 թ. հպատակության փաստաթուղթ են ուղակվում Մելիմ Գ սուլթանին: Նրանք պատրաստ էին 1795 թ. սկզբին 200 հազարանոց զորքով գրավել Թերեք եւ Կուբան գետերի շրջակայքում գտնվող քաղաքներն ու շարժվել Ղրիմ: Խաները փաստում էին, որ հանուն կրոնի իրենք անգամ դրամի դիմաց թույլ չեն տվել ռուսական զորքին իրենց տարածքներով Ասիայի խորքերն անցնել³¹⁷: Թեև Մելիմ Գ-ն խոստանում էր նրանց աջակցել, իրականում ժամանակ էր շահում, իսկ կովկասյան տիրակալների բանագնացը ռուսներից որոշակի գումար ստանալով՝ մեկնում է Գեորգիեսկ:

Այսպիսով, պատմագիտության մեջ գոյություն ունեցող այն տեսակետը, թե Ֆաթհ Ալի խանի ավանդական «ռուսամետ» քաղաքականությունը շարունակվում էր նրա հետնորդների օրոք³¹⁸, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Ֆաթհ Ալի խանի մահվանից հետո Ղուբայի խանության քաղաքական դիրքերը խարխլվել էին՝ խոցելի դառնալով թե՛ այսրկովկասյան, թե՛ դադստանյան տիրակալների համար: Պատահական չէր, որ Ֆաթհ Ալի խանի ենթակայության տակ գտնվող ժողովուրդները, ինչպես նաև Դադստանի, Դերբենդի, Ղարադայթաղի, Ղուբայի, Բաքվի, Շիրվանի, Շաքիի, Գանձակի, Թալիշի եւ Մուղանի հարթավայրի, անգամ՝ Գիլանի բնակիչներն իրենց համաձայնությունն էին հայտնել խանի պաշտոնում Ֆաթհ Ալիի ավագ որդուն՝ Ահմադին տեսնելու համար³¹⁹:

³¹⁶ АГС, т. I, ч. II, СПб., 1869, с. 796-797.

³¹⁷ П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 298-299.

³¹⁸ Дж. Мустафаев, Северные ханства Азербайджана и Россия (конец XVIII–начало XIX в.), Баку, 1989, с. 39.

³¹⁹ РДО, с. 213.

Իրանում Աղա Մուհամմադ խանի դիրքերի ամրապնդումը հարկադրում էր Ղուբայի խանին «ռուսամետ» քաղաքականություն վարել: Շեյխ Ալի խանը 1795 թ. սկզբին իր հնազանդությունն էր հայտնում Աղա Մուհամմադ խանին, քանի որ վերջինս հաշվեհարդար էր տեսել Քերմանի բնակիչների հետ (1794 թ.), գերել էր Լուբֆ Ալի խանին, կուրացրել³²⁰ ու «շահ կոչեցեալ» իրեն³²¹ «եւ սկսալ հարստութիւն ազգին Ղաջարաց ի Պարսկաստան»³²²: Նշենք, որ թեև Աղա Մուհամմադ խանը 1796 թ. մայիսին իրեն շահ էր հռչակել, սակայն փաստացի նրա իշխանությունն Իրանում հաստատվել էր դեռևս 1780-ական թվականներին: Շիրազի անկումից հետո Աղա Մուհամմադ խանը նախկինում Ջենդերին պաշտպանող մի շարք նահանգներից աջակցություն է ստանում: Ի նշան հավատարմության՝ խանը նրանց ընտանիքներից պատանդներ է պահանջում, ապա՝ վերադառնում Սպահան³²³: Այդ նույն ժամանակ մեծ տերությունները եւս դիվանագիտական հարաբերություններ էին հաստատում Աղա Մուհամմադ խանի հետ՝ Ղաջարներին համարելով իրանական գահի միակ հնարավոր հավակնորդներ³²⁴:

Ուստի, երբ 1795 թ. սկզբին Իրանի տերության մեծ մասը միավորված էր, Շեյխ Ալի խանն ապրիլին մեծ շուքով ընդունում է շահի պատվիրակին եւ իր ներկայացուցիչ Խադիր բեկին մեծամեծ նվերներով ուղարկում Իրան³²⁵: Վերջապես, խանը չէր մոռանում նաեւ իր արտաքին քաղաքականության ռուսական ուղ-

³²⁰ E. Pakravan, op. cit., p. 150-154.

³²¹ Տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Դ, Ղուկաս կաթողիկոս (1780-1800), Հրատ.՝ Գիւտ քահ. Աղանեանց, Թիֆլիս, 1899, էջ 633: 1795 թվականը դադստանյան աղբյուրները հիշատակում են որպէս «Ախտայի խանի» Թիֆլիս, Շուշի եւ Շամախի կատարած ավերիչ արշավանքի տարեթիվ (Т. Айтберов, указ. соч., с. 145).

³²² ՄՄ, ձեռ. 4331, էջ 79ա:

³²³ Ch. Picault, op. cit., vol. II, p. 405-406.

³²⁴ Очерки новой истории Ирана (XIX – начало XX в.), Отв. ред. Л. М. Кулагина, 1978, с. 10-11.

³²⁵ E. Козубский, указ. соч., с. 107.

դության մասին՝ առաջ քաշելով Ռուսաստանի հովանավորությունը ճանաչելու իր պայմանները: Պատմագրության այն դրույթը, թե Շեյխ Ալի խանի «անկայուն» քաղաքականության հետեւանքով Ղուբայի խանությունը չընդունվեց ռուսական հովանու ներքո³²⁶, չի համապատասխանում իրականությանը: Ինչպես Այսրկովկասի մյուս տիրակալները, այնպես էլ Ղուբայի խանը, 1790-ական թվականների երկրորդ կեսին ինքնիշխան կարգավիճակը պահպանելու համար կրկին դիմում էին Իրանի տերության, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների միջեւ խուսանավելու քաղաքականությանը: Այն լուրջ փորձության էր ենթարկվել 1795 թ., երբ Աղա Մուհամմադ խանը վերջնականապես ամրապնդելով դիրքերն Իրանում՝ հնազանդություն էր պահանջում Ատրպատականի, Այսրկովկասի եւ Դաղստանի տիրակալներից:

Միավորված իրանական պետության փաստը լուրջ անհանգստություն էր առաջացրել ռուսական կառավարող շրջանակների մեջ: Ռուսական կայսրությունը գործնական քայլերի դիմելով, ստիպված էր ակտիվացնել իր քաղաքականությունը խանությունների նկատմամբ: Սակայն, երբ Բաքվի Հուսեյն Ղուլի խանը ռուսական հովանավորության մասին պայմանագիրը կնքելու նպատակով Գեորգիեսկ է ժամանում եւ Ի. Գուրովիչից խնդրում իրանական հնարավոր ագրեսիայի դեպքում ռազմական նավատորմ ուղարկել, ապա հստակ պատասխան չի ստանում: Իրականում Ռուսական կայսրությունը մի կողմից ձգտում էր ազդեցության ոլորտից դուրս չթողնել Դաղստանի եւ Այսրկովկասի տիրույթները, մյուս կողմից՝ չէր շտապում գործնականում աջակցել նրանց տիրակալներին: Եկատերինա Բ կայսրուհին Ի. Գուրովիչին 1795 թ. սեպտեմբերի 4-ին տրված հանձնարարականում պահանջում էր մերձկասպյան ժողովուրդների շրջանում պահպանել ռուսական գահին հավատարիմ տրամադրությունները ու նրանց «լրությունը»³²⁷:

³²⁶ Дж. Мустафаев, указ. соч., с. 41.

³²⁷ Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, ч. III, СПб., 1886, с. 22.

Աղա Մուհամմադ խանը 1795 թ. Այսրկովկաս արշավելու նախօրյակին գորքը բաժանել էր երեք մասի³²⁸: Մի մասը նա Մուղանի դաշտով ուղարկել էր Շիրվան եւ Դաղստան (աջ ուղղություն), մյուսն իր եղբայրներ Ալի Դուլի եւ Ջաֆար Դուլի խաների գլխավորությամբ դեպի Երեւան (ձախ ուղղություն): Վերջիններս մեծ գումար էին ստացել Հայոց կաթողիկոսից³²⁹: Երրորդ զորաբանակը նրա գլխավորությամբ շարժվում էր Ղարաբաղի խանություն (Շուշի)³³⁰: Շուրջ մեկ ամիս Շուշիի ամրոցն անհաջող պաշարելուց հետո Աղա Մուհամմադ խանը հեռանում է դեպի Խաթունարխա բնակավայր³³¹: Վրացական իշխանություններին հաջողվել էր ձեռք բերել ավարական խանին ուղղված Աղա Մուհամմադ խանի նամակը, որում առաջարկվում էր Կախեթի կողմից հարձակվել Արեւելյան Վրաստանի վրա³³²: Զուգահեռաբար Աղա Մուհամմադ խանը Արեւելյան Վրաստանի դեմ էր ուղղել նաեւ ճարի լեզգիներին՝ յուրաքանչյուրին առաջարկելով 100 ռուբլի³³³:

Փաստորեն, ռուսական իշխանությունները հավաստի տեղեկություններ ունեին դեպի Թիֆլիս նախապատրաստվող արշավանքի մասին, սակայն գործնական քայլեր չէին իրականացնում իրավիճակը փրկելու համար: Այսպիսով, Արեւելյան Վրաստանը ռուսական զինված ուժերի հեռանալուց գրեթե մեկ տաս-

³²⁸ П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 332. Հմմ. Н. Дубровин, Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России. СПб., 1867, с. 12.

³²⁹ АВПР, ф. Сношения России с Грузией, д. 455, л. 184: Հմմ. П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 332; Н. Дубровин, Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, с. 13.

³³⁰ АВПРИ, ф. Сношения России с Грузией, д. 455, л. 184об: Հմմ. R. Gavin, G. Hambly, Agha Muhammad khan and the establishment of the Qajar dynasty; Жизнеописание Ага-Магомет-Хана Каджара, с. 20; Мирза Адигезал-бек, указ. соч., с. 27.

³³¹ АВПРИ, ф. Сношения России с Грузией, д. 455, л. 184об.

³³² Նույն տեղում:

³³³ Նույն տեղում: Հմմ. Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, т. I, с. 93-94.

նամյակ անց (1787 թ.) միայնակ ու անպաշտպան էր մնացել իրանական վտանգի առջև, իսկ շրջակա մահմեդական խանությունները (բացառությամբ Ղարաբաղի) վախից ճանաչել էին Իրանի տիրակալի իշխանությունը³³⁴: Իրանական մի քանի տասնյակ հազարի հասնող զորքի դեմ Հերակլ Բ արքայի տրամադրության տակ կար 2700 զինվոր եւ շուրջ 2000-ն էլ Իմերեթի Սողոմոն Բ-ի օգնական ուժերն էին³³⁵: Աղա Սուլիսանադ խանի կողմից Թիֆլիսի ավերումից³³⁶ հետո Ռուսաստանում վերջապես Այսրկովկաս արշավելու քաղաքական որոշում է կայացվում, քանի որ կայսրությանը ձեռնոց էր նետված եւ անհրաժեշտ էր վերականգնել ոտնահարված հեղինակությունը:

Այսրկովկասյան իշխանություններից հակաիրանական կռավիցիա կազմելու առաքելությամբ 1795 թ. հոկտեմբերի 28-ին Դերբենդ է ժամանում Ի. Գուղովիչի ներկայացուցիչը: Երբ հայտնի է դառնում, որ Ռուսական կայսրությունը շահին պատժելու համար պատրաստվում է զորք ուղարկել, կովկասյան տիրակալները հնազանդություն են հայտնում ռուսական գահին՝ հրաժարվելով Աղա Սուլիսանադ խանի նկատմամբ ունեցած «քաղա-

³³⁴ В. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах и легендах, т. I, вып. I, СПб., 1887 с. 271.

³³⁵ Теймураз, Взятие Тифлиса Ага-Магомед ханом в 1795 году, Тифлис, 1895, с. 6.

³³⁶ Թիֆլիսի ավերման մասին տե՛ս, օր.՝ Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Ժ, Մանր մատենագիրք, էջ 353-374: Աղա Սուլիսանադ խանը Թիֆլիսից տանում է մի քանի զինագործների, որոնց Թեհրանում ծառայության է նշանակում՝ բարձր վարձատրությամբ (Теймураз, Взятие Тифлиса Ага-Магомед ханом в 1795 году, с. 13-14). Հովսեփ Արղությանը Թիֆլիսի ավերման մասին լսելով՝ նոյեմբերի 27-ին Գրիգորիոսյուլից նամակ է գրում «վշտակիր թագաւոր» Հերակլին (ՄՄ, ձեռ. 2951, էջ 82բ-83): Նա շեշտում էր, որ նախքան աղետը ինքը շատերին է գրել՝ տեղեկացնելով վերահաս սպառնալիքի մասին, բայց նրանք չցանկացան հավատալ ռուսական գահի նկատմամբ վրացական իշխանական տան անկեղծությանը (Письма архиепископа Иосифа Аргутинского о Грузии (1795-1796 гг.), – «Кавказская старина», год I, № 2, Тифлис, 1872, с. 29.

քական համակրանքից»։ Դերբենդում շտապում են բացատրել, որ Թիֆլիսի գրավման առիթով իրենք հարկադրված են եղել տոնախմբություն կազմակերպել³³⁷, քանի որ շահի պատվիրակն այդ ժամանակ գտնվում էր Ղուբայում։ Ի դեպ, այդ առիթով տոնախմբություններ էին կազմակերպվել նաև Շաքիում եւ Բաքվում, իսկ Աղա Մուհամմադ խանին շնորհավորական ուղերձներ էին ուղարկվել։

Միաժամանակ Շեյխ Ալի խանը շարունակում էր խուսանավելու քաղաքականությունը՝ թանկարժեք նվերներ պատրաստելով շահի համար³³⁸, քանի որ նրանից ընդունել էր Շիրվանի նայիբի կոչումը³³⁹։ Ավելին, Դերբենդի խանը ձերբակալում է ռուսական հովանավորությունը ստանալու խնդրանքով Աստրախան ուղևորվող Թալիշի Միր-Մուստաֆա խանի բանագնացին։ Թալիշի խանին միայն ամիսներ անց է հաջողվում Աստրախան ներկայացուցիչ ուղարկել։

Այսպիսով, 1774-1791 թթ. ընթացքում Ռուսաստանին հաջողվել էր հաստատվել Մերձսեյծովյան տարածքում, լուծել Ղրիմի հիմնախնդիրը եւ ակտիվացնել այսրկովկասյան քաղաքականությունը։ Հետեւաբար, Իրանում կենտրոնական իշխանության բացակայությունը համապատասխանում էր Ռուսաստանի ռազմաքաղաքական շահերին։ Այդ իրավիճակը հնարավորություն կտար խաղաղ ճանապարհով իրականացնել Արեւելյան Այսրկովկասի միացումը կայսրությանը։ Հակառակ դեպքում Աղա Մուհամմադ խանը ձգտելու էր Նադիր շահի օրինակով վերականգնել Սեֆյան պետության սահմանները, քանի որ Կովկասից

³³⁷ П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 342.

³³⁸ Е.Козубский, указ. соч., с. 107.

³³⁹ П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 332; Н. Дубровин, Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, с. 11. Ավարայի Օմար (Ումմա) խանին առաջարկվել էր Դադստանի սարդարի պաշտոնը (Ս. Բутков, Материалы для новой истории Кавказа, с. 333).

հարավ ընկած տարածքները Իրանական պետության սկզբունքորեն անբաժանելի հատվածներն էին համարվում³⁴⁰:

Այսպիսով, Աղա Մուհամմադ խանին հաջողվեց Նադիր շահի մեթոդներով՝ ռազմական միջամտությամբ, Իրանի տերության ազդեցության ոլորտ վերադարձնել Արաքսից հյուսիս ընկած տարածքները, որոնք Աֆշարների եւ Ջենդերի օրոք, շուրջ 40 տարի Իրանի տերության գերիշխանությունից դուրս էին մնացել: 1747-1791 թթ. ռուսական իշխանությունները Օսմանյան կայսրության զսպման քաղաքականությանը հավատարիմ լինելով՝ Իրանը վերամիավորելու համար իրանական խաների շրջանում «երկրորդ Նադիր խանին էին փնտրում»: Բավականաչափ ռազմաքաղաքական ներուժ չունենալով՝ Օսմանյան կայսրությանը հակազդելու համար՝ Ռուսաստանը փորձում էր նրան հակադրել միավորված Իրանական պետությունը եւ հավասարակշռել ուժերի բաշխումը տարածաշրջանում: Հետեւաբար, եթե Աղա Մուհամմադ խանը Իրանի տերության գահին հաստատվեր մի քանի տասնամյակ առաջ, ապա Ռուսաստանը «կներեր խանին՝ նրա նետած հանդուգն մարտահրավերի համար»³⁴¹: Աղա Մուհամմադ խանի՝ Արեւելյան Վրաստան ներխուժումը մարտահրավեր էր ռուսական կայսրությանը: Դա «մեծ հարված» հասցրեց «ռուսաց արեւելից շահերին» եւ «բոլորովին վայր ձգեց» Ռուսական կայսրության «վարկը» այսրկովկասյան խանությունների շրջանում³⁴²:

Ռուսաստանը ստիպված էր վերանայել իր կովկասյան քաղաքականությունը: Ուժերի հավասարակշռությունը վերականգնելու համար նա Կուր-արաքսյան միջագետքի տարածքը զենքի ուժով նվաճելու ճանապարհով պետք է ընթանար: 1790-ական թվականներին Ռուսական կայսրությունը երկու ռուս-թուրքական պատերազմներում հաղթելով եւ Մերձսեւծովյան տարածքներում հաստատվելով՝ հայացքն ուղղել էր Արեւելյան Այսրկով-

³⁴⁰ J. Perry, *The Zand Dynasty*, p. 95.

³⁴¹ Հմմ. Ժ. Անանյան, նշվ. աշխ., էջ 15:

³⁴² Բաֆֆի, Խամսայի մեկիքությունները, – Երկերի ժողովածո, հտ. 10, Եր., 1959, էջ 270: Հմմ. Լեռ, նշվ. աշխ., էջ 391:

կաս եւ Իրան³⁴³: Հետաքրքրական է, որ ԺԸ դարի վերջին ռուսական դիվանագիտության մեջ պետության անվտանգության առումով կասկածի տակ էր դրվում Ղրիմի հարցի կարեւորությունը, ի տարբերություն Բալթիկ ծովի հիմնախնդրի: Լոնդոնում գտնվող ռուսական դեսպան Ս. Վորոնցովը 1790 թ. Ս. Վորոնցովին գրում էր, որ ինքը 30 Ղրիմ կտար Հելսինգֆորսի եւ Սվեաբորգի համար, առանց որոնց Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքին վտանգ էր սպառնում ³⁴⁴: Սակայն Ռուսաստանում բարձր էին գնահատում Օսմանյան կայսրության հետ ձեռք բերված խաղաղությունը, ինչը «պարսկական գործերին» անդրադառնալու հնարավորություն էր տալիս: Եկատերինա Բ կայսրուհին բացառում էր «Հունական կայսրության» (իմա՝ «Հունական նախագիծ») վերածնման գաղափարը, քանի որ Ռուսական կայսրության կովկասյան քաղաքականության համար օրակարգային էին Իրանում եւ Այսրկովկասում ծավալվող իրադարձությունները: Բարոն Գրիմին 1795 թ. սեպտեմբերի 12-ի գրած նամակում նա նշում էր, որ Սելիմ Գ սուլթանին «հրահրում են» (խոսքը եւրոպական գործընկերների մասին է) պատերազմ սկսել ռուսների դեմ եւ շուրջ 600 թուրք զինվոր եւրոպական տիպի զորավարժանքներ են անցկացնում, իսկ Դանուբի ափերին 60 հազարանոց բանակ է կանգնած, եւ քանի որ առաջին անգամ չէ, ուստի, «կգա ժամանակն ու խելքի կգան», – եզրափակում էր կայսրուհին³⁴⁵: Իրանում տիրող քաղաքական իրավիճակը պատկերավոր է բնութագրել կոմս Ա. Վորոնցովը կոմս Ս. Վորոնցովին 1796 թ. ապրիլին գրած նամակում՝ նշելով, որ Պարսկաստանը ոչնչացնում է ինքն իրեն³⁴⁶: Մինչդեռ Աղա Մուհամմադ խանը

³⁴³ Տե՛ս Պ. Չոբանյան, Հայ-ռուս-պարսկական կապերի պատմությունից (XVIII դարի վերջ), – ՊԲՀ, 1991, հ^տ 2, էջ 55-65:

³⁴⁴ Архив князя Воронцова, кн. IX, Бумаги графа Семена Романовича Воронцова, ч. II, 1876, с. 173-174.

³⁴⁵ Новооткрытые письма императрицы Екатерины Второй к барону Гримму, 1787-1796 гг., – «Русский архив», т. X, Москва, 1878, с. 222.

³⁴⁶ Архив князя Воронцова, Под ред. П. И. Бартенева, кн. XXV. Бумаги разного содержания, Москва, 1882, с. 163.

նպատակադրվել էր վերականգնել Սեֆյանների օրոք գոյություն ունեցող պետական սահմանները:

Եկատերինա Բ կայսրուհու 1796 թ. փետրվարի 19-ին Վ. Ջուրովին («գոր ղզլայադ [ոսկեոտն] կոչէին»³⁴⁷) տված հրամանագրով Այսրկովկաս արշավելու քաղաքական որոշում էր կայացվում³⁴⁸: Փաստաթուղթը բացահայտում էր ռուսական այսրկովկասյան քաղաքականության նոր ուղենիշները: Կայսրությունը հստակեցնում էր իր դիրքորոշումը խաների նկատմամբ՝ նրանց բաժանելով «բարի մտադրություններ» ունեցողների (Բաքվի, Թալիշի)³⁴⁹ եւ «մյուսների»: Կայսրուհին Դերբենդի Շեյխ Ալի խանին անվանում էր «թեթեւամիտ ու անհետեւողական»՝ հանձնարարելով հոգուտ Ռուսաստանի շահերի նրան հոր քաղաքական ուղի «վերադարձնել»³⁵⁰:

Հերակլ Բ արքային քաղաքական գործողությունների ազատություն էր տրվում սեփական ուժերով Երեւանի եւ «ադերբիջանական» մյուս խաներին հնազանդության բերելու համար: Երեւանի խանության աշխարհագրական դիրքը հաշվի առնելով՝ ռուսական իշխանությունները զերծ էին մնում Երեւանի խանի նկատմամբ պատժիչ գործողություններից³⁵¹: Նշելի է, որ Երեւանի բերդը Այսրկովկասի ռազմավարական ու ռազմաքաղաքական ուժեղագույն ամրոցներից մեկն էր: Նրան միանձնյա տիրող քաղաքական ուժը (Օսմանյան կայսրություն կամ Ռուսաստան) հնարավորություն էր ստանալու իշխել Թիֆլիս – Բաքու – Լենքորան – Երեւան ռազմաքաղաքական քառանկյունուն:

³⁴⁷ ՄՍ, ձեռ. 4331, էջ 93ա:

³⁴⁸ Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության արեւելյան ուղղության մեջ Վ. Ջուրովի ունեցած դերի մասին տե՛ս Օ. **Никонов**, Роль В. А. Зубова в становлении российской внешней политики на Востоке, – Вестник Екатерининского института, № 1 (13), 2011, с. 95-99.

³⁴⁹ РДО, с. 228.

³⁵⁰ Նույն տեղում, էջ 229:

³⁵¹ П. **Бутков**, Материалы для новой истории Кавказа, с. 332; Н. **Дубровин**, Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, с. 33-34.

Կովկասյան կորպուսի ռազմական գործողությունները Կուր գետով մինչեւ Գանձակ եւ Ղարաբաղ էին տարածվելու շրջանցելով թուրքական սահմանային տարածքները: Թե՛ ցամաքային, թե՛ ծովային գործողություններում առանձնահատուկ դերակատարում էր ստանում պարենի եւ ռազմամթերքի համար պահեստ համարվող Բաքուն: Մուրթուզա Ղուլի խանին ում իշխանության բերելու եւ Աստրաբադում ու Էնզելիում հենակետ կառուցելու նպատակով աշնան սկզբին արշավանք էր կազմակերպվելու դեպի Գիլան³⁵²:

Անհրաժեշտ էր Հերակլ Բ արքային, Շիրվանի, Ղարաբաղի խաներին, մելիքներին, դադստանյան մյուս տիրակալներին նամակներ ուղարկել եւ բացատրել, որ ռուսական զորքի ներխուժումը տարածաշրջան ազատագրական նպատակ ուներ: Դերբենդի, Բաքվի, Թալիշի եւ Ղարաբաղի խաներին Մուրթուզա Ղուլի խանի անունից եւս նամակներ էին ուղարկվելու: Դրանով Ռուսական կայսրությունը փորձում էր կովկասյան տիրակալների մոտ ընդունելի դարձնել Իրանի տերության գահի համար իր նախընտրելի թեկնածուին՝ Մուրթուզա Ղուլի խանին: Ի դեպ, Մուրթուզա Ղուլիի մասին իր նամակներում մեծ հիացմունքով էր խոսում Եկատերինա Բ կայսրուհին՝ ընդգծելով նրա բնածին խելքը, բարեկրթությունը եւ սերն արվեստի նկատմամբ³⁵³:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ 1795 թ. հետո Այսրկովկասի եւ Ղաղստանի ներքին զարգացումներին Ռուսաստանի

³⁵² РДО, с. 231. Հմմ. АКАК, т. VI, ч. II, 1875, с. 816; Х. Ибрагимбейли, Россия и Азербайджан в первой трети XIX века (Из военно-политической истории), Москва, 1969, с. 55. Աստրաբադը կարող էր դառնալ Կասպից ծովով Հնդկաստանի հետ առևտրի խորացման համար լավագույն նավահանգիստ (Русско-индийские отношения в XIX в., Сб. архивных документов и материалов, Отв. ред. П. М. Шаститко, Москва, 1997, с. 38).

³⁵³ Պետերբուրգում եղած մեկ ամսվա ընթացքում Մուրթուզա Ղուլի խանը երեք անգամ այցելել էր Էրմիտաժ եւ արվեստանոցներում օրական 3-4 ժամ հետևել վարպետների աշխատանքին (տե՛ս Новооткрытые письма императрицы Екатерины Второй к барону Гримму, с. 231).

միջամտությունը բխում էր կանխատեսելի ու հավասարակշռված տարածաշրջան ունենալու ցանկությունից: Նպատակին հասնելու համար ռուսական իշխանությունը չէր բացառում նաեւ ռազմական միջամտությունը «անհնազանդներին ու կամակորներին պատժելու» միջոցով: Վ. Ջուրովին ուղղված նամակում Եկատերինա Բ-ն հանձնարարում էր խնայել իրեն եւ գորքը՝ Շեյխ Ալի խանին երեխա անվանելով, որն իրեն իբրեւ «չարածճի մարդ էր» ցուցադրում³⁵⁴: Ռուսական զինված ուժերին իրավունք էր վերապահված նրանց հեռացնել քաղաքներից եւ շրջաններից, ապա Աստրախան ուղարկել (փաստացի՝ արտաքսել), իսկ «ջանասեր եւ հավատարիմ» խաներին ու տիրակալներին՝ վերականգնել իրենց տիրույթներում: Ավելին, վերջիններս ռուսական գահին հետագա ծառայությունների համար կարող էին պարգևատրվել «կամակորների եւ անհնազանդների» հաշվին³⁵⁵: Դերբենդի գրավումից հետո քաղաքի բեկերի որոշ մասին ռուսական հրամանատարությունը տեղափոխում է Աստրախան³⁵⁶:

1796 թ. մարտին ռուսական իշխանությունը հրապարակում է «Ռուսական զորքերի մուտքը Պարսկաստանի սահմաններ՝ այդ պետությունում իշխանության զավթիչ Աղա Մուհամմադ խանի դեմ» վերտառությամբ հրովարտակը³⁵⁷: Փաստաթղթից պարզ է դառնում, որ ռուսական իշխանությունները, պատմական անցյալին տուրք տալով, Արեւելյան Այսրկովկասի տարածքը որպես իրանական պետության մաս էին ընդունում: Իբրեւ արշավանք սկսելու պաշտոնական պատճառ նշվում էր Աղա Մուհամմադ խանի՝ Արեւելյան Վրաստան ներխուժելը³⁵⁸: Հրովարտակում

³⁵⁴ Письма и записочки Екатерины Великой к графу Валерьяну Александровичу Зубову (1789-1796) – «Русский архив», т. III, СПб., 1886, с. 273.

³⁵⁵ РДО, с. 231.

³⁵⁶ А. Бакиханов, указ. соч., с. 144.

³⁵⁷ Հրովարտակի ամբողջական տեքստը տե՛ս՝ ПСЗРИ, т. XXIII, с. 876.

³⁵⁸ Աղա Մուհամմադ խանի Թիֆլիս կատարած արշավանքի մասին մանրամասն տե՛ս՝ Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.), Աշխատա-

Աղա Մուհամմադ Ղաջարին Իրանում «իշխանության զավթող» էին կոչում եւ կասկածի տակ առնում նրա օրինակարգության հարցը: Ռուսական կողմն այսրկովկասյան խաներից պահանջում էր չհամագործակցել «գիշատիչ» Աղա Մուհամմադ խանի հետ եւ սպառնում նրանց ռուսական գահի թշնամիներ հայտարարել³⁵⁹: Ահա եւ առկա էին բոլոր նախադրյալներն Այսրկովկաս ռազմական ներխուժումն իրագործելու համար:

Այսպիսով, կարելի է չկասկածել, որ 1790-ական թվականների առաջին կեսին Արեւելյան Վրաստանի ճակատագրի նկատմամբ ռուսական կառավարող շրջանակների «քաղաքական անտարբերությունը» պայմանավորված էր լոկ տարածաշրջանում գործողությունների ազատություն ստանալու ձգտումով: Ի դեպ, Արեւելյան Վրաստանին օգնություն տրամադրելու մասին սեպտեմբերի 4-ի հրամանագիրը մայրաքաղաքից Կովկաս միայն հոկտեմբերի 1-ին էր հասել³⁶⁰:

Եւ ահա 1796 թ. մարտի 26-ին Ղզլար է ժամանում ռուսական զորավար Վ. Ջուրովը եւ գեներալ-անշեֆ Ի. Գուդովիչից ընդունում հրամանատարությունը³⁶¹: Մակայն ռուսական զորքի մուտքը տարածաշրջան միանշանակ չընդունվեց նրա բնակիչների կողմից: Այդ զորքի եւ ռուսական բարձրաստիճան հրամանատարության համար Այսրկովկասն աշխարհագրական, էթնո-քաղաքական եւ լեզվա-մշակութային առումներով դեռեւս «անառիկ» էր մնում: Ռուսական իշխանություններն այդ հանգամանքը արշավանքից առաջ հաշվի էին առել: Վ. Ջուրովին տրված

սիրությամբ՝ Ռ. Տ. Տիտանյանի, Եր., 1981; ՄՄ, ԿԴ, թղթ. 18, վավ. 195, էջ 16:

³⁵⁹ ПСЗРИ, т. XXIII, с. 878.

³⁶⁰ Очерки истории СССР. Период феодализма. Россия во второй половине XVIII в., Под ред. А. И. Барановича, Б. Б. Кафенгауза, Москва, 1956, с. 734-735.

³⁶¹ Այս արշավանքի ընթացքում ռուսական զորքի կազմի մասին տե՛ս Խроника кавказских войск, в 2-х частях, Составил генерал-майор в отставке А. Л. Гизетти, Под ред. генерал-лейт. Чернявского, Тифлис, 1896, с. 14.

1796 թ. փետրվարի 19-ի հանձնարարականում նախատեսվում էր կազմել եւ Այսրկովկասի բնակիչների շրջանում տարածել հայերեն, վրացերեն, պարսկերեն բացատրական նամակներ՝ նշելով Ռուսական կայսրության «բարի նպատակները», Ադա Մուհամմադ խանի դաժանություններից տեղի ժողովուրդներին ազատելու ցանկությունը: Խաղաղ բնակչության նկատմամբ ռուսական զորքերը պետք է արդարադատություն, հավասարություն, սեփականության անձեռնմխելիության եւ դավանանքի ազատության սկզբունքների պահպանում ցուցաբերեին³⁶²:

Այնուամենայիվ, 1796 թ. մայիսին Այսրկովկասի ժողովուրդներին ուղղված Վ. Ջուրովի ուղերձից պարզ էր դառնում, որ ռուսներն արշավանքի հենց սկզբից տարածաշրջանի ժողովուրդների ոչ բարեկամական վերաբերմունքին էին հանդիպել: Վ. Ջուրովի խոսքերով՝ ռուսական զորքն Այսրկովկաս էր եկել տեղի ժողովուրդներին պաշտպանելու նպատակով, եւ ինքը նրանցից նման վերաբերմունք չի սպասում, այլ խոստանում է պաշտպանել նրանց «ընդհանուր թշնամու» (իմա՝ Ադա Մուհամմադ խանի) ոտնձգություններից ու ազատել նրա կեղեքող բռնակալական լծից³⁶³: Փաստաթղթում նկատելի էր այն պնդումը, թե Իրանի տիրակալը գերագույն իշխանությունը «զավթել էր» խաբեությամբ, խարդավանքով եւ դաժանությամբ: Վ. Ջուրովի այս շրջաբերականը որոշ իմաստով հակադարձում է խորհրդային պատմագիտության այն տեսակետին, թե խանությունների ժողովուրդները ցնծությամբ էին դիմավորում ռուսական զորքերին³⁶⁴ եւ նրանց շրջանում մեծանում էր «ռուսական կողմնորոշումը»³⁶⁵:

³⁶² АРО, с. 420. Հմմ. РДО, с. 229; Н. Дубровин, Поход графа В. А. Зубова в Персию в 1796 году, – «Военный сборник», 1874, февраль, № 2, с. 229.

³⁶³ АРО, с. 431.

³⁶⁴ Дж. Мустафаев, указ. соч., с. 49. Բնարկե, խոսքն այստեղ հայ ազգաբնակչության մասին չէ, որը ռզեւորությամբ էր սպասում ռուսական զորքին՝ նրան ազատարարի համբավ վերագրելով (АРО, с. 433-434, 435).

³⁶⁵ Присоединение Азербайджана к России и его прогрессивные последствия в области экономики и культуры (XIX – начало XX вв.), Под ред.

Իրականում խաների «ռուսամետ» դիրքորոշումը զուտ քաղաքական պահի թելադրանքով էր պայմանավորված: Օրինակ Դերբենդի պաշարման ժամանակ մի խումբ հայեր հպատակություն ստանալու խնդրանքով դիմում են ռուսական հրամանատարությանը եւ նրանց փոխանցում նամակների մի կապոց, որոնցում Շեյխ Ալի խանը լեզգիներից, Ղազիկումուխի խանից ու Դադստանի այլ տիրակալներից օգնություն էր խնդրում՝ փոխարենը ստրուկներ եւ պարզեններ խոստանալով³⁶⁶:

Այսրկովկասյան քաղաքականությունն ակտիվացնելով՝ ռուսական իշխանությունը փորձում էր տարածաշրջանում հակաիրանական կռաւիցիա ստեղծել: 1795 թ. հոկտեմբերին Ի. Գուրովիչը Շեյխ Ալի խանին առաջարկել էր միավորվել Դադստանի տիրակալների հետ եւ դիմադրել Աղա Մուհամմադ խանին³⁶⁷: Սակայն Դերբենդի խանը հակված էր համագործակցել Իրանի տիրակալի հետ: Նա փակվում է քաղաքում եւ դիմադրության պատրաստվում: «...Ձուրով մեծաւ բազմութեամբ ելանէ ի Ղզլար եւ դիմէ ի Դրբանդ եւ Շխալի խան որդի Ֆարալի խանին ընդդիմացեալ յարդարէ զպատերազմ», – գրում է ժամանակակիցը³⁶⁸: Շեյխ Ալի խանն ու նրան աջակցող դադստանյան տիրակալներն իրենց այդ քայլը բացատրում էին Աղա Մուհամմադ խանի կողմից քաղաքի ավերման վտանգով: Խանը ձերբակալում է հակաիրանական կռաւիցիա ստեղծելու նպատակով Դերբենդ ժամանած ռուսական սպային եւ ուցմիի սպառնացող նամակից հետո միայն (ռուսական զորքերն այդ պահին գտնվում էին Ղարաղայթաղում) ազատ արձակում նրան:

Ո՛չ Իրանի տերությունից, ո՛չ Օսմանյան կայսրությունից ռազմական օգնություն չստանալով՝ Շեյխ Ալի խանը մայիսի

А. Гулиева, В. Мочалова, Баку, 1955, с. 19.

³⁶⁶ Историческое известие о походе российских войск в 1796 году в Дагестан и Персию, под командою графа Валериана Александровича Зубова, – «Отечественные записки», ч. XXXI, СПб., 1827, с. 147.

³⁶⁷ П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 350.

³⁶⁸ Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.), էջ 160:

10-ին Դերբենդը հանձնում է ռուսներին, որոնց մեծ աջակցություն էր ցուցաբերում քաղաքի հայ բնակչությունը³⁶⁹: Քաղաքի գրավման համար գեներալ Վ. Ջուրովը սր. Գեորգիի 2-րդ աստիճանի շքանշանի է արժանանում³⁷⁰, իսկ որոշ ժամանակ անց այն պաշտոնապես հայտարարվում է Ռուսական կայսրությանը միացված³⁷¹: Դերբենդի անկումը խուճապ էր առաջացրել տարածաշրջանի խաների եւ տիրակալների շրջանում: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ հունիսի 4-ին Ղուբայի, իսկ հունիսի 13-ին Բաքվի խաները քաղաքների բանալիներն ինքնակամ հանձնում են ռուսական հրամանատարությանը: Միաժամանակ ռուսական զորքը հունիսին մոտենում է Հին Շամախիին³⁷² եւ Կուրդ-բուլաղի մոտ գտնվող ճամբարից բանակցություններ սկսում Շամախիի, Շաքիի, Ղարաբաղի եւ Գանձակի խաների հետ: Ռուսական ռազմական ճամբարից Հովսեփ Արղությանը 1796 թ. սեպտեմբերի 14-ին նամակ է գրում Հերակլ Բ արքային խնդրելով հավաստիացնել խաներին, որ ռուսական իշխանությունները նպատակ չունեն նրանց զրկել իշխանությունից³⁷³:

Այսրկովկասյան խաների տարակուսանքն ու վախը ռուսական զորքերի նկատմամբ տրամաբանական էր, քանի որ նրանց հաղթարշավը խանությունների համար ինքնիշխանության կորուստ էր նշանակում: Մյուս կողմից, Ղարաբաղի, Շիրվանի եւ Դաղստանի տիրակալների՝ իրանական հրոսակների գործողություններից երկրի հետագա ավերման մտավախությունը ստի-

³⁶⁹ Տե՛ս ՄՄ, ձեռ. 2951, էջ 104բ:

³⁷⁰ Сборник сведений о георгиевских кавалерах и боевых знаках отличий кавказских войск, Составлено по архивным документам А. Гизетти, Под ред. В. Потто, Тифлис, 1901, с. 4.

³⁷¹ В. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах и легендах, с. 289.

³⁷² П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 389, 390. Հմմ. ՄՄ, ձեռ. 4331, էջ 92բ:

³⁷³ С. Гасарджян, В. Восканян, Материалы по русско-закавказским отношениям конца XVIII в., – ՊԲՀ, 1977, հ^տ 1, էջ 238:

պում էր նրանց օգնության խնդրանքով ռուսական իշխանություններին դիմել³⁷⁴: Այսպիսով, ռուսական զորքերը կարճ ժամանակում գրավում են Ղազիդումուխը, Դերբենդը, Բաքուն, Շաքին, Շամախին, Ղարաբաղը, Գանձակը³⁷⁵ եւ Կասպից ծովի ողջ ափը՝ Թերեք գետից մինչեւ Կուր գետի հունը: Նախատեսվում էր ռազմական գործողությունները նոր թափով վերսկսել 1797 թ. գարնանը եւ շարժվել դեպի Գիլան, ապա՝ Թեհրան: Նշենք, որ արշավանքից առաջ ռուսական հրամանատարությունը որպես լրտեսներ էր ուղարկում հայերի³⁷⁶, որոնք տիրապետում էին պարսկերենին, լավ գիտեին տեղանքի աշխարհագրությունը եւ հարմարված էին բնակչիմայական պայմաններին:

Արեւելյան Այսրկովկասի վերաբերյալ ռուսական դիվանագիտության ծրագրերը բացահայտվում էին Վ. Ջուրովի՝ գեներալ Ի. Սավելեի նուղված 1796 թ. սեպտեմբերի 20-ի գրության մեջ: Ռուսական կայսության ռազմաքաղաքական շահերի համար Դերբենդի եւ Ղուբայի խանությունների նշանակությունը կարեւորելով՝ Վ. Ջուրովը ծրագրում էր դրանք ռուսական վերահսկողության տակ պահել խանական տոհմը պահպանելով: Նա-

³⁷⁴ История России изложенная персиянином, Пер. Ад. Берже, – «Русская старина», т. XXIV, СПб., 1879, январь, с. 168.

³⁷⁵ Վրաց արքայազն Ալեքսանդրը դեռ 1796 թ. փետրվարին պաշարել էր Գանձակը, բայց պարենի պակասության պատճառով դադարեցրել էր պաշարումը: Երբ Աղա Մուհամմադ խանը Թիֆլիսն ավերելուց հետո վերադառնում է Իրան, Ղարաբաղի Իբրահիմ խանը («Իբրահիմ խան Արցախայ»), դաշնակցելով Հերակլ արքայի հետ, 1796 թ. մարտին 3000-անոց զորքով եւ նույնքան լեզգիներով անհաջող հարձակվում է Գանձակի Ջավադ խանի վրա («Վարձ այս կովկասիան զօրաց իւրաքանչիւրի անձին էր եօթն կամ տասն դատակ, եւ մէկ լիտր դմակ ոչ խարի»։ ՄՄ, ԿԴ, թղթ. 18, վավ. 195, էջ 30): Ղատակ կամ դատաք (թուրք.) նշանակում է բամբակե ներկած կտոր, որից արխալուղ էին կարում: Տե՛ս Դիվան Հայոց պատմության, Նոր շարք, Գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հտ. Ա (1780-1785), Աշխատասիրությամբ՝ Վ. Գրիգորյանի, Եր., 1984, էջ 565:

³⁷⁶ Жизнь Артемия Араратского, уроженца селения Вагаршапат близ горы Арарат, с. 167.

խատեսվում էր Ֆաթի Ալի խանի դուստր Փերիջա խանումին իշխանության բերել Դերբենդում, իսկ խանի որդուն՝ Հասան բեկին՝ Ղուբայում: Նպատակահարմար էր միավորել Դերբենդի խանությունը եւ Թարքիի շամխալությունը՝ Փերիջա խանումին ամուսնացնելով շամխալի որդու հետ (այդ ժամանակ շամխալը իշխանությունից հրաժարվել էր հոգուտ որդու)³⁷⁷: Փաստորեն, վերածնվում էր Ֆաթի Ալի խանի ստեղծած լայնարձակ իշխանապետությունը, բայց՝ ռուսական գերիշխանության ներքո, իսկ Թարքիի շամխալության միջոցով հնարավորություն էր ստեղծվում վերահսկել Դաղստանի մյուս իշխանություններին: Անհրաժեշտության դեպքում շամխալը կարող էր մինչեւ 40000 հետեւակ մարտի դաշտ դուրս բերել: Նա Շամախիի, Ղուբայի եւ Բաքվի խանություններում մի շարք գյուղեր ուներ որպես «նվեր» եւ դրանցից տարեկան եկամուտ էր հավաքագրում շուրջ 30000 ռուսական արծաթի չափով³⁷⁸:

Արշավանքը դեռեւս չավարտած՝ ռուսական իշխանություններն արդեն մշակել էին Արեւելյան Այսրկովկասի հեռանկարի տեսլականը: Պ. Պոսյոմկինին ուղղված 1796 թ. հոկտեմբերի 15-ի նամակում Վ. Ջուրովը նշում էր, որ Դաղստանի եւ Շիրվանի միավորումը հնարավորություն կտար վերահսկել Թերեք գետից մինչեւ Կուր ընկած տարածքների ռազմաքաղաքական ու առեւտրա-տնտեսական իրավիճակը: Եթե Բաքուն դառնար ռուսական, ապա, բաց սահմաններով ու անհարմար աշխարհագրական դիրք ունեցող Շամախիի խանությունը հարկադրված կլիներ ճանաչել ռուսական գերիշխանությունը: Այդ դեպքում հնարավոր կլիներ վերահսկել եւ ի վերջո, որպես Կովկասյան գծի անվտանգության լավագույն երաշխիք հպատակեցնել Դաղստանի լեռնական ժողովուրդներին³⁷⁹: Փաստորեն, Վ. Ջուրովի քաղա-

³⁷⁷ Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, ч. III, с. 156-157.

³⁷⁸ СПФ АРАН, ф. 99, оп. 2, № 13, л. 40; П. Бутков, Сведения о кубинском и дербентском владениях. 1798 г., – ИГЭД, с. 211.

³⁷⁹ Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, ч. III, с. 158-159.

քական ծրագրով Հարավային Դադստանի եւ Շիրվանի տարածքների վրա Ռուսական կայսրության հովանու ներքո ստեղծվելու էր մահմեդական պետություն:

Նոյեմբերի 6-ին մահանում է Եկատերինա Բ կայսրուհին, եւ գահ բարձրացած Պավել Ա-ը (1796-1801 թթ.) Կասպիական արշավանքը դադարեցնելով՝ շրջադարձային փոփոխություններ է մտցնում կայսրության կովկասյան քաղաքականության ուղեգծում: Ճիշտ է, դա չէր նշանակում, թե ռուսական կառավարող շրջանակները հրաժարվել էին Այսրկովկասից: Ժ. Անանյանն իրավացիորեն նշում է, որ թեեւ ԺԸ դարի վերջին ողջ Հյուսիսային սեւեռվյան շրջանն արդեն գտնվում էր Ռուսաստանի տիրապետության տակ, իսկ երկու ռուս-թուրքական պատերազմներն ավարտվել էին նրա հաղթանակով, այնուամենայնիվ, կայսրությունն այդ պահին ի վիճակի չէր իրականացնել Այսրկովկասի միացումը³⁸⁰: Պավել Ա կայսրը եւ իր շրջապատը գտնում էին, որ ռուսական զորքին հաջողվել էր վերականգնել Ադա Մուհամմադ խանի ավերիչ արշավանքից հետո Այսրկովկասում խախտված ռազմավարական կայունությունը: Այլ քայլերի անհրաժեշտությունը հատկապես չեզոքացավ Իրանի տիրակալի սպանությունից հետո 1797 թվականին³⁸¹:

Այսպիսով, ԺԸ դարի 90-ական թվականներին Ռուսական կայսրությանը հաջողվել էր կյանքի կոչել Պյոտր Ա-ի արեւելյան քաղաքականության ուղենիշը՝ ռուսական վերահսկողություն հաստատել Դերբենդից մինչեւ Իրանի տերության խորքը ձգվող տարածքներում՝ որպես Հնդկաստան տանող հուսալի ճանապարհ: Հետեւաբար, այդ տարիներին, Կայսրությունը Արեւելյան Այսրկովկասի խանությունների հետ հարաբերությունները հստակ կառուցում էր իր ռազմաքաղաքական եւ առեւտրատնտեսական շահերի համատեքստում: Բաքու քաղաք-նավա-

³⁸⁰ Ժ. Անանյան, Հայ-ռուսական հարաբերությունները, նախադրյալները, փուլերը, պրոբլեմի նկատմամբ մոտեցումները, – ԼՀԳ, 1991, հ⁴ 1, էջ 16:

³⁸¹ Ադա Մուհամմադ շահը սպանվել է 1797 թ. մայիսի 15 (Ch. Picault, op. cit., vol. II, p. 406).

հանգիստը համարվում էր ռուս-իրանական առևտրային հարաբերությունների զարգացման «միակ հարմար եւ շահավետ» վայրը³⁸²: Նրա ռազմավարական նշանակությամբ էր բացատրվում այն, որ քաղաքում ամրություններ կառուցելու նպատակով նախատեսվում էր 1797 թ. հատկացնել 283 859 ռուբլի, իսկ Թարքիին՝ 90634 ռուբլի³⁸³: Բացի այդ՝ նախատեսվում էր Կուրի եւ Արաքսի գետկիցից քիչ հեռու՝ Ջավադի մոտակայքում, Կուրի ձախ ափին, քաղաք-ամրություն կառուցել՝ կոչելով Եկատերինասերդ³⁸⁴, որպես Ռուսական կայսրության ռազմական, քաղաքական, առևտրային ու տնտեսական շահերի կենտրոնական հենակետ:

Ինչպես նշեցինք, Աղա Մուհամմադ խանի հանդեպ Այսրկովկասի խաների վերաբերմունքը ոչ թե «ակնհայտորեն թշնամական էր»³⁸⁵, այլ խանությունների անվտանգության խնդրով էր թելադրված: Կուրից հյուսիս ընկած խանություններն ի դեմս Աղա Մուհամմադ խանի արշավանքի՝ քաղաքական կարգավիճակի կորստյան իրական վտանգի հետ բախվեցին: Մյուս կողմից, «1795 թվականի թիֆլիսյան աղետը»³⁸⁶ կասկածի տակ էր առել Ռուսաստանի հովանավորության օգտակարությունը: Արդյոք արժե՞ր հանուն ռուսական հովանավորության «ղաջարական վտանգին» ենթարկվել³⁸⁷:

³⁸² В. Зубов, Общее обозрение торговли с Азиею, – «Русский архив», кн. I, Москва, 1873, с. 886.

³⁸³ Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, ч. III, с. 194.

³⁸⁴ В. Зубов, Общее обозрение торговли с Азиею, с. 889-890.

³⁸⁵ В. Левиатов, указ. соч., с. 166.

³⁸⁶ Պատմագիտության մեջ այդպես են կոչում 1795 թ. Աղա Մուհամմադ խանի ներխուժումը Թիֆլիս (Օ. Айрапетов, М. Волхонский, В. Муханов, Дорога на Гюлистан... Из истории российской политики на Кавказе во второй половине XVIII – первой четверти XIX в., Москва, 2014, с. 13).

³⁸⁷ Հմմ. М. Atkin, The strange death of Ibrahim Khalil Khan of Qarabagh, – «Iranian Studies», Vol. XII, № ½ (Winter-Spring, 1979), p. 85.

ՎԵՐՋԱԲԱՆ

Արեւելյան Այսրկովկասը Մեւ եւ Կասպից ծովերի ավազանի քաղաքական կարեւորագույն հանգույց է՝ ռազմավարական ճանապարհի դեպի Մերձավոր Արեւելք, եւ մշտապէս գտնվել է տարածաշրջանային զարգացումների կենտրոնում՝ իր ուրույն դերն ունենալով ծավալվող քաղաքական գործընթացներում: Այս համատեքստում կարեւորվում է ԺԸ դարի երկրորդ կեսին Արեւելյան Այսրկովկասի խանութայինների քաղաքական դերակատարումը, որոնք հայտնվել էին Իրանի տերության, Օսմանյան եւ Ռուսական կայսրությունների ռազմաքաղաքական եւ առեւտրա-տնտեսական շահերի խաչասերման ոլորտում: Դա ենթադրում էր Արեւելյան Այսրկովկասի խանութայինների եւ վերոնշյալ շահագրգիռ տերությունների միջեւ որոշակիորեն յուրահատուկ քաղաքական հարաբերությունների ձեւավորում, որոնց հետագոտությունն օգնում է ընդգծել քաղաքական գործընթացներում ձեւավորվող եւ ռազմավարական կարեւորություն ու կառուցողական նշանակություն ունեցող բազմաթիվ հիմնահարցեր:

Արդյուրագիտական նյութի վերլուծության հենքի վրա բացահայտվում են Իրանական տերության, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների քաղաքականությունն Արեւելյան Այսրկովկասի նկատմամբ ԺԸ դարի երկրորդ կեսին: Այսպէս, Իրանը չէր համակերպվում «պատմականորեն իրեն պատկանող» երկրամասի կորստի եւ այնտեղ հակառակորդ տերությունների (Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների) ազդեցության ուժեղացման փաստի հետ: Թեւէ Քերիմ խան Ջենդը ձգտում էր վերահաստատել Իրանի տերության «պատմական իրավունքներն» Այսրկովկասի նկատմամբ, սակայն բավարար չափով ռազմաքաղաքական եւ դիվանագիտական ներուժ չունենալով՝ փաստացի ճանաչում էր նրա տեղական տիրակալների ինքնիշխան կարգավիճակը: Օսմանյան կայսրությունը եւս ի զորու չէր միայնակ լուծել այսրկովկասյան հիմնախնդիրը, եւ հաշվի առնելով ռուս-իրանական հնարավոր համա-

գործակցությունը (1720-1730-ական թթ. օրինակով)՝ դիմում էր այսրկովկասյան խաների ու տիրակալների սիրաշահման քաղաքականությանը: Ռուսաստանն այսրկովկասյան քաղաքականությունն իրականացնում էր երկարաժամկետ լուծումների՝ մեխանիզմների միջոցով, որոնք կարգավորում էին հարաբերությունները թե՛ Օսմանյան կայսրության եւ Իրանի տերության, թե՛ այսրկովկասյան տիրակալների հետ: Այսպես, 1750-1770-ական թթ. ռուսական դիվանագիտությունը, Այսրկովկասում եւ Դաղստանում իրանա-թուրքական քաղաքական գործոնը հաշվի առնելով՝ առժամանակ հրաժարվել էր տարածաշրջանում ռազմական միջամտությունից: Այդ տասնամյակների ռուսական քաղաքականությունը խանությունների նկատմամբ դիվանագիտական միջամտության բնույթ էր կրում, որը հետագա տարիներին վերածվում է հայեցակարգի՝ հակակշիռների ստեղծման մեխանիզմի:

1780-ական թվականներին Ռուսական կայսրությունը Մերձսեւեռոյան, մասնավորապես՝ Ղրիմի հիմնախնդիրը հաջողությամբ լուծելուց հետո Այսրկովկասի առավել հզոր տիրակալների՝ Վրաց Հերակլ Բ արքայի եւ Ղուբայի Ֆաթի Ալի խանի նկատմամբ հմտորեն կիրառում էր քաղաքական հավասարակշռության սկզբունքը՝ թույլ չտալով Այսրկովկասում միաբեւեռ ուժի ի հայտ գալը: Ի տարբերություն ԺՇ դարի առաջին կեսի, երբ ռուս-թուրք-իրանական հարաբերությունները կարգավորվել էին մի շարք միջպետական պայմանագրերով, 1750-1780-ական թթ. Իրանը, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունները որդեգրում են չեզոքության քաղաքականությունը՝ բացառելով ռազմական ներխուժումը տարածաշրջան:

Իրանում կենտրոնական իշխանության բացակայությունը համապատասխանում էր Ռուսաստանի ռազմաքաղաքական շահերին: Այդ իրավիճակը հնարավորություն կտար խաղաղ ճանապարհով իրականացնել Արեւելյան Այսրկովկասի միացումը կայսրությանը: Հետեւաբար, Ռուսաստանն օգտվելով Ձենդերի արքայատոհմի երերուն վիճակից՝ երկրորդ ռուս-թուրքական պատերազմից հետո՝ 1791-1793 թթ., ծրագրում էր իրականացնել Արեւելյան Այսրկովկասի միացումը կայսրությանը բացառապես խաղաղ ճա-

նապարհով՝ պահպանելով Օսմանյան կայսրության զսպման ռազմավարությունը: Իրանում Աղա Մուհամմադ խանի միանձնյա իշխանության հաստատումը 1794 թ. նպատակ էր հետապնդում վերականգնել Սեֆյանների օրոք գոյություն ունեցող պետական սահմանները:

Ժամանակաշրջանի վավերագրերի քննությունը փաստում է, որ Իրանի տիրակալի՝ 1795 թ. Արեւելյան Վրաստան արշավանքի նկատմամբ ռուսական իշխանությունները քաղաքական անտարբերություն են դրսևորում՝ որպես տարածաշրջան ռազմական ներխուժում իրականացնելու շարժառիթ եւ այսրկովկասյան ժողովուրդների աջակցությունն ու համակրանքը ստանալու պատրվակ:

Տարածաշրջան ռազմական ներխուժում իրականացնելու համար Ռուսական կայսրությունը որպես շարժառիթ օգտագործեց Աղա Մուհամմադ խանի արշավանքն Արեւելյան Վրաստան: Այդ արշավանքը եւ Թիֆլիսի ավերումը մեծ հարվածներ էին Վրաց պետականությանը: Ռուսական տիրապետության տարածումը Կովկասյան լեռնաշղթայից հարավ հիշյալ խանությունները դրել էր երկրնտրանքի առջեւ՝ անցնել ռուսների կողմը, անվերապահորեն ճանաչել Իրանի շահի գերագույն իշխանությունը, թե՛ պայքարել՝ պահպանելու համար իրենց ինքնիշխան վիճակը: Խանությունների խուսանավելու հայեցակարգը 1795 թվականից հետո կորցրել էր իր կենսունակությունը՝ Արեւելյան Այսրկովկասը վերադարձնելով Իրանի պետական համակարգ: Մյուս կողմից, «1795 թ. թիֆլիսյան աղետը» տարածաշրջանի համար կասկածի տակ էր դրել Ռուսական կայսրության հովանավորության օգտակարությունը: Խաները հայտնվել էին պատմական ու քաղաքական ընտրության առջեւ: Արդյոք արժե՞ր հանուն ռուսական հովանավորության «ղաջարական վտանգից» տուժել: Խանությունների համար հասունացել էր Ռուսական, Օսմանյան կայսրությունների եւ Իրանի տերության միջեւ քաղաքականապես կողմնորոշվելու պահը:

Արխիվային փաստաթղթերի եւ գրականության քննությունը թույլ է տալիս նորովի գնահատել Վ. Ջուբովի գլխավորությամբ 1796 թ. կազմակերպած Կասպիական արշավանքը: Անկաս-

կած, Ադա Մուհամմադ խանի կողմից խոշտանգված այսրկովկասյան ժողովուրդների ճակատագիրը չէ, որ նախ եւ առաջ մտահոգել է Ռուսական կայսրությանն այդ նախաձեռնության ընթացքում: Հանդես գալով տեղի ժողովուրդների «ազատարարի» ու «փրկարարի» դեմքով՝ Ռուսական կայսրությունը բուն նպատակ էր հետապնդում ընդարձակել պետության սահմանները եւ Հարավային Կովկասը ծառայեցնել սեփական՝ իրականում զուտ կայսերապետական շահերին: Այդ երկրամասը Ռուսաստանի համար ուներ ռազմաքաղաքական լուրջ նշանակություն, քանի որ կարող էր ծառայել իբրեւ պատնեշ՝ պետության հարավային սահմաններն անխոցելի դարձնելու համար, միաժամանակ հանդիսանալով հարմար եւ հուսալի հենակետ՝ դեպի Կասպից ծովի ավազանը, Իրանի Մերձկասպյան նահանգները եւ Ատրպատական շարժվելու համար, որպես վերջնական նպատակ աչքի առաջ ունենալով Պարսից ծոց եւ Հնդկական օվկիանոս դուրս գալու գայթակղիչ հեռանկարը: Ռուսական պետության հարավային սահմաններից վտանգի հեռացումը ռուսական կառավարող շրջանակները կապում էին Կասպից ծովի արեւմտյան ափին անվտանգության գոտու ստեղծման հետ՝ ի դեմս մահմեդական բուֆերային իշխանապետությունների՝ Ֆաթի Ալի խանի ընտանիքի անդամների գլխավորությամբ:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ Ռուսական պետության ԺԸ դարի երկրորդ կեսի այսրկովկասյան քաղաքականությունը պարարտ հող նախապատրաստեց ԺԹ դարի առաջին քառորդում այդ ռազմավարական երկրամասի գրավման խնդիրն իրագործելու համար: Այսպես, 1800 թ. կայսր Պավել Ա-ն որոշում է Արեւելյան Վրաստանը միացնել Ռուսական կայսրությանը: Այդ հավակնոտ ծրագիրը կյանքի է կոչում Ալեքսանդր Ա կայսրը (1801-1825 թթ.)՝ 1801 թ. սեպտեմբերի 12-ի իր նշանավոր հրովարտակով³⁸⁸: Հաշվի առնելով Այսրկովկասում ռուսական ազդեցության ուժեղացումը՝ Ղարաբաղի, Շաքիի, Շամախիի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի խանությունները 1805-1806 թթ. ճանաչում

³⁸⁸ Հրովարտակի ամբողջական բնագիրը տե՛ս ПСЗРИ, т. XVI, с. 782-784.

են Ռուսական կայսրության գերիշխանությունը: Իսկ 1813 թ. Հոկտեմբերի 12-ին կնքված Գյուլիստանի հաշտության պայմանագրով այդ խանությունները իրավականորեն մտնում են Ռուսական կայսրության կազմի մեջ³⁸⁹ եւ ԺԹ դարի առաջին կեսի ընթացքում ենթարկվում վարչական ու տնտեսական լրջագույն փոփոխությունների³⁹⁰:

³⁸⁹ Գյուլիստանի պայմանագրի ամբողջական բնագիրը տե՛ս ПСЗРИ, т. XXXII, с. 641-645.

³⁹⁰ Մանրամասն տե՛ս В. Тунян, Административно-экономическая политика самодержавия России в Закавказье. I пол. XIX в., Ер., 2007.

SUMMARY

The Eastern Transcaucasia is a critical political hub of the Black Sea and Caspian Sea basin, a strategic way to the Middle East that has always been in the center of regional developments, having a unique role in the political processes. In this context, in the second half of the 18th century the political role of the Khanates of the Eastern Transcaucasia is highlighted that appeared in the field of political-military and trade-economic interests of the Iranian Empire, the Ottoman and the Russian Empires. This implied the formation of the specific political relations between khanates of the Eastern Transcaucasia and the above-mentioned states whose research helps to emphasize many issues of strategic and constructive significance formed in the political processes.

Based on the analysis of the source materials, the policy of the Iranian Empire, Russian and Ottoman Empires toward the Eastern Transcaucasia in the second half of the 18th century is revealed. Thus, Iran could not put up with the loss of the region that the country historically owned, as well as with the fact of the reinforcement of the opposing powers' (Russian and Ottoman empires) impact in the region. Though Kerim Khan Zend sought to reaffirm the Iran's "historic rights" over Transcaucasia, he actually recognized the autonomous rule of the local rulers for having insufficient military-political and diplomatic potential. The Ottoman Empire was also unable to solve the Transcaucasian issue solely and taking into consideration the potential cooperation between Russia and Iran (through the example of 1720-1730) aimed to gain the affection of Transcaucasian khans and rulers. Russia implemented the Transcaucasian policy through the long-term solutions and mechanisms regulated relationships with the rulers of the Ottoman Empire, Iran and Transcaucasia. So, in the 1750-1770s, taking into account the Iranian-Turkish political factor in the Transcaucasia and Daghestan, the Russian diplomacy refused the military intervention in the region for a while. During those decades the Russian policy toward

the khanates was characterized by diplomatic interference which became a concept; a mechanism for making counterbalances in later years. In 1780s after solving the Transdnestrian, particularly the Crimean problem successfully, the Russian Empire skillfully applied to the principle of political equilibrium toward the most powerful rulers of the Transcaucasia: the Georgian Heraclius King and the Ghubaian Fath Ali Khan, thus protecting the Transcaucasia from the emergence of unipolar power.

